

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am


Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒՅԹ



ՀԱՅՈՒ ԱՐԵԱԿԻ
ԾԱՂԿՄԱՆ
ՈՒ ԲԱՐԳՎՎԱԽՄԱՆ

ՀՐԱՏՎԵԼՈՒՅՑ

**ՀԱՆՈՒՆ ԱՐԺԱԽԻ
ԾԱՂԿՄԱՆ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՀՄԱՆ**

Խմբագիր՝ ԵՂԻԾԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Հ. Ա.

Հանուն Արցախի ծաղկման ու բարգավաճման: Յրանտ Մելքումյան: Ստեփանակերտ, «Սոնա» գրահրատարակչություն, 2009 թ.:
116 էջ+ 5 ներդիր:



© «Սոնա» գրահրատարակչություն

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ

Բնիքնրցողին ներկայացվող այս գիրքը կարևոր իրադարձություն է Արցախի հասարակական-քաղաքական կյանքում: Այն իր մեջ ամփոփում է ԼՂ կոմկուսի սկզբնավորման, նրա անցած ուղու պատմությունը, այսօրվա դիրքորոշումները Արցախի առաջընթացի: Նրա տնտեսության գարգացման, բնակչության կենսածակարդակի բարձրացման, քաղաքական ուժերի միասնության և. որ ոչ քիչ կարևոր է, Լևոնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ և արդարացի լուծման, այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

ԼՂ կոմկուսի, երկրի բոլոր առաջադեմ ուժերի հաճար «Հանոն Արցախի ծաղկման ու բարգավաճման» գիրքն ունի տնտեսական և զործնական լորջ նշանակություն: Գրքի հեղինակի գևկուցումներում մանուկում լույս ընծայված հարցազրուցներում մարրս-լենինյան դիրքերից խոր վերլուծության է Անթարկված խորհրդապին իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի անցած ոտին, արծերավորվում է, այն պայքարը, որ Արցախը տարել է Բարվի խորական քաղաքականության դևան:

Դժվարին պայմաններում ծնունդ առավ ԼՂ կոմկուսը: Ժխտելով կոմունխստական կուսակցության դեկավարությամբ ԽՍՀՄ ծնոր բևեռած համաշխարհային-պատմական նվաճումները տնտեսության և մշակույթի բոլոր բնագավառներում, կառչելով միայն բոլոյ տրված միսաներից, ռեակցիոն ուժերը մեծածավալ արդարականք սկսեցին կոմկուսի դևան: Հաջվի շառնվեց մինչև իսկ այն, որ ԽՍՀՄ-ն աշխարհում առաջինը և երկար ժամանակ թշնամական շրջապատճան պայմաններում է կառուցել սոցիալիզմ և հասել համաշխարհային-պատմական նվաճումների: Գործը հասավ մինչև իսկ ԽՄԿԿ-ի գործունեության արգելմանը:

Հ.Ա. Մելքոնյանը նրանցից էր, որ այսպիսի պայմաններում չդափնանեց իր հավատարմությանը կրօնունիստական գաղափարներին. ոմանց պես ի տևս բոլորի շվառեց իր կուտոնսը, այլ արգահատելի արարքների շրիմեց՝ նոր հովերին համեմատ բարձր դիրքի արժանանալու համար: Նա մեկն էր այն եզակիներից, որ մեծ շանթեր գործադրելով՝ ձեռնամուխ եղավ ԼՂ կոմկուսի ստեղծմանը, իսկ երբ այն գոյացավ. վայելելով նրա անդամների վստահությունը, անցավ նրա զրոյին, չստանալով նյութական ոչ մի շահ. մինչ այսօր էլ զիսավորում է այն: Ունենալով երկար տարիների կուսակցական աշխատանքի հարուստ փորձ, քաղաքական անհրաժեշտ պատրաստականություն, նա ստեղծագործաբար է մոտենում իր աշխատանքին, կարողանում է առաջադրվող հարցերի նկատմամբ ծշակել ճիշտ որոշումներ: Այս անմենի, ինչպես նաև իր մարդկային բարձր հատկանիշների համար ԼՂ կոմկուսի ղեկավարը հարգանք ու պատիվ է վայելում և ԼՂՀ սահմաններից դուրս. իրավիրքում և մասնակցություն է ունենում ԽՍՀՄ նախկին տարածքում տեղի ունեցող կուսակցական, հասարակական-քաղաքական այլ միջոցառումներին:

ԼՂ կոմկուսը չունի այլ նպատակ, քան Արցախի ծաղկումն ու բարգավաճումը, նրա գոյացումը որպես միջազգային հանրության կողմից ճանաչված անկախ և ինքնիշխան պետորդուն, հանրապետության բնակչության բազմապատկումն ու կենսամակարդակի շնչտակի բարձրացումը:

«Հանուն Արցախի ծաղկման և բարգավաճման» գիրքն անկանակած կնպաստի ԼՂ կոմկուսի շարքերի խուացմանն ու ամրապնդմանը, առաջադրվող խնդիրների հաջող լուծմանը:

Եղիշե ՄԱՐԳԱՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՎԱԾ ԵՎ

ԼՂ ԿՈՄԿՈՒՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ առաջին քարտուղար

Յրանտ Մելքոնյանի գեկուցումը

ԼՂԿԿ երրորդ համագումարում

2001թ. մոյեմբերի 17-ին

Ընկեր պատգամավորներ, հարգելի հյուրեր:

Այսօր մենք հակաբել ենք միասնական համակուսակցական կամքով քննարկելու մեր երկրի առաջ ծառացած խնդիրները: Երկարատես լրությունից հետո, որը պայմանավորված էր մի շարք ներքաղաքական հանգամանքներով, մենք կուսակցական մեր արժանապատվության թելադրանքով ու պատգամավորական մանդատով եկել ենք ծանրակշիռ խոսք ասելու այն հարցերի վերաբերյալ, որոնք հուզում են Արցախի ժողովրդին եւ անքողջ հայությանը:

Ինչպես ծեզ հայտնի է, Խորհրդային Սիության վկրւգումից հետո նրա բաղկացուցիչ մասերը կազմող հանրապետությունները եւ այլ կազմավորումներ հայտնվեցին սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Արցախի պայմաններում դրան գումարվեցին նաև մեզ պարտադրված պատերազմը, նրա պատճառած ավերածությունները:

Բավական է ասել, որ 1987թ. համեմատ 2000թ. արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 12.8 անգամ: Եթե 1987 թվականին բողարկվել է 70.6 միլիարդ, ապա 2000 թվականին՝ ընդամենը 5.4 միլիարդ դրամի արտադրանք: Այլ նույն ժամանակաշրջանում գյուղատնտեսության համախառն արտադրանքը անկում է ապել 6.3 անգամ. Եթե 1987թ. կազմել է 85.3 միլիարդ, ապա 2000 թվականին միայն 13.4 միլիարդ դրամ: Շուրջ 3.8 անգամ կրծատվել է մսի, 1.7 անգամ՝ կաթի, 1.6 անգամ՝ ծիփի արտադրությունը:

Եթենային Պարաբաղի կոմկուսը դարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծման համար անընդունելի է համարում Արեւմուտքի կողմից

դավանվող տարածքային աճբողջականության եւ սահմանների անխախտելիության սկզբունքը:

Մենք գտնում ենք, որ միջազգային հանրությունը պետք է հարցի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշված ժողովոյի կամքը եւ ազատ ու անկախ ազգային պետականություն կերտելու արցախցու իրավունքը:

Կերակառուցման, հրապարակայնության, ժողովրդավարության մասին հշչակագրերը Լեռնային Ղարաբաղի ազատատենչ ժողովորդին հորդորեցին անկեղծորեն հավատալ ԽՄԿ դեկավարության կարգախոսներին եւ վճռականորեն հանդես գալ իր ազգային իրավունքների ճանաշման եւ հարգման պահանջով։ Սակայն կուսակցության եւ պետության անսկզբունքային, երկդիմի եւ անհետեւողական քաղաքականության պատճառով Արցախի ամբողջ ժողովորդի կողմից արտահայտված հավաքական կամքը դարձավ անմաքուր խարերի առարկա, վերջնականապես խճճվեց ղարաբաղյան հարցը, որի հետեւանքով տեղի ունեցան մարդկային եւ նյութական հսկայական միջոցների կորուստներ, որից հավասարապես տուժեցին երկու հարեւան ժողովուրդների աշխատավոր զանգվածները եւ, հակառակը, զանգվածային թալանի շնորհիկ հարստացան հակասոցիալիստական, հակաժողովրդական, քրեածին տարրերը։

ԼՂՅ կոմինիստական կուսակցությունը, բազմակուսակցականության պայմաններում հշչակելով իր ծրագիրը, չի թաքնում իր հպարտությունը իր հեղափոխական նախնիների, Արցախի կոմունիստ նվիրյալների, ԼՂ մարզային կազմակերպության 70-ամյա գործունեության լավագույն տարիների նկատմամբ։

Մենք հանդես ենք գալիս, որպես ժամանակների ազգանվեր ծնունդ, արցախյան արադարացի պայքարի հաղթանակի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացնան ու զարգացման ջատագով։

ԼՂՅ կոմկուսի առաջնահերթ խնդիրն է, դեկավարվելով սոցիալիստական արդար գաղափարներով, ապահովել ԼՂՅ ինքնիշխանությունն ու ազատ բարգավաճումը, ժողովորդի գոյատեւումը, սոցիալական արդարությունն ու հավասարությունը։ Հայաստանի հետ փոխադարձ սերտ կապերի, փոխշահավետ համագործակցության գարգացունը։

Լեռնային Ղարաբաղի կոմկուսը գործարար կապեր է հաստատելու սոցիալիզմի գաղափարներին նվիրված քաղաքական կազմակերպությունների, առաջին հերթին Հայաստանի ու Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունների հետ։ Արցախի կոմունիստները

արցախցուն վայել արժանապատվությանը մասնակցել են Արցախի անկախության պայքարին եւ ազատ ու անկախ պետականության կերտման գործընթացներին։ Մեր սուրբ խնդիրն է անհաշտ պայքար մղել անարդարության, կեղծիքի, շարքային մարդու նկատմամբ անհարգալից վերաբերնունքի, խոսի ու գործի խզման, փաստերի դեմ։

Այսօր մեր ժողովրդին առաջին հերթին անհանգստացնում է Ղարաբաղյան հիմնահարցի լուծման ծգգությունը։ Արցախի կոմունիստները լուսավաճառում են ԼՂՅ-ի պետականության ամրապնդմանն ու նրա անվտանգության երաշխիքների ապահովնան ուղղված՝ երկրի դեկավարության վարած քաղաքականությունը։ Միաժամանակ մենք գտնում ենք, որ հայ ժողովրդի երկու հատվածները ներկայացնող Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հաշվի առնելով՝ պատճեան դասերը եւ աշխարհատարածում նոր վտանգավոր գարգացունելու, պետք է անդամակցվեն Բելառուս-Ռուսաստան Միությանը՝ իրենց համար ապահովելով քաղաքական անկախության եւ տնտեսական գարգացման լիարժեք հնարավորյուններ։

Հնարավոր է, որ գտնվեն ընդդիմախոսներ, որոնք կիայտարեն, թե դա միայն կոմունիստների ցանկությունն է։ Մենք հայտարարում են ասում ենք՝ ոչ, կը կին անգամ՝ ոչ, եւ ահա թե ինչու։ Արցախի եւ աշխատարակ Հայաստանի արեւելյան սահմաններն արտաքին թշնամիներից պաշտպանելու գործում անգնահատելի դեր է խաղացել խաչենի գավառի Հասանջալալյանների իշխանական տոհմը։ Գանձասարի վանքում է շուրջ 300 տարի առաջ ծեւավորվել Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու գաղափարը։ Հայաստանը, այնպես էլ Ղարաբաղի առաջակալ մտավորականությունը մեր լեռնաշխարհի փրկությունը օտար քանակալների հաճախակի ասպատակություններից միշտ կապել է ոռս ժողովրդի հետ։ Եվ պատահական չէ, որ դեռ շատ հնուց զգալի թվով դարարացիներ բնակություն են հաստատել Ռուսաստանի ընդարձակ տարածության տարբեր մասերում, հատկապես Մոսկվայում, Յուսուսական Կովկասում, Պովոլյանում, հետագայում՝ նաև Պետերբուրգում եւ այլուր։ Ղարաբաղի մելիքները նամակագրական եւ դիվանագիտական հարաբերությունների մեջ են եղել Պետրոս 1-ի եւ Ռուսաստանի մյուս խոշոր գործիչների հետ։ Նրանք մեծ ջանքեր են գործադրել Ռուսաստանի հետ ոչ միայն բարեկամական կապերի մեջ մտնելու, այլ նաև միավորվելու։ Հայ ժողովրդի մեծ գավակ Խրաբել Օրին, Գանձասարի հայտնի ժողովից հետո, Ղարաբաղի մելիքների լիազորությամբ, մեկնում է

Գերմանիա, այնուհետեւ՝ Ռուսաստան՝ նրանց օգնությամբ Դայաստանի ազատագրության ծրագրերը իրականացնելու նպատակով։ Պարարադի գործիքները կապեր էին հաստատել նաև մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովի հետ։ 1813թ. ռուս-պարսկական պատերազմուն Ռուսաստանի հաղթանակի շնորհիվ իրականանում է դարարադցիների երազանքը։ Նույն թվականի հոկտեմբեր ամսին Գյուլխատանի հայտնի պայմանագրով Արցախ-Ղարաբաղը միավորվում է Ռուսաստանի հետ, պայմանագիր, որը մինչեւ այսօր ոչ մեկը չի բեկանել եւ հանդիսանում է հիմք Արցախը Ռուսաստանի հետ միավորելու համար։ Այդ ժամանակից մինչեւ այժմ արցախահայությունը եւ ամբողջ հայ ժողովուրդը եղել են Ռուսաստանի ամենամտերիմ բարեկամները։

Վերջին երկու ամսում հանրապետության շրջաններուն եւ Ստեփանակերտ քաղաքուն տեղի ունեցան տարածքային սկզբնական կուսակցական կազմակերպությունների ժողովներ, որոնք ըստ ամենայնի նպաստեցին կոնունիստների ակտիվության ու պատասխանատվության քարծրացմանը, կուսակցական կազմակերպությունների մարտունակության ուժեղացմանը։ Մեզ հաճար անչափ կարեւոր էր, որ կոնունիստների ժողովներուն, առանց իդեալականացման, առանց դատարկ քանակեցների, բացահայտվեցին ոչ քիչ թերություններ, նշվեցին կոնկրետ ուղիներ։ Ավելի՝ մեծ պահանջկուտության, քննադատության եւ ինքնաքննադատության, անկենծության մենոլորտուն անցան շրջանային եւ քաղաքային կուսակցական կոնֆերանսները։ Լեռնային Ղարաբաղի կոնկուսի Կենտրոնական կոնֆիտեփի, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի բյուրոյի անդամները անմիջականորեն մասնակցեցին ոչ միայն շրջանային կոնֆերանսներին, այլև տարածքային շատ կազմակերպությունների ժողովներին։ Ամեն ինչ արվեց, որպեսզի կոնունիստների նախահամագումարյան խորհրդակցություններն անցնեն գործնականության մրնութուում։

Քաղաքային եւ շրջանային կուսակցական կոնֆերանսներուն սրությամբ դրվեց գաղափարախոսական աշխատանքի, եթե կարելի է այսպես արտահայտվել, վերակենդանացման հարցը։ Այու տարիներ շարունակ նման աշխատանք չի տարվել բնակչության շրջանում։ Մինչեղան դրա կառնիքը խիստ գգացվում էր։ Կան քազմաթիվ հարցեր, որոնք սպասում են իրենց պատասխաններին։ Շարունակուն են խանգարել ծեւականությունը եւ խորականությունը։ Վնասը հաճախ գալիս է դատարկախոսություններից, մարդկանց հետ ճշմարտության լեզվով խոսել չցանկանալուց։ Եվ եր-

թեն այնպես է ստացվում, որ մարդը լսում է մի բան, իսկ կյանքում տեսնում է մի ուրիշ բան։ Այստեղ հարցը լուրջ է եւ ոչ միայն դաստիարակչական է, այլև քաղաքական։ Գաղափարական աշխատանքը հոր բոլոր ծեւրով պետք է առավելագույնս շաղկապված լինի մեր օրերի գլխավոր խնդրի՝ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հետ։ Դրան չի կարելի հասնել, եթե բազմակողմանիորեն հաշվի չառնվեն մեր ներքին կանքի պայմանները, երկրում տիրող իրադրության առանձնահատկությունները։

Մեր հիմնական խնդիրներն են՝ աշխատանքային գրադպածություն, սոցիալական արդարություն, բնակավայրերի վերականգնում եւ վերաբռնակեցում, նպաստների տրանագրում, պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժսպասարկում։

Դանրապետությունուն չափազանց սուր է աշխատանքի եւ գրադպածության հիմնահարցը։ Աշխատաշուկան շարունակում է համարվել ոչ միայն տնտեսության ապակենտրոնացման եւ մասնավորեցման գործնաքանչ արդյունքուն աշխատատեղերի կրծատման հետեւանքով աշխատանքը կորցրած անձանցով, այլև ուսումնական հաստատությունների շրջանավարտներով, որոշակի ընդմիջումից հետո աշխատանքը վերակսել ցանկացողներով եւ ծեռնարկությունների հարկադիր պարագուրդում գտնվողներով։

Շարունակում է բնակչության կենսամակարդակի անկումը, որի հետեւանքով մեծ թվով ընտանիքներ դարձել են կարիքավորներ։ Ծանր պայմաններուն են հայտնվել հատկապես տարեցները, հաշմանդամները, ծնողազուրկ երեխանները եւ այլ սոցիալական խմբերին պատկանող շատ ընտանիքներ։ Ցուցաբերվող սոցիալական աջակցությունները՝ կենսաթոշակ, նպաստներ, դրանական փոխհատուցումներ, պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժսպասարկում եւ բուժօգնություն, անվճար պյութեզավորում եւ այլն դեռևս չեն դարձել սոցիալական ապահովության կարեւոր խթաններ։

Դեռևս թերություններ կան հանրապետություն մուտք գործած մարդասիրական օգնությունների հաճանանական բաշխման գործում, որը տեղից է տալիս դժգոհությունների։ Աղաղակող է այն փաստը, որ այս տարվանից վերացվել է միայնակ ապրող, անկողնային վիճակում գտնվող տարեց կենսաթոշակառուների տնային սպասարկումը։

Մեր խնդիրն է՝ օգնել վարչատնտեսական մարմիններին՝ ԼՂՀ-ում վերաբռնակեցնան, վերաբռնակվողների սոցիալական պայմանների բա-

Արդյոք դա կարելի՞ է անել: Մենք՝ կոծունիստներս, գտնում ենք, որ կարելի է: Մենք ունենք այնպիսի փորձ, որի վրա կարելի է հենվել: Դրանք նախկին խորհրդային օրենքներն են, որոնք հիմնականուն պահպանում են իրենց կենսական ուժը: Մենք ի վիճակի ենք պարզելու, թե ում գաղափարախոսությունը, ում հայացքներն ու օրենքներն են բարոյական, որ էլենորիկան է ավելի առողջնային ու շահամետ:

Արցախահայությունը ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ, միջազգային նորմերի շրջանակներում ստեղծել է իր անկախ համրապետությունը, փայլուն է բացելով մեր ժողովրդի հերոսական պատմության մեջ: Դա իրականացավ մեր ժողովրդի, նրա պանծալի բանակի շնորհիվ, ամբողջ հայ ժողովրդի անմիջական մասնակցությամբ: Դայ ժողովուրդը, որպես պատմական անհրաժեշտություն, ի վերջո պետք է վերամիավորվի եւ՝ ստեղծի իր ամբողջական հայութիքը եւ պետականությունը: Մեր ժողովուրդը հաղթեց, որովհետեւ եռամ միամբաւամ:

Ընկերներ, հասարակության առջև կանգնած ինդիքների լուծման գործում դժվար է չգնահատել արհմիությունների դերը: Նրանց գործունեության սրբության սրբոց հոգատարությունն է աշխատավորների սոցիալական ու յոյս կարիքների, աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավման, հանգստի կազմակերպման նկատմամբ: Բայց այս խնդիրը անկարելի է հաջողությամբ լուծել առանց այդ կազմակերպության հրավական գործունեության: Ան թե ինչու աշխատավորական կողեկտիվների մասին օրենքի ընդունումը իրամայական պահանջ է:

ԵՂԿ-Ը կարեւոր խնդիր է համարում Եթոնային Պարաքաղի կոմունիտարական երիտասարդական միության ստեղծումն ու ամրապնդումը, երիտասարդության ռազմահայրենական ու ինտերնացիոնալ դաստիարակությունը:

Մենք պետք է հետեւենք, որ խստիկ պահպանվեն սոցիալական արդարության սկզբունքները, գործեն քաղաքացիների իրավունքների մասին օրենքները: Ժողովուրդը մեզնից պահանջութ է վարել հենց այդ-

պիսի գիծ: Մեզնից ոչ ոք իրավունք չունի կողմնակի դիտորդ լինել այն ամսնին, ինչ տեղի է ունենում մեր շուրջը: Աշխարհում այնքան անվատահություն ու կասկածանք գոյություն ունի, որ դրանց կուտակումները մաքրելու համար թիւ ջանքեր ու ժամանակ չի պահանջվի: Բայց առանց հաճապատասխան հոգեբանական վերակառուցման եւ, իհարկե, առանձնապես անցումային շրջանում, առանց քաղաքական կամքի դրսեւրման բարեշրջումը դժվար կլինի: Խևկ քաղաքականության մեջ մեր խնդիրն է կյանքով ինսատավորքած գաղափարախոսությունը դարձնել նոր պետականության ցեմենտող ուժը: Այդ դեպքում միայն մեր պետականությունը կդառնա ազգի հոգեւոր արժեքների պահպանաւում երաշխիքը:

Գնահատելի է մեր հայրենակիցների ավանդը միջազգային կոնունիստական շարժման եւ հատկապես Յոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի, երկրի տնտեսության զարգացման գործում։ Այսօր էլ պատմական նույն խնդիրն է ծառացած Արցախի կոմունիստների առջեւ, հպարտանանք հեղափոխության ավանդույթներին մեր հավատարմությամբ եւ նվիրումով այն գործին, որ ժողովուրդը ճակատագրի թելադրանքով վստահել է մեր սերնդին։

17 Օպյեմբերի, 2001թ.

ԵՐՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼ-ՏԵՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻճԱԿԸ ԵՎ ԼՂ ԿՈՄԿՈՒՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂԿԿ ԿԵՆՏԿՈՒՄԻ առաջին քարտուղար Դրամի Մելքոնյանի
գեկուցումը կենտկոմի 2-րդ պլենումում

2002 թ. ապրիլի 30-ին

Դադար ընկերներ.

Արդեն 5-րդ ամիսն է, ինչ կայացել է Կոմունիստական կուսակցության 3-րդ համագումարը: Ինչպես գիտեք, համագումարի որոշումները քննարկվել են կուսակցության քաղաքացին և շրջանային կոմիտեների լիազումար նիստերում, մշակվել են համապատասխան միջոցառումներ համագումարի որոշումները կյանքի կոչելու համար: Որոշակի աշխատանք է կատարվել նաև կուսակցության կենտրոնական կոմիտեի բյուրոյի կողմից՝ հանագումարի որոշումները կենսագործելու ուղղությամբ:

Բայց դա մեծ աշխատանքի լոկ սկիզբն է: Առջեւում հսկայական մասշտաբի խնդիրներ են, որոնք պետք է լուծվեն հետեւողականորեն եւ անշեղորեն: Դրանք վերաբերուն են կյանքի բոլոր ոլորտներին, պահանջում են կուսակցության քաղկոմ-շրջկոմների ամենաբարձր պատասխանատվությունը: Մենք այսուհետեւ էլ հաստատակամորեն ու հետեւողականորեն կվարենք կուսակցական կաղղերին ԼՂ Կոմունիստական կուսակցության 3-րդ համագումարի կողմից առաջարկված մուտքումների ու պահանջների ոգով վերակողմնորոշելու գիծը: ԼՂ Կոմկումը հույս ունի, որ հանրապետության քաղաքի եւ գյուղի բոլոր աշխատավորները հանդես կերեն ստեղծագործական ակտիվություն, ոչինչ չեն խնայի, որպեսզի մեր հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացումն ընթանա սոցիալիստական ուղիղություն, որպեսզի արցախահյության կյանքը դաշնա նյութապես ու հոգեպատճեն ավելի հարուստ, բովանդակալից:

Ինչպես վկայում են փաստերը, գնալով ավելի է բարդանում մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը: Դարձավոր է ծեռնարկել միջոցներ ննան վիճակն արմատապես փոխելու համար: Ուրեմն, իգուր չի սկսված մեր գործը: Մենք լավ ենք հասկանում, որ մեր հասրակության

մեջ զանգվածային դժգոհություններ սպասվում են, որն անցանկալի է, քանի որ սթափությունը, որպես կյանքի նորմա, հարկավոր է ներդնել տեւական համար աշխատանքում: Խսկ դրա համար մեր համբերությունը կրավականացնի, մանավանդ, որ ԼՂ կոմկուսը հենվում է մեր ժողովրդի օժանդակության, հասարակական կարծիքի հասունության եւ ուժի վրա: Այս ամենի մասին ասում են, որովհետեւ կարծում են, որ այսօր ոչ ոք հրավունք չունի կողմնակի դիտողի դիրքություն լինել այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում մեր շրջապատում:

Կոմկրետ օրինակով պիտի ցույց տանք, թե ում հայացըներն են ավելի բարոյական, ըստ որի հասարակության անդամները կանեն իրենց ընտրությունը, կորոշեն, թե իրենց որ հասարակական համակարգն է ավելի որու գալիս եւ որն է ընդունելի: Ոչ ոք չի կարող ժխտել, որ հորի ժամանակից շուտ սեփականաշնորհումը արցախցիներին հասցրեց սոցիալական ծանր վիճակի, որի հետեւանքը եղավ բնակչության մի մասի արտահոսքը Դարարադից: Դա ոչ ոք չի կարող ժխտել:

Ընկերներ, 1994 թվականի գինադադարից հետո սկսվեց պետական հիմնարկությունների եւ ծեռնարկությունների սեփականաշնորհումը, որն ավելի հուսախաք արեց ժողովրդին: Զարծանագրվեց տնտեսական ած, եւ այժմ կառավարությունը ջանում է ինչ-որ ծեռու թեթեւացնել ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը, բացեւ նոր աշխատատեղեր: Կառավարության վարած նման տնտեսական քաղաքականությամբ այսօր չի կարելի հասնել հաջողության: Այսպես, մեր այն հարցին, թե ինչ տնտեսական ֆորմացիա է կառուցվում ԼՂՀ-ում, որոշ իշխանակուրներ պատասխանում են՝ կապիտալիզմ: Բայց ի՞նչ վատություն ենք տեսել սեցիալիզմից, ինչ է եղել Դայաստանը եւ ինչպիսի տնտեսություն է ունեցել մինչեւ Յոկտեմբերյան հեղափոխությունը՝ 600 հազար բնակչություն, գրոյական արդյունաբերություն /Երեւանի կոնյակի գործարանը, Զաքուրի հեպոն, պղնձի հանքեր/: Այն ժամանակվա երեւան ուներ ընդամենը 20 հազար բնակչություն եւ փոշու մեջ կորած փողոցներ:

Պատմական կարծ ժամանակահատվածում Դայաստանը դարձավ արդյունաբերական երկիր՝ Նաիրիտի ննան ժամանակակից գործարան, Էլեկտրոնային արագացուցիչ եւ այլն: Էլ չենք խոսում մշակութային նվաճումների նախին, որոնք արձանագրվեցին երաժշտության, կերպարվեստի, գրականության եւ թատերական բնագավառներում: Յոգեւոր այդ նվաճումները ոչ միայն նախկին միութենական, այլև համաշխարհային համբաւ էին ծեռք բերել: Նույնը կարելի է ասել նաև գի-

տության մասին: Հայ մտավոր ներուժը ըստ արժանվույն էր գնահատվում շատ երկրների կողմից: Այս բոլորը սոցիալիզմի արդյունքն էր:

Այդ տարիներին Հայաստանում միջին աշխատավարձը Անդրկովկասի մյուս հանրապետությունների համեմատ 25 տոկոսով բարձր էր, իսկ Խորհրդային Սիությունում զիջում էր միայն Եստոնիային: Այս փաստը պայմանավորված էր էլեկտրոնային արդյունաբերության զարգացմամբ, բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ: Այս շարքը կարելի է շարունակել: Մասնավորապես արժե խոսել ԽՍՀՄ կրթական համակարգի մասին, որը պատմականորեն ապացուցել է իր կենսունակությունը: Պատմական կարծ ժամանակահատվածում ԽՍՀՄ-ում վերացվել է անգրագիտությունը, ստեղծվել է հզոր գիտաւունիկական բազա: Եվ այդ համակարգում իր ուրույն տեղն ուներ Հայաստանի կրթական համակարգը: Բարձրագույն կրթությունը դարձնելով վարձու, կրթական նոր համակարգեր մտցնելով, Արեւմուտքը ջանում է հայ ժողովրդի գիտական մակարդակը հասցնել հետամնաց պետությունների մակարդակին: Եվ ինչ որ չափով դա նրանց հաջորդվում է: Ինչ վերաբերում է պրոֆտեխնուսումնարաններին, ապա պետք է ասել, որ նրանք արդեն վերացել են մեր բառապաշտից: Հարց է ծագում՝ ովքե՞ր պետք է շահագործեն Հայաստանի բարձր տեխնոլոգիաներով հագեցված գործարանները:

Անգամ Դարաբաղը, Աղրբեջանի կազմում լինելով գաղութային վիճակում, խորհրդային իշխանության տարիներին ստեղծեց իր սեփական արդյունաբերությունը և զարգացրեց բազմաճյուղ գյուղատնտեսություն: Բերենք մի քանի օրինակ: ԼՂՀ-ում տարեկան արտադրվում էր 17 մլն. գթամետր տարրեր տեսակի մետաքսյա կտորեղեն, 28 մլն. էլեկտրացահ, մոտ 1000տ կարաօ, 20 մլն. գրուց տարրեր տեսակի կոշիկներ: 1984թ. խաղողի արտադրությունը կազմել է 170 հազ. տոննա: Արտադրվում էր 12 հազար տոննա միս, հացահատիկային կուլտուրաների տարեկան միջին համախառն բերքը կազմում է 100 հազ. տոննա: Իսկ ի՞նչ ունենք այսօր, համարյա ոչինչ: Այսքանից հետո մեր ընդդիմախոսները պնդում են, թե, միենանուն է, մենք պետք է կառուցենք կապիտալիզմ, որպեսզի ապրենք Անգլիայի, Խուալիայի, Ֆրանսիայի եւ մյուս Երկրների բնակչության նման: Նրանք նոռանում են, որ Արեւմուտքի զարգացած պետությունները ունեցել են կապիտալ, որը ունի որոշիչ նշանակություն կապիտալիզմ կառուցելու համար: Սարքսիզմի հիմնադիրները դա բացատրել են հետեւյալ կերպ, կապիտալը այն արժեքն է, որը բերում է հավելյալ արժեք: Անգլիան ուներ այնքան գաղութներ, որոնց բնակչությու-

նը թվով գերազանցում էր իր բնակչությանը: Նրանց շահագործումից ստացված գումարները կուտակվում էին Մետրոպոլիայում եւ գնալով այնքան էին շատանում, որ տվյալ անտուրյունը սոցիալ-տնտեսական ֆորմացիան փոխելու կարիք էր զգում, քանի որ ֆեռադական արտադրական հարաբերությունները խանգարում էին կապիտալիզմի զարգացմանը: Եվ, այսպես, Արեւմուտքի Երկրներում մեկը մյուսի հետեւից սկսեցին հաղթանակել բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները: Ունենալով կապիտալ՝ սկսեցին զարգանալ կապիտալիստական արտադրական հարաբերությունները:

Միջօդքային արժութային հիմնադրամի եւ համաշխարհային բանկի միջոցով ԱՄՆ շղթայել է բոլոր զարգացող պետություններին: Աշխարհում ստեղծված այժմյան համակարգը ծառայում է ոչ քե հանրության շահերին, այլ մի խումբ բազմամիլիոնատերերին: Վերը նշվածից Ելնելով, չի կարելի հավատալ աներիկյան ինձերիալիստներին: Այսպես՝ ստեղծելով «Ալքայդա» կազմակերպությունը՝ Բեն Լայենի գլխավորությամբ, Պակիստանում ծավալել էին ռազմական ճամբարներ ու թալիբներին նախապատրաստում էին Խորհրդային Միության դեմ պատերազմի: Սի քանի տարի անց, երբ թալիբները Գորբաչովի օգնությամբ հասան իրենց նպատակին, ԱՄՆ-ը Բեն Լայենին անվանեց միջազգային ահաբեկիչ, իսկ թալիբների պետությունը՝ ահաբեկչական պետություն: Այս ամենը անառարկելիորեն ապացուցում է, որ ԱՄՆ-ն չունի մշտական բարեկամներ, այլ ունի աշխարհի այս կամ այն կետերում հետաքրքրություններ: Նրա հետաքրքրությունները այս անգամ պայմանական պարզապես են Թուրքմենստանի գագի եւ Ղազախստանի նավթի արտահանման խնդիրներով: Բեն Լայենը, հասկանալով իր վախճանը, կազմակերպեց սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտը: Տավոք, տուժեցին մարդիկ, որոնք ոչ մի կապ չունեին այդ կեղծոտո խաղի հետ: Այլևս չկա խորհրդային պետության նման պետություն, որը կարողանար դիմագրավել ԱՄՆ-ի ստոր ծրագրերին:

Այժմ կրկին անդրադառնամք մեր հանրապետության հիմնախնդիրներին, մասնավորապես, նրանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումներին: Ելնելով իրենց հետկոմունիստական շրջանի գործունեությունից, ոչ մեկը իրավունք չունի խոսել ժողովրդիին սատար լինելու մասին, բացի կոմունիստներից: Կոմունիստների կողմից ստեղծված խորհրդային պետությունում կրթությունը եւ բժշկությունը անվճար էին: «Գործազրկություն» բառն ընդհանրապես համված էր գործածու-

թյունից եւ մարդիկ ապահովված էին տանելի աշխատավարձով: Այն ժամանակ, հարգելի ընկերներ, եթե նարդ թեկուց 3 օր չեր աշխատում, ապա միջանտում էր միլիհիայի տեղամասային տեսուչը, որովհետև մեզ մոտ միայն պորտաբույծները չէին աշխատում: Իսկ այսօր միայն Ստեփանակերտի այսպես կոչված «փակի քազարում» ամեն օր հարյուրավոր մարդիկ սպասում են, որ մեզն իրենց առաջարկի ցանկացած գործ, որով կարողանան օրվա հացը վաստակել: Եվ սա է նաեւ պատճառը, որ մարդիկ, աշխատանք գտնելու հույսը կորցրած, թողնում են հայրենի բնօրբանը եւ տեղափոխվում այլ երկներ:

Ընկերներ, ինչպես գիտեք, Խորհրդային իշխանության տարիներին արդյունաբերական ծեռնարկությունների եւ նոր կառուցվող օբյեկտների ֆինանսավորումը մեծ մասամբ կատարվում էր խնայողանարկղներում բնակչության կուտակած միջոցների հաշվին, եւ այդ խնայքանկերը ժողովրդին տրամադրում էին համապատասխան տոկոսներ: Այսօր, սակայն, ժողովրդական միջոցներով ստեղծված հիմնարկծեռնարկությունները, միավորումները գորեք անվարձահատուց տրամադրվում են մարդկանց, որոնք ոչ մի կապ չունեն դրանց ստեղծման եւ ընդհանրապես Ղարաբաղի հետ: Այսպիսին է, օրինակ, կապի անվարձահատուց տրամադրումը անհայտ կենսագրություն ունեցող մարդկանց: Չեզու չէ այն օրը, եթե նրանք նույափես կիսաղան «Արմենթել»-ի խաղերը, բովեավճար կմտցնեն: Նրանք արդեն սկսել են կանխազճար վերցնել սնամկացած արցախցիներից՝ չկայացած միջքաղաքային հեռախոսակապի համար: Տեսակազրում են բնակարաններում տեղադրված հեռախոսները: Յարցը նրա մեջ է, ընկերներ, որ այդ մարդիկ անվարձահատուց ստանալով արցոյնաբերական ծեռնարկություններ եւ այլ օբյեկտներ՝ նախապես պայմանավորվում են կառավարության հետ, խոստանում, թե իբր, ներկայացված բիզնես-պլանի համաձայն կրացնեն աշխատատեղեր եւ կիսատարեն ֆինանսական ներդրություններ: Բայց իրականում ոչինչ չի իրականացվում: Այդ ամենը կատարվում է այն պարզ պատճառով, որ կառավարության համապատասխան կառույցները, որոնք պարտավոր են հսկել սեփականաշնորհված օբյեկտները կամ իրավասու չեն, կամ էլ դիտավորյալ աչք են փակում:

Նման երեւույթները կամխելու համար մենք առաջարկում ենք անվարձահատուց տրամադրվող օբյեկտների սեփականության վկայականը տրամադրել 5 տարի հետո, թույլ նախմական պայմանավորվածությունները, այսինքն, ֆինանսական ներդրությունները եւ համապատասխան

աշխատատեղերը բացելուց հետո, բացառել նման օբյեկտները բանկերում գրավ դնելու:

Ընկերներ, արդեն անցել է 3 տարի, ինչ Ստեփանակերտի կաթուայտները վերանորոգվել են, այդ նպատակով ծախսվել են միջոցներ, բայց բնակչությունը մինչեւ հիմա կարոտով է հիշում կենտրոնացված ջեռուցումը: Մի արտասահմանյան ընկեր այդ կապակցությամբ կատակով ասել է՝ «Ինչքան գիտեմ՝ 1994 թվականից պատերազմ չկա, բայց դարաբաղցիները մինչեւ հիմա տներում թնդանոթներ են պահում»: Խորսրդը վերաբերում է վառարանների ժմխելույզներին, որոնք երեւում են բազմահարկ շենքերի պատուհաններից:

Անզիական դասական բաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը՝ Ազամ Սմիթը, ուր հարյուրավոր տարիներ առաջ նշել է, որ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ են 3 կարեւոր գործոններ՝ խաղաղություն, լավ օրենքներ եւ ցածր հարկեր: Այս բոլոր գործոնները այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը: Մենք ընդունում ենք օրենքներ, որոնք առաջին հայացքից թվում են, թե պետք է բարելավեն ժողովրդի սոցիալական վիճակը, գործարար մարդկանց համար դառնան խրաններ: Ավաղ, դա այդպես չէ: Ամեն մի օրենք կյանքի կոչելու համար անհրաժեշտ են համապատասխան գումարներ, որոնք պարտավոր են հաշվի առնել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտները: Բայց այդ գումարները բացակայում են: Որպեսզի օրենքը գործի, բոլորի համար պետք է ստեղծել հավասար պայմաններ, ինչը նույնպես չկա մեզ մոտ: Եվ այսօր էլ արդիական են Պկատոնի բառերը. «Ես տեսնում եմ մոտավոր կործանումն այն պետության, ուր օրենքը ուժ չունի, իսկ այնտեղ, ուր օրենքը է իշխանավոր տիրակալը. իսկ նրանք՝ օրենքի ստրուկը, ես տեսնում եմ պետության փրկությունը եւ այն բարիքները, որ կարող են աստվածները տալ»:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, առանց այն էլ սույն ֆինանսական պայմաններում, ամեն տարի հատկացվում է հարյուր հազարավոր դրամ գումար՝ նոր գյուղապետ կամ քաղաքապետ ընտրելու համար: Մենք առաջարկում ենք համապատասխան օրենքի մեջ կատարել փոփոխություն եւ գյուղապետերը նշանակել կամ համապատասխան շրջանի վարչակազմի հրամանով, կամ ընտրել տվյալ համայնքի ավագանու անդամներից: Յենց այդպիսի սկզբունքը է ընկած մեր մոտեցման հիմքում սրցիալ-կոմունական ներքին բաղաքականության մեջ:

Մենք կարեւոր ենք համարում ուշադրությունը կենտրոնացնել հենց չլուծված խնդիրների վրա, զգարում ենք օգնած լինել մեր հանրապետության տնտեսական, սոցիալական զարգացման արագացմանը, մարդկանց կյանքի բարելավմանը: ԼՂ կոմունիստական կուսակցությունը սոցիալական քաղաքականությունը դիտում է որպես մեր պետության տնտեսական զարգացման եւ հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման հզոր միջոց, որպես հասարակության քաղաքական կայունության, մարդու ծեւավորման եւ ապրելակերպի հաստատման կարեւոր գործոն:

Ընկերներ, կան քազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում են արհմիությունների, կոմերիտական կազմակերպությունների վերականգնմանը, Լեռնային Ղարաբաղի ընդերքի հետագոտմանը եւ հումքի շահագործմանը: Դրանց մենք կանդրադաշնանք հետագա մեր լիազումար նիստերում եւ կենտրոնական կոմիտեի բյուրոներում:

Կարծում ենք, այս կոնցեսցիան, որ մենք մշակե ենք կուսակցության Կենտկոմում ու 3-րդ համագումարի կողմից եւ որի մասին ես այսօր համառոտակի տեղեկացնում եմ Ձեզ, ճիշտ է: Եվ մենք պետք է ենենք դրանից: Այլ մոտեցում չկա: Իսկ քանի որ չկա, ապա նաև հանգստավետ կյանքին ապավինել էլ չի լինի: Եվ դրան պետք է պատրաստ լինի մեր կուսակցության ակտիվը: Իսկ կուսակցական ակտիվը մեր կուսակցության այն մասն է, որը միշտ, բոլոր դժվար պահերին ստամենել է ժողովրդի համախմբման, այն խնդիրների լուծման ուղիների որոնման դժվարին դերը, որ պատճական այս կամ այն բնագծում մեր առջեւ դնում է կյանքը:

Մենք ընդունում ենք ԼՂՀ նախագահի կողմից տարվող արտաքին քաղաքականությունը, առանձնապես Արցախի հիմնահարցի վերաբերյալ նրա վերջին հայտարարությունները եւ պատրաստ ենք կատարել անեն մի դժվար առաջելություն՝ ԼՂՀ միջազգային ճանաչմանը նպաստելու համար:

ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական զարգացման առաջընթացը միաժամանակ անհրաժեշտ է գույքակցել ճիշտ եւ քաղաքակիրթ կադրային քաղաքականության հետ:

Քուսով եմ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունները հաշվի կառնեն մեր բոլոր առաջարկությունները, եւ մենք ավելի կառուցողական մոտեցմանք կիամագործակցենք նրանց հետ:

5 մայիսի, 2002 թ.

ԼՂԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿՎԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՑՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՎ ԿՈՄԿՈՒՄԻ ՀԵՐԹԱԿՎԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ Առաջին քարտուղար Ռ. ՄԵԼքոնյանի գեկուցումը

Հարգարժան պատգամավորներ, հյուրեր, ընկերներ: Մեր նախորդ համագումարից անցել է 3 տարի, եւ մենք նորից հավաքվել ենք այս դահլիճում, որպեսզի միմյանց հետ կիսենք մեր նստահոգություններն ու խնդիրները, որպեսզի մեր անցած երեքամյա ուղու վերլուծություն կատարելով՝ որոշենք մեր անելիքները: Համոզված եմ, որ ինչպես ինձ, այնպես էլ բոլոր կոմունիստների համար, յուրօրինակ խոստովանության պահ է: Կարողացա՞նք, արդյոք, հավատարին ննալ կոմունիստական գաղափարախոսության սկզբումքներին: Դաշողվե՞ց իրագործել այն անենք, ինչ մենք խոստացել ենք երեք տարի առաջ՝ երկրի համար այս բախտորոշ ժամանակաշրջանում: Ժամանակը ցույց տվեց, որ շատ լուրջ եւ պատասխանատու գործ էին հանձն առել, որը պահանջում էր նվիրվածություն, հավատարմություն՝ սոցիալիզմի գաղափարներին եւ կյանքում դրանք իրագործելու հաստատականություն: Կարծում եմ, բոլոր նրանց համար, ովքեր գուշակություններ էին անում կոմունիստական գաղափարախոսության մոտալուս անկանոն մասին, այսօրվա մեր համագումարը սրակեցնող ազդեցություն կունենա, փարատելով քերականական հավատությունն ու կասկածամտությունը:

Կենսագործելով կուսակցության 3-րդ համագումարի որոշումները, կուսակցության կենտկոմը, քաղկոմ-շրջկոմները, տարածքային սկզբուական կուսակցական կազմակերպությունները հաշվետու ժամանակաշրջանում քավարար աշխատանք են կատարել ԼՂՀ պետականության անրապես մասնակիության, ժողովրդին հուզող սոցիալ-տնտեսական հարցերի քննարկման, հանրապետության քաղաքական կյանքում կուսակցության ունեցած դերակատարության բարձրացման, ներկուսակցական կազմակերպական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների բարելավման ուղղությամբ: Մենք անմասն չմնացինք ներ անկախությունը միջազգայնորեն ճանաչելու պահանջից: Սակայն հաշվետու

ժամանակաշրջանում դրանում ոչ մի առաջընթաց չարծանագրվեց: Այդ կապակցությանք այսօր համագումարի բարձր ամբիոնից հանրապետության բազմահազար կոմունիստների անունից ի լուր աշխարհին հայտարարում ենք:

Առաջին- Արդի միջազգային իրավունքում տարածքային ամբողջականության սկզբունքը չի բացառում տարածքային փոփոխությունները: Ավելին, առանձին դեպքերում այդ փոփոխություններն անհրաժեշտ են հաճարվում, մանավանդ, երբ դա բխում է ազգային ինքնորոշման սկզբունքից: Տարածքային ամբողջականության սկզբունքը բացառում է ինչպես այլ պետության կողմից տարածքի բռնազավորմը. այնպես էլ օտար պետության շրջանակներում որեւէ ազգի բռնությամբ պահելը: Այս տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ստեղծումը լիովին օրինաչափ է, քանզի դա ոչ թե տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում է, այլ ինքնորոշման սկզբունքի իրականացում:

Երկրորդ- Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը պետք է ճանաչել որպես բանակցող կողմ եւ պահանջել, որ Ղարաբաղը, որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան պետություն, իր քաղաքական կամքը բոլոր քննարկումներում արտահայտի Ազգբեջանի հետ հավասարի իրավունքը՝ առանց վտանգելու սեփական անկախությունը եւ ինքնիշխանությունը:

Երրորդ- Յանաձայն ազգերի ինքնորոշման իրավունքի, Լեռնային Ղարաբաղի Յանրապետության հայ բնակչությունն արդեմ արտահայտել է իր հավաքական կամքը՝ մայր հայրենիքի՝ Յայաստանի հետ վերամիավորման մասին որոշում կայացրել:

Չորրորդ- Մենք՝ Լեռնային Ղարաբաղի կոմունիստներս, համոգված հայտարարում ենք, որ հայ ժողովրդի երկու հատվածները ներկայացնող Յայաստանը եւ Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը, հաշվի առնելով պատմական դասերը եւ մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական նոր վտանգավոր գարգացումները, պետք է ամեն կերպ անրապնդեն բարեկամությունն ու համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ, իրենց համար ապահովելով քաղաքական անկախության եւ տնտեսական զարգացման լիարժեք հնարավորություններ:

Ընկերներ: Յաշվետու ժամանակաշրջանում մեր երիտասարդ հանրապետությունը, սատար ունենալով Մայր Յայսարանի եւ սփյուռքի համայն հայության նյութական ու բարոյական օժանդակությունը եւ օգտ-

վելով զինադադարի ընծեռած հնարավորություններից, որոշակի քայլեր է կատարել սոցիալ-տնտեսական, հանրակական-քաղաքական զարգացման ուղղությամբ: Աստիճանաբար ուղի է կանգնում տնտեսության, բացվում են նոր աշխատանքեր, կառուցվում են բնակարաններ ու ճանապարհներ, վերականգնվում են պատերազմի հետեւանքով ավերված գյուղերը: Սակայն, ընդհանուր առնամք, հանրապետությունում շարունակում են ճգնաժամային վիճակում մնալ ժողովրդական տնտեսության, համարյա բոլոր ճյուղերը՝ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, կապիտալ շինարարությունն ու տրանսպորտը, կոնումալկենցաղային ծառայությունները, կրթությունն ու նշակույթը, բնակչության բուժսպասարկումն ու սոցիալական ապահովությունը: Վերջին տարիներին հանրապետությունը իրականացված տնտեսական քաղաքականության դառն փորձը ամենայն պարզությամբ ակնհայտ դարձրին ժողովրդական ունեցվածքի ապօրինի սեփականաշնորհման-մասնավորեցման կործանարար հետեւանքները, բացահայտեց այդ քաղաքանության հակապետական, հակամոդովրդական եռթյունը, որի պատճառով այսօր Լեռնային Ղարաբաղում գանգվածային գործազրկություն է, քանդված, ավերված ու պարապուրդի են մատնված տասնյակ արդյունաբերական ու գյուղատնտեսական ծեռնարկությունները: Երբեմնի ծաղկուն երկրամասը հայտնվել է աղքատության եւ թշքառության ծիրաններում: Անմիիթար վիճակի է հասել հանրապետության գյուղատնտեսությունը: Բավական է նշել որ վերջին տասը տարվա ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հանրապետությունում կրծատվել է 70, մանր եղջերավորներինը եւ խոզերինը՝ մոտ 90 տոկոսով, կաթի եւ մսի արտադրությունը կրծատվել է մոտ 6.5 անգամ: Այսօր գյուղատնտեսական արտադրության 70 տոկոսից ավելին մասնավորեցված է: Արտի ցավ ես զգում՝ ականատես լինելով գյուղացու չարքաշ վիճակին: Յանրապետության վարելահողերի 50 տոկոսից ավելին վեր է ածվում խոպանի: Նման անմիիթար վիճակից դուրս գալու ելքը մենք տեսնում ենք խոշորացված տնտեսությունների վերատեղադրման մեջ: Այնպես որ խոշորացումը այլընտրանք չունի: Կառավարությունը պետք է շրջվի դեպի գյուղը, մտահոգ լինի գյուղացու հոգսերով, հակառակ դեպքում գյուղերը կդառնան աննարդարնակ ու աստիճանարար կմահանան:

Այսօր մեզ համար առաջնակերք նշանակություն են ստանում աշխատանդերի ստեղծումը, արդյունաբերության այն պոտենցիալի վե-

հականգնումը, որ ունենք խորհրդային տարիների ընթացքում: Չբացառելով բազմակացութածեւ տնտեսության նպատակահարմարությունը, ներկա ժամանակաշրջանում՝ մենք կոմունիստներս, գտնում ենք, որ հանրապետությունում պետք է հաստատել պետական սեփականության գերակայությունը, ապահովել տնտեսության մեջ պետական մենաշնորհի առավելությունները եւ տնտեսությունը վարել կյանքի կողմից ստուգված սկզբունքներով ու չափանիշներով: Երկրի տնտեսությունը, հատկապես գերաշահույթ ապահովող ճյուղերն անխուսափելիորեն պետք է ազգայնացվեն, օրենքով արգելվի դրանց սեփականաշնորհումը արտասահմանյան գործարաններին: Միայն այդ կերպ հանրապետությունը կարելի է փրկել զաղութքացման վտանգից:

Ընկերներ: Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բավարար զարգացում չի ունենում եւ շարունակում է մնալ ճգնաժամային: Իրականացվող անհեռատես բարիքի խումները վտանգում են բնակչության շահերը, նրանց հասցնում չքավորության եւ աղջատության, խարարվում են կյանքի համար պնիրաժեշտ բոլոր ոլորտները՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, կրթությունը, առօղջապահությունը, սոցիալական ապահովությունը: Հազարավոր մարդիկ գործազրկությունը, աշխատավորներից նվելի են աշխատանքի եւ հանգստի, անվճար բուժսպասարկնան եւ կրթության արտոնությունները, գնալով վատանում են շատ մարդկանց կոմունալ-կենցաղային պայմանները, մինհումի են հասցված մոր ու նանկան, ապահով ծերության իրավունքները, բնակչության գրեթե 85 տոկոսի կենսանակարուակը խիստ ցածր է: Հանրապետությունում ստեղծված նաև ծանր սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով պակասում է բնակչության թվաքանակը, շարունակում է նրա արտագաղթը այլ երկրներ: Տարեցտարի պակասում է դպրոցական երեխաների թիվը, կրծատվում են դասարանները, սովորողների հիմնական մասը պետական ծրագրերով նախատեսված նվազագույն գիտելիքներ չի ստանում: Խարեւությունն ու կերպիքը, անազնվությունը, բանաբանությունը ու ծեծը, բռնաբարությունը ու սպանությունը նույտը են գործել դպրոց, մի խոսքով խարարված է ազգային դպրոցի ապագան: Անբավարար է կազմակերպվում գյուղական բնակչության մշակութային սպասարկումը, մշակութային շատ օջախներ ամիսներով փակ են, բազմաթիվ գյուղերում, ընդհանրապես, նման օջախներ չկան, բայց առանձին մարդիկ կամոնավոր աշխատավարձ են ստանում պետական բյուջեից: Բնակչության անվճարունակության պատճառով մարդիկ չեն

կարողանում ժամանակին բուժվել, անհրաժեշտ դեղամիջոցներ գնել, որի պատճառով աճել է մահացությունը՝ համեստացած միջին տարիքի մարդկանց մոտ: Հասարակությունը խիստ բեւռացված է, ծեւավորվել են հարուստների եւ աղքատների խավեր: Ահա հակիրծ այսպիսին է սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրությունը մեր հանրապետությունում:

Ընկերներ: Քանի դեռ մենք չենք ստեղծել սեփական արտադրություն, անհրաժեշտ ուշադրություն չենք դարձնում մեր գյուղատնտեսության, ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերելքին, կրթության, մշակույթի, առողջապահության, բնակչության սոցիալական ապահովության հարցերին, ավելորդ է խոսելը ժողովրդավարության եւ ժողովրդի համենականացության մասին: Ներկա պայմաններում կառավարությունը վարում է բոլորովին որիշ քաղաքականություն, այն այլ արդյունքի չի կարող հանգեցնել, քան ժողովրդի օտարումը պետությունից: Ժողովուրդը գնալով ավելի խորը է ընթառում այդ իրողությունը եւ կարող է դիմել վճռական քայլերի, ինչպես դա կատարեց 1988-ին, ինչպես նաեւ 2004 թվականի օգոստոսին Ստեփանակերտում կայացած տեղական ինքնակառավարման նարծինների ընտրության ժամանակ: Շե որ անհնար է երկար ժամանակ դիմակայել հարազատ օջախից ու երկրից փախչելու, մուրացկանությամբ մի կերպ գյուտեւելու, մի բան գտնելու հույսով աղբարկությունը քրքրելու, կենսաթոշակով սնվելու, պահանջող դեղամիջոց ձեռք բերելու կամ բուհից դուրս մնալու վտանգի առջեւ հայտնական երեխայի ուսման վարձը վճարել չկարողանալու երեւլությունին: Մեզ չեն կարող լրջորեն չնշտահոգել հացի, ջրի, մսի, առաջին անհրաժշտության այլ ապրանքների, գազի, էլեկտրական էներգիայի գների բանկացումները: Մենք գտնում ենք, որ հանրապետության կառավարությունը անհրաժեշտ միջոցների չի դիմում կուտակված խնդիրները լուծելու, բնակչության շահերն ու օրինական իրավունքները պաշտպանելու ուղղությամբ: Ասած հաստատելու համար բերեմ մի շատ նկատելի օրինակ: Հանրապետության շրջկենտրոններում եւ հատկապես Ստեփանակերտ քաղաքում ամենատարածված գրադաւումը առեւտուրն է, ավելի ծիշտ՝ չարչությունը: Եվ դա իշխանությունները համարում են շուկայական հարաբերություն, թաքցնելով նրա իսկական դեմքը՝ լկուի շահանդությունը, խարեւությունը: Իշխանությունը իրեն հեռու է պահում այդ բնագավառը տնօրիններուց: Ընդհանուր գներ չեն սահմանվում, բնագավառը թողնված է տարերքին ու բախտի քայլաճությին:

Մասնավոր անձինք ինչպես ցանկանում, այնպես էլ առեւտուր են անում, գներ սահմանում իրենց ուզածով, նկատի ունենալով ֆիայն անձնական շահը: Գլուխ է բարձրացրել Վերավաճառքը, առեւտուրի այդ ամենաստոր ձեւը:

Ընկերներ: Դամրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակը որոշ չափով բարվոք կլիներ, եթե իշխանությունները որդեգրեին ճիշտ կադրային քաղաքականություն, քանի որ կադրերն են որոշում ամեն ինչ: Մինչդեռ իշխանական շատ կառույցներ, հատկապես կառավարությունում, տարբեր նախարարություններում, իրավապահ նախմիններում պետական պաշտոններ գրադիցնող ճարդկանց թվում դեռևս շատ են կիսատ-պրատ կրթություն ստացած պատահական, անգործունյա չինովնիկները: Նրանք անպատասխանատու վերաբերմունք են ցուցաբերում հանձնարարված գործի նկատմամբ, վատ են զբաղվում բնակչությանը հուզող հարցերի լուծմամբ: Շատերը առավել նույնագուած են իրենց կարինետները նոր կահույքով ու հեռախոսներով կահավորելու, արտասահմանյան երկրներ շրջագայելու, պետական բյուջեի հաշվին նոր մակնիշի շրեղ ավտոմեքենաներ ծերելու հարցերով: Նման վայ չինովնիկները, փաստորեն, սեփականաշնորհել են իրենց ենթակա պետական կառույցները, թույլ են տալիս անբարու կամայականություններ, մինչեւ իսկ հաճախ քաղաքական նկատառուններով ճարդկանց ազատում են աշխատանքից:

Այսպես են վարվել, օրինակ, կրթության եւ սոցիալական ապահովության համակարգերի դեկավարները, որոնք վերջերս աշխատանքից ազատեցին այդ համակարգի գիտակ, փորձառու, մեծ հեղինակություն վայելող ուր կոմունիստների, որոնցից երեքը կուսակցության Կենտկոմի անդամներ են: Պատահական չե, որ ինեն այս բնագավառներում է տիրում հանցավոր ամենաթողությունն ու բացարձակ անպատասխանատվությունը:

Ընկերներ: Գաղափարական աշխատանքը եղել եւ մնում է մեր կուտակցության հզոր գենքը քաղաքական հակառակորդների դեմ մղվող պայքարում: Այժմ, երբ կապիտալը իր ժամանակավոր հաղթանակն է տունում կոմունիստական ուժերի նկատմամբ, մեր գաղափարական աշխատանքը պետք է որդեգրի նոր մարտավարություն: Մեր նպատակն է սոցիալիստական արժեքների վերահաստատումը: Դրան հասնելու համար պետք է հաճախմբվենք ու ակտիվացնենք մեր գործունեությունը, մեր կողմը գրավենք ժողովրդական լայն մասսաներին: Կուսակցական

լրատեսները, տարածքային կազմակերպությունները, հատկապես կոմիտասի օրգան «Արցախի կոմունիստ» պաշտոնաթերթն այդ ուղղությանը հական աշխատանքներ է կատարել: Բարելավվել է թերթի գաղափարական բովանդակությունը, նրա եցերում, հաճախակի են տպագրվում սուր, բնիւղատական հորվածներ, լուսարանվում ներկրասակցական լյամբի տպարքը հարցեր: Սակայն էլ ավելի պետք է բարելավվել թերթի աշխատանքները, ստեղծել կայուն աշխատակազմ ու թթակիցների ակտիվ, միրթին հաղորդել քաղաքական մամուլին բնորոշ մարտունակություն, շարունակելով խորհրդային մամուլի լավագույն ավանդությունը: Մենք հաստուկ ուշադրություն պետք է դարձնենք թերթի բաժանորդագրության համար նրա արդյունքների գնահատենք կուսակցության քաղկությունների առաջին քարտուղարների գործունեությունը: Պետք է համենք կրանք կոմկուսի միակ լրատվամիջոցին:

Ընկերներ: Դաշվետու ժամանակաշրջանում կոմկուսի կենտրոնի Խախածեռությանը ու միջնորդությանը ԼՂԴ Ազգային ժողովն ընդունեց արհմիությունների մասին օրենք, որի հիման վրա հանրապետությունում վերստեղծվեցին մի շարք ճյուղային կազմակերպություններ: Արհմիությունները կոչված են հանդես գալու որպես աշխատավորների հրավունենքների ու սոցիալ-տնտեսական շահերի պաշտպաններ: Կուսակցական կոմիտեները պետք է սերտ կապեր հաստատեն արհմիութենական լազմակերպությունների հետ, քաղաքական գործընթացներում հանդես գան միասին, որովհետեւ թե կուսակցության, եւ թե արհմիությունների հրագրային հիմնական դրույթները շաղկապված են աշխատավորության շահերին, նրա նպատակներին ու ծգություններին: Բոլորին հայտնի են, որ այսօր շուկայական հարաբերությունների ջողի տակ աշխատավորական լայն օանգվածներին օտարում են համաժողովրդական սեփականությունից, ունահարում մարդկանց ամենատարրական իրավունքները: Հանրապետությունում ստեղծվել է մի իրավիճակ, երբ, օգտվելով վերահսկողության բացակայությունից, գործատուները խախտում են աշխատանքային պայմանագրերը, աշխատաժամանակի ժամկետները, աշխատողների հաճախտի, արձակուրդի տրման, աշխատանքի ընլունակ ու ազատման կարգը, ժամանակին չեն վճարում բանվոր ծառայողների աշխատավարձը: Այս ամենի գլխավոր պատճառներից մեզն է այն է, որ իրեն ժողովրդավարական հռչակած հանրապետությունը մինչեւ հիմա չունի աշխատանքային օրենսդրությունը: Վերստեղծված

արիմիութենական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է ապահովել աղողաբուժյան և օրենքի առաջ բոլորի իրավահակասարությունը, հասնել գործազուրկների թվի կրճատմանը, սոցիալական անարդարության վերացմանը, աշխատանքային օրենսդրության պահանջների ծիշտ կիրառմանը գործառուների կողմից:

Ընկերներ: Մխալված չեմ լինի, եթե նշեմ, որ այսօրվա մեր երիտասարդությունը, պատանիներն ու աղջիկները հասարակության ամենատուժած խավն են: Նրանցից նենգորեն խլված են ամենակարեւոր՝ անվճար կրթության, բուժման, աշխատանքի և հանգստի իրավունքները: Նրանք գրկված են մարդկային կեցության ամենակարեւոր արժեքից՝ պապագայի հեռանկարից: Մակայն հանրահայտ է, որ Արցախ աշխարհը պատկանում է բոլորին և առաջին հերթին երիտասարդությանը: Նա պետք է կերտի, հստակեցնի հանրապետության պապագայն. նրա քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական գարգացման հեռանկարները են պայքարի այդ ամենի կրականացման համար: Այս խնդիրների գիտակցումով հաշվետու ժամանակաշրջանում կուսակցության Կենտկոմի, քաղկոմ-շրջկոմների ջանադիր աշխատանքի շնորհիվ վերականգնվեց Ստ. Շահումյանի անվան կոմունիստական երիտասարդական միությունը: Մակայն, ինքնաքննադատաբար պետք է ասել, որ դեռևս թիւ գործ է արվում երիտասարդության հետ տարվող գաղափարաքարական աշխատանքը ուժեղացնելու ուղղությամբ: Կոմերիտմիության կենտկոմը հայտնվել է մի տեսակ սպասողական իրավիճակի մեջ, հանդես չի գալիս երիտասարդությանը համախմբելու, նրան կոմերիտական աշխատանքներում ընթարկելու նախաձեռնությամբ: Դեռևս թիւ է տարածքային կոմերիտական կազմակերպությունների թիվը, դանդաղ է ընթանում կոմերիտմիության շարքերի հանալունը. թույլ է կապը դպրոցների, մյուս ուսումնական հաստատությունների, գյուղերի, բնակելի թաղածքաների հետ: Կոմերիտմիությունը գործում է տարածառված, ինչպես հարկն է, չի նախաձեռնում նաև այսական գործողությունները: Թույլ են կապերը կոմերիտական կառույցների միջեւ, անբավարար են կոմերիտմիության կուսակցական դեկավարությունն ու օգնությունը:

Անհրաժեշտ է արմատագեն բարելավել երիտասարդության շրջանում տարվող գաղափարաքարական բացատրական; դաստիարակչական աշխատանքները: Այդ ուղղությամբ կոմերիտմիության հետ մեկտեղ մեծ անելիքներ ունեն կուսակցական կոմիտեները, տարածքային կուսակցական կազմակերպությունները: Եթե մեզ հաջողվի երտասար-

դության, մեր պատամիների ու աղջիկների գիտակցությանը հասցնել կոմունիստական գաղափարախոսության նպատակները, խորհրդային եւ ներկա ժամանակների համադրմանը բացատրել սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ, ապա, անկասկած, երիտասարդության ճնշող մեծամասնությունը նախապատվությունը կտա կոմունիստների որդեգրած գաղափարներին եւ կիստացնի կոմերիտմիության շահերը:

Ընկերներ: Հանրապետությունում ընթացող քաղաքական գորգացումները պահանջում են ուժերի համախմբում, բոլոր քաղաքական գործնաբացներին ակտիվ մասնակցություն, որի համար անհրաժեշտ է մշակել եւ իրագործել հատուկ մարտավարություն: Բոլորիս հայտնի է, որ իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է եւ նրան վերապահված ընտրության իրավունքը: Դրա համար էլ մենք պետք է արդյունավետ նախապարտաստվենք բոլոր մակարդակների ընտրություններին, ստեղծենք գաղափարաքարական նախադրյալներ ու ֆինանսական միջոցներ: Այդ պահանջը կարեւորվում է առաջիկայում Ազգային ժողովի պատգամավորների ընտրությամբ: 2004թ. հունիսին կուսակցության կենտկոմի պեսնումը ըննարկեց ԼՂԴ տեղական ինքնակառավարման նարմինների 2004թ. օգոստոսին կայանալիք ընտրությունների եւ ԼՂ կոմկուսի հերթական խնդիրների մասին հարցը: Պէտքունի ընդունած որոշման մեջ հստակորեն նշվել էր, որ ԼՂԴ տեղական ինքնակառավարման նարմինների ընտրությունները կարեւոր նշանակություն ունեն երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Այս լայն հնարավորություններ է ընծեռում, որ ԼՂ կոմկուսը իշխանության տեղական մարմիններուն ունենա ժողովրդի շահերը ակտիվութեան պաշտպանելուն պատրաստ ակտիվ կոմունիստներ: Պէտքունը ԼՂ կոմկուսին, քաղկոմ-շրջկոմներին պարտավորեցրել է տեղական ինքնակառավարման նարմինների ընտրությունները օգտագործել, որպես ԼՂ կոմկուսի դիրքորոշման պրոպագանիզման եւ լայն տարածման, հասարակական կյանքում նրա հեղինակության լարձագան միջոց: Այս ուղղությամբ բավարար աշխատանք է կատարել կուսակցության Ասկերանի շրջկոմը: Ընտրությունների արդյունքուն շրջանի Այգեստան, Խանաքաղ, Նորագյուղ, Կարսիր գյուղ, Ներքին Սպիտեր, Սարդարաշեն, Սարուշեն, Մարտունու շրջանի Խերիսան, Սամկալյան գյուղերի համայնքապետեր ընտրվեցին կոմունիստներ Այշոշա Շակորյանը, Գուրգեն Սանգասարյանը, Արճավիր Գալստյանը, Ալեքսանդր Ալեքսիսյանը, Շահեն Մարգարյանը, Սուլեն Բաբայանը, Այոշա Շարությունյանը, Բարաք Քոչարյանը, Արմեն Զարությունյանը:

Հուշի շրջանի քարին տակ գյուղի համայնքապետ վերընտրվեց կոմունիստ, կուսաշրջկոմի նախկին առաջին քարտուղար Գրիշա Շովիան-նիսյանը: Նանրապետության գյուղական, քաղաքային համայնքներում ընտրված ավագանու անդամների մոտ 25 տոկոսը կուսակցության անդամներ են, Ստեփանակերտ քաղաքի նորընտիր ավագանու անդամներ են, կոմունիստներ Շամիկ Ասրյանն ու Գյուղչորա Շայրապետյանը: Շամայնը դեկավարներ եւ ավագանու անդամներ ընտրված կոմունիստներից շատերը մեր համագումարի պատգամավորներն են եւ այսօր մասնակցում են նրա աշխատանքներին: Եկեք միասին ժերմորեն շնորհավորենք նրանց, ցանկանաք առողջություն եւ արդյունավետ աշխատանք ի բարորություն մեր ժողովրդի, ի շահ մեր կուսակցության:

Ընկերներ: Կատարված դրական աշխատանքի հետ մեկտեղ պետք է ընդգծել, որ ոչ բոլոր կուսակցական կոմիտեներն են ակտիվ մասնակցություն ունեցել տեղական ինքնակառավարման ծարքինների ընտրություններին նախապատրաստվելու, անցկացնելու մասին կոմիտաֆ պյենումի որոշումների կենսագործմանը: Ժամանակին չի մշակվել առաջարված կոմունիստ թեկնածուների օգտին քարոզարշավ կազմակերպելու ծրագիր, չեն ստեղծվել նրանց պաշտպանության նախընտրական շտաբներ: Արդյունքը եղավ այն, որ Մարտակերտի եւ Շադրութի շրջաններում ոչ մի կոմունիստ համայնքապետ չընտրվեց: Նանրապետության 5 շրջաններում եւ Ստեփանակերտ քաղաքում (չենք հաշվում Քաշարադի եւ Շահումյանի շրջանները, որտեղ կուսակցական կազմակերպություններ դեռ չկան) ընտրված 154 հանձնելու դեկավարներից կոմունիստներ են 10 հոգի, եւ դա այն դեպքում, երբ ԺԱՄ-ի անդամներ են՝ 43, չՅՇ անդամներ՝ 16 հոգի: Արջեւում Ազգային ժողովի ընտրություններն են: Անհրաժեշտ է լուրջ հետեւություններ ամեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թույլ տրված միալներից եւ այժմկանց նախապատրաստվել դրանց: Մենք աշխատանքները պետք է կազմակերպենք այնպես, որ հանրապետության բոլոր ընտրատարածքներում առաջարվեն պատգամավորության կոմունիստ թեկնածուներ եւ արժանանան ժողովրդի վատահության քվեներին, որպեսզի կարողանանք ԼՂՀ Ազգային ժողովում ծեւավորել կոմկուսի առանձին եւ ինքնուրույն խմբակցություն:

Ընկերներ: Այսօր, քան երբեւ գգացվում է ներկուսակցական կյանքը ճիշտ կազմակերպելու, խնդիրները պարզեցնելու, առօրյա անելիքները հստակեցնելու կարեւորությունը, կուսակցության մարտունակու-

թյունը յուրաքանչյուր կուսակցական կազմակերպության ջանքերով բարձրացնելու, բոլոր օդակներում կուսակցական կարգապահություն ամրապնդելու հրատապությունը, այդ ամենի խորապես գիտակցումը յուրաքանչյուր կոմունիստի կողմից: Այնպես որ, կուսակցության գործունեության հաջողությունը հիմնականում պյայմանավորված է նրա որակական կազմի բարելավմանը, նրա շարքերում միասնության ամրապնդմանը, կոմունիստների ակտիվությանը եւ կուսակցական բոլոր կառուցների մարտունակությամբ: Ենտեւապես ներկայացվող ապահովների կատարման վճռական պյայման են հանդիսանում կուսակցական, գաղափարական, քաղաքական եւ կազմակերպաչական աշխատանքների ուժնեցումը, ներկա իրավիճակում մոտեցման նոր ձեւերի ու մեթոդների կիրառումը, կուսակցական կյանքի նորմերի ու սկզբունքների պահպանմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում կենտկոմի աշխատանքները տարվել են համաձայն նրա բյուրոյում հաստատված աշխատանքային լույսի: Անց են կացվել 9 պլենում, Կենտկոմի բյուրոյի 32 նիստ՝ տարբեր օրակարգերով, ներկուսակցական կարգապահության, կանոնադրական պահանջների կատարման, կազմակերպական, գաղափարական հարցերի լուծման, երիտասարդության շրջանում տարկող աշխատանքների, բնտրությունների եւ «Արցախի կոմունիստ» պաշտոնաթերթի բաժանորդագրության հարցերի շուրջ: Կենտկոմի պյենումներում քննարկվել են «ՂԴ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի եւ կոմկուսի խնդիրները», «2002թ. օգոստոսին կայացած ԼՂՀ նախագահական ընտրությունների եւ ԼՂ կոմկուսի դիրքորոշումները», «ՂԴկ կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Պաղափարաքաղաքական աշխատանքների դրվագը եւ այլ խնդիրների մասին» հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային կազմակերպությունների թիվը աճել է 48-ով, կոմունիստների թիվը՝ նոտ 500-ով: Պետք է շիտակորեն ասել, որ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմը, առանձին շրջկոմներ եւ տարածքային կազմակերպություններ մեծապես կարող ունենալ իրենց գործունեության կատարելագործման եւ ամրապնդման: Կուսակցական ընտրությունների պետք է ակտիվ գործի, մինչդու Ստեփառկոմի որոշ անդամներ, նույնիսկ քարտուղարներ հաճախ խուսափում են աշխատանքից, նույնիսկ չեն ներկայանում պյենումների լույսութերին: Զգացվում են կուսակցության շարքերի անհ դժվարությունները, այդ գործում կամ լուրջ թերություններ ու բացթողումներ: Կուսակ-

ցույքան շարքերի աճի եւ ամրության կարեւորագույն ցուցանիշները մտապես հանարվել են կարգապահությունը, կոնունիստի անհատական պատասխանատվությունը: Տարածքային կուսակցական կազմակերպությունների Ստեփանակերտի քաղկոմի եւ շրջկոմների հաշվետուրներական ժողովները եւ կրնֆերանսներն այս ուղղությամբ լուրջ մտահոգվելու աթիթ տվեցին: Գլուխ են բարձրացրել անտարերությունը, անպատասխանատվությունը, սկսած ինձնից, որպես Կենտկոմի առաջին քարտուղարի, վերջացրած շարքային կոմունիստներով: Հստակ տեսանելի են մեր բացողությունները եւ, կարծում եմ, իմ կուսակից ընկերները կունենան այնքան համարձակություն, որ ելույթների ժամանակ չեն մոռնանա նաև ինքնարմնադատությունը: Առանձին կուսկազմակերպություններում չկան աշխատանքային պլաներ, կուսակցական ժողովներու անց են կացվում դեպքից-դեպք կամ ընդհանրապես չեն կայացվում: Կոնունիստների ակտիվությունը դեռևս ցածր է, չեն տրվում կուսակցական հանձնարարություններ: Կենտկոմի բյուրոյի նիստերում պարբերաբար լսվել են եւ մշակվել են նիշոցառումներ, բայց արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն:

Մենք ՎՃՇԱԿԱՆԱՓԵՍ պետք է փոխենք կուսակցական աշխատանքի օնն ու մեթոդները, այն դարձնենք ծկուն եւ հանարձակ, ժողովրդի շահերին համահունչ:

ԸՆԿԵՐՆԵՐ: Վերջացմելով, թույլ տվեք հավաստիացնել, որ կուսակցության նորընտիր Կենտկոմը հաշվի կառնի համագումարում հնչած քննադատական դիտողությունները եւ կանի ամեն ինչ, որպեսզի Լեռնային Պարաբաղի կոմունիստական կուսակցությունն առաջիկայում դառնա մեր ժողովրդի պահանգարդային, նրա կենսական շահերը պաշտպանող մարտական կուսակցություն:

19-20 հոկտեմբեր, 2004թ.

ԼՂ ԿՈՍԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՏԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Հարգելի ընկերներ,

Լեռնային Պարաբաղի կոմունիստական կուսակցությունն իր գործունեության մեջ կարեւոր տեղ է հատկացնում կուսակցական կարգավորական ամրապնդմանը, հասարակական կյանքում կուսակցական դեկավար կադրերի, բոլոր կոմունիստների ավանդարդային դերի ապահովմանը, հանձնարարված գործի նկատմամբ յուրաքանչյուրի, անկախ կուսակցության մեջ գրադեցրած նրա դերից, պատասխանատվության ու արձրացմանը: Անհրաժեշտ եմ համարում մեկ անգամ եւս ընդգծել ներկայական կարգապահության եւ կուսակցության միասնության անրապնդման կանոնադրական սկզբունքները, որոնք հանդիսանում են կուսակցության կենտկոմի, բաղկոմ-շրջկոմների, տարածքային կուսկազմակերպությունների, բոլոր կոմունիստների կողմից ԼՂ ԿԿ ծրագրի և կանոնադրության, կուսակցության 4-րդ համագումարի որոշումների և կուսակցական բարյոյականության պահանջների կատարման ՎՃՇԱԿԱՆ պայմանը:

Բոլորիդ հայտնի է, որ կուսակցության կազմակերպական գործունեության հաջողությունները իմմականում պայմանավորված են նրա ուրակական կազմի բարելավմամբ, կոմունիստների ակտիվությամբ, տարածքային սկզբանական կուսկազմակերպությունների մարտունակուրույնմբ: Յետեւապես՝ ԼՂ ԿԿ 4-րդ համագումարին եւ դրան հաջորդած Կենտկոմի պլենումների ու բյուրումների որոշումների կենսագործման վճռուկան պայման է հանդիսանում կուսակցական, գաղափարական, բարյուրական եւ կազմակերպչական գործունեության ուժեղացումը, նույնացման նոր ծեռնությունից ու մեթոդների կիրառումը կուսակցական կյանքի նորմերի ու սկզբունքների պահպանմամբ: Մեր աշխատանքում տեղ դրած բերություններն ու անհաջողությունները չեն վերացվի, եթե մենք ունիք հետ միասին չկարողանանք անրապնդել կուսակցական շարքերի լուսափարական ու կազմակերպական միասնությունը, բարձրացնել լրագմակերպվածությունն ու կարգապահությունը կուսակցության բոլոր ուղակներում:

Կուսակցական կոմիտեները մեծապես կարիք ունեն կատարելաւորման եւ ուժեղացման: Մինչդեռ, բաղկոմ-շրջկոմների որոշ անդամ-

Ներ հաճախ խուսափում են աշխատանքից, լավագույն դեպքում, սահմանափակվում են կուսակցական ֆորումներին ֆիզիկական նաև մակցությամբ: Զգացվում են կուսակցության շարքերի աճի դժվարությունները: Մենք ապրում ենք ժամը սերմնափոխություն: Կուսակցության անդամների հիմնական մասը կազմում են խորիղապին դաստիարակություն ստացած մարդիկ: Բայց նրանք ծերանում են հեռանում են մեր շարքերից կամ էլ, բնական է, ապկասում է նրանց ակտիվությունը, իսկ երիտասարդությունը կամ միջին սերմնի մարդիկ գարնանալիորեն դանդաղ են ակտիվանում, նրանց օգտակարության գործակիցը դեռևս ցածր է:

Կուսակցության ուժի եւ ամրության կարեւորագույն ցուցանիշը միշտ էլ եղել են կարգապահությունը, կոմունիստի անհատական պատասխանատվությունը կանոնադրական պահանջների խստագույն կատարման նկատմամբ:

ԼՂՅ Ազգային ժողովի ընթացիկ տարվա հունիսին կայացած ընտրություններն այս տեսանկյունից լուրջ նոտահօգության արիթ են տալիս: Գլուխ են բարձրացրել անտարբերությունն ու անպատասխանատվությունը, առանձին կոմունիստների եւ որոշ կուսակցական դեկավար աշխատողների կողմից ներկուսակցական կարգապահության խախտման դեպքերը, կուսակցական մկրունքների զանցառումը: Մենք իրավունք չունենք անտեսելու, որ մեր շարքերում հայտնվել են այնպիսի մարդիկ, որոնք ձգտում են մասնատել, խարիսկել կուսակցության միասնությունը, փորձում են շարժային կոմունիստներին, կուսակցական կոմիտեների անդամներին վարակել անհարկի եւ անտեղի բամբասանքներով, պրովկացիոն բնույթի հարցադրումներով:

Խիստ քննադատության պետք է արժանացնել գումափոխվածներին եւ պառակտիչներին, որոնք գործում են հատուկ պարտադրված ծրագրերով:

Մենք համաձայն ենք եւ ընդունում ենք քննադատության ազատությունը, բայց գործողությունների մեջ արժեքավորում ենք միասնությունը: Սա պետք է լինի յուրաքանչյուր կոմունիստի եւ կուսակցական պատասխանատու աշխատողի գործունեության բարոյական նորմը: Մեր կոմունիստ ընկերների մեծամասնությունը սա հասկանում է: Բայց կան մարդիկ, դժբախտաբար, նաև կուսակցական դեկավար աշխատողներ, որոնք գործում են ուղիղ հակառակ կերպ: Լեռնային Պարաբաղի կոմունիստական կուսակցությունը ոչ մեկիս սեփականությունը չէ եւ կուսակցության հաջողություններն ու բացքողումները որեւէ անծով պայմանա-

վորված չեն: Ինչ խոսք, ցանկացած կառույցի դեկավար իր հետքն է թողեալ աշխատած ժամանակահատվածում՝ ուստի գերխնդիր ենք համարում կուսակցական կադրերի ճիշտ ընտրությունն ու տեղաբաշխությը, սկսած ամենաստորին օղակից՝ տարածքային սկզբնական կուսակզմական պարտադրության բարտուղարից մինչեւ քաղկոմ-շրջկումների, կենտկումի բարտուղարներն ու պատասխանատու աշխատողները:

Լեռնային Պարաբաղի կուսակցական կազմակերպությունում քիչ չէ այնպիսի կուսակցական կադրերի թիվը, որոնք բարձր են պահում կոմունիստի անունը եւ նվիրված ժառայում են հարազատ կուսակցությանը: Սակայն այդ նույնը չենք կարող ասել կուսակցության Մտեփանակերտի քաղկոմի եւ նրա ենթակայության տակ գտնվող տարածքային կուսկազմակերպությունների մասին, որոնք այդպես էլ չկարողացան դուրս գալ խորը ճգնաժամից եւ, փաստորեն, հայտնվել են ինքալուծարնակազմի առջեւ: Քաղաքի համարյա բոլոր տարածքային կուսկազմակերպություններում /իրանք 8-ն են/ կոմունիստների ակտիվությունը խիստ ցածր է, չեն տրվում կուսակցական հանճնարարություններ, կուսակցական ժողովներ ընդհանրապես չեն անցկացվում, չեն կազմվում աշխատանքային պլաններ եւ, բնականաբար, չկա նաև կուսակցական աշխատանք: Կուսակցական կազմակերպություններում նման բարձիքողի վիճակի ամբողջ պատասխանատվությունը ընկնուն է քաղկոմի քարտուղարներ Վակերի խաչատրյանի եւ Կալերի Զավադյանի վրա, որոնք փաստորեն ինքնահեռացել են կուսկազմակերպություններին օգնելուց եւ դեկավարելուց: Նման անմիտիք վիճակի համար պատասխանատվության իր բաժինն ունի նաև կուսակցության կենտկումը եւ, առաջին հերթին նրա կազմակերպական բաժնի Վարչի Արտաշեն Գասպարյանը, որի աշխատանքային ոճը, ավելի ճիշտ, նրա անգործության պատճառով փաստորեն սառեցվել են կազմակերպչական աշխատանքները քաղաքի կուսկազմակերպություններուն:

ԼՂ Կոմկուսի Կենտկումի հերթական պլենումը տեղի է ունենում կուսակցության համար ծանր պայմաններում, երբ ԼՂՅ Ազգային ժողովի ընտրություններում չկարողացանք հարթահարել անցողիկ 10 տոկոսի արգելքը: Կուսակցության Կենտկումի բյուրոն իր 2005թ. հուլիսին կայացած ընդլայնված միասություն, որին մասնակցում էին քաղկոմ-շրջկումների բոլոր առաջին քարտուղարները, բազմակողմանիորեն քննարկել է ԼՂՅ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների մասին հարցը եւ տվել համարժեք գնահատական: Բյուրոյի որոշումը հրապարակվել է

«Արցախի կոմունիստ» պաշտոնաքերթում, եւ, համոզված եմ, որ բոլորդ ծանոթ եք նրա բովանդակությամբ: Փոխանակ անհրաժեշտ հետեւություն արվելի այդ որոշումից, միջոցներ ծեռարկվելին բարելավելու կուսակցական կոմիտեներում տարկող կազմակերպական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների ճակարտակը, կուսակցության Ստեփանակերտի քաղկոնի քարտուղարներ՝ Վալերի Խաչատրյանը եւ Վալերի Ջավադյանը, կուսակցության Կենտկոմի բաժնի վարիչ Արտաշես Գասպարյանը եւ ուրիշներ, քաղկոնի՝ օգոստոսի 12-ին կայացած պլենումից հետո, անսկզբունք պայքար եմ ժավալել կուսակցության Կենտկոմի եւ նրա առաջին քարտուղար Շրանտ Մելքոնյանի դեմ, միտունավոր նրան վերագրելով ընտրություններում կուսակցության կրած անհաջողության անբողջ պատասխանատվությունը: Խախտելով կուսակցության կանոնադրության պահանջները, ներկուսակցական կյանքի նորմերը, նրանք կուսակցության ներսում ստեղծել են խճավորում, Կենտկոմի որոշ անդամների հրահրել ստորագրահավաքի՝ առանց Կենտկոմի բյուրոյի եւ նրա քարտուղարների իմացության, հրավիրել Կենտկոմի արտահերթ պլենում՝ նպատակ ունենալով պաշտոնանկ ամել Կենտկոմի առաջին քարտուղարին: Այդ այն ժամանակ, երբ քարոզարշավի օրերին Վալերի Խաչատրյանն զբաղված էր հակակուսակցական քարոզարշավով, չնայած մինչ այդ խոստացել էր « Ես կուսակցության համար աշխատելու եմ, որ Մելքոնյանը պատգանավոր ընտրվի»: Քեզուտատեսությամբ հանդես գալու առաջարկությունից հրաժարվել է, պատճառաբանելով, որ դաշնակցականները կծիծառեն իր վրա: Ել չեմ ասում, որ տարածքային կազմակերպությունների քարտուղարների մեծամասնությունը, նրա իսկ հրահանգով դարձել էին ուրիշ կուսակցությունների թեկնածուների վստահված անձններ: Նրանք կոմունիստների եւ ընդդիմադիր կուսակցությունների անդամների շրջանում տարածում էին լուրեր, որ Մելքոնյանը իշխանամեն է եւ որոշումներն ընդունում է ԼՂՀ նախագահի եւ ուրիշ պաշտոնատար անձանց թելադրանքով: Ինչ խոսք, որ դավադիր այդ խմբի գործունեությունը մեծապես վնասել է կուսակցության հեղինակությանը:

Սույն թվականի նոյեմբերի 3-ին կուսակցության Կենտկոմի բյուրոն, ներկուսակցական կարգապահությունը կոպտորեն խախտելու, կուսակցության ներսում խճավորումներ ստեղծելու, ներսից կուսակցությունը կազմակերպուրեն պառակտելու անսկզբունք գործունեության, աշխատանքում թույլ տված լուրջ թերությունների համար Վալերի

Խաչատրյանին ազատեց կուսակցության Ստեփանակերտի քաղկոնի առաջին քարտուղարի, Արտաշես Գասպարյանին՝ ԼՂ Կոմկուսի Կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչի պարտականություններից, հայտարարելով նրանց խիստ նկատողություն՝ այն մտցնելով հաշվառման քարտը: Կենտկոմի բյուրոյի որոշումից հետո Վալերի Խաչատրյանը եւ Արտաշես Գասպարյանը, գերազանցելով կոմունիստի իրենց լիազորությունները, ճիշտ հետեւություն չեն արել եւ քանել են Կենտկոմի քարտուղարներին եւ բյուրոյի մյուս անդամներին ահաբեկելու, շանտաժի ենթարկելու եւ վարկարեկելու արատավոր ուղին, որի համար էլ նրանց կուսակցության շարքերում մնալով գտնում ենք անպատակահարմար:

Կուսակցության Կենտկոմի բյուրոն հանձնարարեց քաղկոն-շրջկոմներին կուսակցության բոլոր օդակներում անրապնդել կուսակցական կարգապահությունը, մարտունակությունն ու կազմակերպվածությունը, այն դիտելով կոմունիստների, քաղկոն-շրջկոմների անդամների եւ տարածքային կուսակցական կազմակերպությունների կողմից ԼՂ ԿԿ ծրագրի եւ կանոնադրության, կուսակցության Կենտկոմի որոշումների եւ քաղաքականության պահանջների կատարման վճռական պայման: Բյուրոն միաժամանակ պարտավորեցրեց Կենտկոմի քաժիններին՝ ամենօրյա աշխատանքով նպաստել քաղկոն-շրջկոմների, տարածքային կուսակցակերպությունների կազմակերպչական ու գաղափարական միասնության անրապնդմանը: Անհրաժեշտ հետեւություններ անելով Կենտկոմի սույն թվականի հուլիսի 3-ի բյուրոյի որոշումից՝ քաղկոն-շրջկոմները պարտավոր են լուրջ ուշադրություն դարձնել տարածքային կուսակցական կազմակերպությունների անրապնդմանը, նրանց շարքերի անաղարտության պահպանմանը: Պեսոք է կանխել ոչ միայն պատահական, անկայուն տարրերի մուտքը կուսակցության շարքերը, այլև վճռականորեն գնալ իմբռանաքրման՝ ծերբազատվելով կարիքերիստներից եւ բոլոր նրանցից, ովքեր կուսակցության հետ չեն քայլում, խախտում են կուսակցական կարգապահությունը, փորձում պառակտել նրա միասնությունը, արատավորում են կոմունիստի քարձը կոչումը: Կուսակցության քաղաքային կոմիտեների, տարածքային կուսակցական կերպությունների առաջնորդեր խմնիրն է կուսակցության շարքերի անաղարտության, կայունության եւ մաքրության պահպանումը, այդ աշխատանքում նշանաբար ունենալով Վ. Ի. Լենինի խոսքերը. «Ավելի լավ է տաս աշխատող իրենց կուսակցության անդամ չանվանեն, քան թե մի շաղակրատ իրավունք եւ հնարավորություն ունենա կուսակցության անդամ լինելու»:

Կուսակցության Կենտկոմի բյուրոն, Կենտկոմի բաժինները պարտավոր են սկզբունքորեն գնահատելու սկզբնական կուսակազմակերպություններում, քաղկոմ-շրջկոմներում տիրող իրավիճակը, պահանջելու, որ կուսակցական ժողովները, բյուրոների եւ պահումների նիստերը իրավիրվեն ըստ կանոնադրական պահանջների: Առաջնահերթ նշանակություն պետք է դարձվի երիտասարդության հետ տարվող աշխատանքներին, այն կուսակցության հուսալի ռեգերվուն ու օգնականը դարձնելուն: Երիտասարդության, մեր պատամիների ու աղջկների գիտակցությանը պետք է հասցնել կոմունիստական գաղափարախոսության նպատակները, խորհրդային եւ ներկա ժամանակների համադրմաք բացահայտելով սոցիալիզմի առավելությունները: Դա, անկանած, կնպաստի, որ երիտասարդության հիմնական մասը նախապատվությունը տա կոմունիստների որդեգրած գաղափարներին: Լուրջ խնդիր պետք է հանարել նաև կուսակցական կոմիտեների անդամների դերի ու հեղինակության, հանճնարարված գործի նկատմաք նրանց պատասխանատվության բարձրացնանք, ժողովրդական մասսաների հետ կուսակցության կապի հետագա աշխուժացմանն ու կատարելագործմանը: Կուսակցության քաղաքային եւ շրջանային կոմիտեները կուսակցնակերպությունների գործունեությունը պետք է կազմակերպեն այնպես, որ կապես ընդլայնվեն մեր հանակիրների շարքերը, որ հասարակության մեջ վերականգնվի եւ խոր արմատներ ծագի հավատը կուսակցության, նրա որդեգրած քաղաքականության նկատմանը:

Միայն ներկուսակցական անսասան կարգապահությանք, կուսակցական շարքերի գաղափարական ու կազմակերպական միասնությանք, մարտունակ ու բարոյական հեղինակությանք օժտված կուսակցական կազմակերպություններով, կոմունիստական հստակ վճռականությամբ եւ ժողովրդի շահերին անսահման նվիրվածությամբ կարող ենք հասնել կուսակցության ծրագրային պահանջների հաջող կատարմանը՝ ապացուցելով մեր նվիրվածությունը կոմունիստական գաղափարներին:

Թույլ տվեք ճեր բոլորի անունից վստահություն հայտնել, որ Լեռնային Պարաբաղի կոմունիստական կուսակցությունը կանի ամեն ինչ իր կոչումն արդարացնելու, աշխատավորության շահերն վճռականորեն պաշտպանելու համար:

18 նոյեմբեր, 2005թ.

ԼՂԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՊԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՐԱՅԱՆ ՄԵԼՔՈՎԱՅԱՆԻ ԳԵԼՎՈՒՇՈՒՄԸ

Դարձելի պատգամավորներ:

2008 թվականի փետրվարի 20-ին Արցախի ազատատենչ ժողովուրդը, Դայաստանի եւ Ափյուռքի հայության հետ մեկտեղ, մեծ շուրջով նշեց Պարաբայան շարժման 20-ամյա հոբելյանը: Արցախյան ազգային-ազատագրական շարժման 20-ամյակին նվիրված միջոցառություն մեկ անգամ եւս վկայեցին ներ ժողովրդի աննկուն ոգու ու կամքի, հայրենիքին անսահմանորեն նվիրվածության, մեր ազատ ու անկախ ապրելու ծգտությների մասին: Դպարտությանք ենք նշում, որ մեր համաժողովրդական շարժման ակունքներուն էն Արցախի կոմունիստները, կուսակցական ու խորհրդային մարմինների դեկավարները, հայրենիքի նվիրյալ զավակները, մի ամբողջ ժողովուրդ, որը բոցավառված էր համազգային միաբանության սրբազն կրակով:

Պատշության համար 20 տարին մի ակնթարթ է: Սակայն մեր հերոսական ժողովուրդը պատմության այդ ակնթարթն ինաստավորեց քաղաքանակներով, մեզ պարտադրված պատերազմում հաջորդեց ծնկի բերել յոթ միլիոնանոց Ազրբեջանին: Պատերազմի հաղթական ավարտից հետո արցախցին ծեռնամուխ եղավ իր խաղաղ շինարարական աշխատանքին: Նրա ստեղծարար ծեզրով կիյունիկի պես մոլիկրներից հաշնեցին մեր ոչբակոծված քաղաքներն ու գյուղերը, հաղթահարվեց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, վերածնվեց հոգեւորածակության կյանքը: Միանգանցայն տեղին է ասկած հանրապետության նախագահի հոբելյանական ողջույնի խոսքում, թե «անելիքները շատ են եւ օրախնդիր: Ամենօրյա քրտնաշան աշխատանքով պետք է շարունակնենք հաջորդություններ ամրագրել տնտեսական ոլորտում, հաղթահարել ժամանակի մարտահրավերները, կառուցել ու շենացնել մեր հայրերի ու պապերի երկիրը եւ գալիք սերունդներին թողնել ծաղ-

կող ու բարգավաճ հայրենիք: Մեր սրբազան պարտքն է միշտ վառ պահել 1988-ի ոգին, հավատարիմ լինել 20 տարի առաջ մեր ժողովրդի հոչակած գաղափարներին եւ շարունակել կառուցել քոլորիս երազած երկիրը: Մի երկիր, որտեղ յուրաքանչյուրը կապրի արժանավայել կյանքով, ապահով ու բարեկեցիկ, որտեղ ամեն ոք իրեն կզգա հպարտ եւ ուժեղ, հանգիստ ու պաշտպանված: Սա է 88-ի պատգամը, որը մենք պարտավոր ենք իրականացնել:

Լեռնային Ղարաբաղի կրօնումիտական կրթակցությունը գրիումակությամբ է նշում, որ անցած 20 տարիների ընթացքում, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության նյութական եւ բարոյական օժանդակության շնորհիվ հաջողվեց հաղթահարել պատերազմի արհավիրքները, մասամբ վերականգնել ավերգած տնտեսությունը: Այսօր հանրապետության նոր իշխանությունների մշտական ուշադրության կենտրոնում են երկրի անվտանգության, տնտեսության, սոցիալական ոլորտի, ժողովրդավարության ամրապնդման հարցերը: Նոր կառավարությունը գյուղատնտեսության նկատմամբ նոր քաղաքականություն է որդեգրել: Նախատեսվում է գյուղատնտեսության բոլոր ոլորտներում եւ բոլոր մակարդակներում, գյուղմթերզների արտադրությունից մինչեւ վերամշակումն ու իրացումը, պետական արդյունավետ եւ նպատակալուղված աջակցության ապահովում: Այդ նպատակով, տարեցտարի կավելանան պետքութեի հաշվին կատարվող կապիտալ ներդրումները: Ակտիվ միջոցներ են ձեռնարկվում նաև բնակչության սոցիալական հիմնախնդիրների լուծնան ու կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ:

Տարեցտարի վերականգնվում ու նոր թափ են առնում տնտեսության տարրենք ճյուղերը, բացվում են նոր աշխատատեղեր, կառուցվում են բնակարաններ, դպրոցներ, բժշկական հիմնարկներ, վերականգնվում են ավերգած գյուղերը: Դաշվետու ժամանակաշրջանում բարձրացվել են ուսուցիչների, բուժաշխատողների, ծառայողների աշխատավարձերը, 60 տոկոսով ավելացել են կենսաթոշակները, մեծացել է պետության ուշադրությունն ու հոգատարությունը զրիված ու հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների նկատմամբ: Վերջերս Վրցախյան գյուղարտի առաջին կարգի 10 հաշմանդամների պետական միջոցների հաշվին տրվեցին ավտոմեքենաներ: Այլ գործնթացը կրեն է շարունակական բնույթը: Իրագործվող սոցիալական ապահովության ծրագրերին ավելացել է նոր ենթածրագիր, ըստ որի՝ չաշ-

խատող կանայք ընդգրկվել են հղության եւ ծննդաբերության նպաստների համակարգում, 2008-ի հունվարի 1-ից սկսած, ծննդաբերելու դեպքում, նրանց տրամադրվում է 115 հազարական դրամ:

Տարեցտարի ավելանում են ԼՂՀ տնտեսության մեջ Հայաստանի եւ Սփյուռքի՝ մեր հայրենակիցների կողմից կատարվող կապիտալ ներդրումները: Ինչպես հայտնի է, Ստեփանակերտ-Գորիս եւ, «Հյուս-Հարավ» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուդինների շինարարության խոշոր նախագծերն իրագործվել եւ շարունակում են իրագործվել «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցների հաշվին: Այս բոլոր հաջողություններում իր լուման ունի նաև կոմերտը: Մենք բազմիցս նշել ենք եւ այսօր էլ, ի լուր ամենքի, հայտարարում ենք, որ ժողովրդավարության միակ ծննդարիտ ծեւզ խորհրդանքն են, որ սոցիալիզմը եղել եւ մնում է ժողովրդավարական հասարակարգի մասին մեր միակ եւ անբեկանելի պատկերացումը, մեր գլխավոր նպատակը:

Մենք հանողված ենք, որ մարդկությունը վերջնականապես ընտրելու է գարգացման սոցիալիստական ուղին: Դա պատմական անխուսափելի օրինաչափություն է, որը հասկանում են անգամ սոցիալիզմի հակառակորդները: Մենք գտնում ենք, որ անգամ շուկայական հարաբերությունների պայմաններում հնարավոր է իրականացնել միջոցառումներ, որոնք, մեր կարծիքով, կնպաստեն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, հասարակության բեւեռացնան բուլացմանը, կաշառակերության ու կոռուպցիայի դեմ մրգող պայրարի ուժեղացմանը: Դրա համար նախ պետական վերահսկողություն լիներ է սահմանել տնտեսության գերշահույթ ապահովող ճյուղերի և լաւագում, վճռական միջոցներ ծեռնարկել ստվերային տնտեսությունը հարկային դաշտ մտցնելու համար, բոլոր միջոցներով պայքարել կրոռուպցիայի, կաշառակերության դեմ, պետական ապարատը, իրավական եւ դատաքննչական համակարգը նաքրել կոռումպացված տարրությունը, հասնել այն բանին, որ կյանքի բոլոր բնագավառներում գերակայի օրենքը եւ ոչ թե կամայականությունը, տարբեր կապերն ու ազդեցությունները: Ենտաքրքիրն այն է, որ կաշառակերության համար Զիւաստանում կաշառակերներին կախում են, իսկ մեզ մոտ բարձրացնուն և աշխատավարձերը: Պետք է ոչ թե աշխատավարձերը բարձրացնել, որի պաշտոնյան կաշառը չվերցնի, այլ նրա նկատմամբ կիրառել օրենդի պահանջները, անհրաժեշտ է՝ պետության ծեռքում կենտրոնացնել

տնտեսության ռազմավարական ճյուղերը՝ կապի միջոցները, էներգետիկան, արդյունաբերությունը: Ժամանակն է, որ վերանայվի սեփականաշնորհման գործընթացը, վերագնահատվեն բոլոր օբյեկտների իրական արժեքները, համապատասխան միջոցներ ծեռնարկվեն բոլոր արդյունաբերական ծեռնարկությունները վերագրությունը կապվելու հանար եւ այլն:

ԽՄԴՄ փլուզումից հետո քանդվեցին տասնյակ տարիների ընթացքում ծեւավորված տնտեսական կապերը, պյանային տնտեսությունը փոխարինվեց ազատ-շուկայականով, աշխատավոր զանգվածները հայտնվեցին թշվառության մեջ: Լեռնային Ղարաբաղի նոր դեկավարությունը քայլեր է կատարում կոռուպցիայի, կաշառակերության, ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար: Պաշտպանելով ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանի՝ այդ ուղղությանը գործադրվող ջանքերը, ԼՂ կոմկուսը միաժամանակ գտնում է, որ անհրաժեշտ է փոխել հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը եւ անցնել տնտեսության պետական կարգավորմանը: Պետությունը պետք է մեծացնի իր մասնաբաժնը հանրային պետականության հիմնական ֆոնդերում, վարի սոցիալապես ուղղորդված տնտեսական քաղաքականություն: Անհրաժեշտ է, որ ԼՂՀ կառավարությունը միջոցներ ծեռնարկի առաջին անհրաժեշտության ապրանքների, հատկապես՝ գազի, ջրի, մասի, կաթնեղենի, գազի գնաճը զատելու, բուժսպասարկումը մատչելի դարձնելու համար: Ինչ խոսք, որ դա հասարակությունը առկա լարվածությունը մեղմելու համար է:

Մեզ մտահոգող խնդիրներից մեկն է հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունն է, որը բավարար զարգացում չի ապրում: Իրականացվող անհեռատես բարեփոխումները հաճախ վտանգում են բնակչության շահերը, խաթարվում են կյանքի համար անհրաժեշտ ուղրումները՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը: Հազարավոր մարդիկ գործազուրկ են, վերացել են աշխատանքի եւ հանգստի, անվճար բուժսպասարկման ու կրթության, ապահով ժերության իրավունքները: Պակասում է բնակչության թվաքանակը, շարունակվում է արտագաղթը: Տարեցտարի պակասում է դպրոցական երեխաների թիվը, կրթատվում են դասարանները, սովորողների եւ ուսանող երիտասարդության հիմնական մասը պետական ծրագրերով նվազագույն մակարդակում է:

զագույն գիտելիքներ չեն ստանում: Ծրջանավարտներից շատերը, լինելով բացարձակ անգրագետ, ստանում են հասունության ատեսատներ ու բարձրագույն կրթության դիպլոմներ: Խարենությունն ու կեղծիքը, կաշառակերությունն ու կոռուպցիան մուտք են գործել դպրոց ու բարձրագույն ուսումնական հաստատությունների: Անքավարար է կազմակերպվում գյուղական բնակչության մշակութային սպասարկումը, մշակութային շատ օջախներ ամիսներով փակ են: Բնակչության անվճարունակության պատճառով մարդիկ չեն կարողանում ժամանակին բուժվել, անհրաժեշտ դեղամիջոցներ գնել, որի պատճառով շատացել է նահացածությունը, հատկապես միջին տարիքի մարդկանց մոտ:

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում գործում են բազմաթիվ կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրը գովերգում է իր յուրահատուկ արժանիքները: ԼՂՀ Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարդինների ընտրությունների նախաշեմին այդ կուսակցությունները կատարում են նախօրոք ծրագրած որոշակի պատվերներ՝ եւ «բարեգործություններեր», իրենց համար ապահովելով «ազնիկ եւ լավագույն» ժողովրդավարի համբավ, իսկ պատգամավորներ կամ պաշտոնյա դաշնալուց հետո, մոռանում են իրենց խոստումներն ու պարտականությունները, բնակչության անապահով խավերին բողոքում ահավոր հոգսերի ու կարիքների մեջ: Ուրեմն, մեր բոլորին խնդիրն է լայն զանգվածների գիտակցությանը հասցնել այն պարզ ճշմարտությունը, որ այս կամ այն կուսակցության աշխատանքը պետք է չափվի ու գնահատվի ոչ թե նրա դեկավարների առաւտ ու վերամբարձ խոստումներով, այլ կրնկեած գործերով: Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության ծրագիրն ու գաղափարախոսությունն ամենաաջապահության մեջ: Դրանք բովանդակությանը եւ ազգային են, եւ ինտերնացիոնալ, համակողմանի ապահովում ևն սոցիալիստական դեմոկրատիայի սկզբունքները: Կուսակցության բաղկամ-շոշչկունքների, տարածքային կուսակցական կազմակերպությունների խնդիրն է հանրանատչելի եղանակով ներկայացնել կուսակցության ծրագրային դրույթները, գաղափարախոսությունը մեր ժողովրդի բոլոր խավերին:

Իրենց դեմոկրատներ համարող չինովնիկներից շատերը խորհրդական երանելի տարիներին մեծացել, ստացել են անվճար կրթություն, վարել են բարձր պաշտոններ: Այսօր նրանցից շատերը առանց ամորի, մեծամտորեն հայտարարում են, որ ուժեղի տակ են գցել ամենաարդա-

րացի համակարգ-հասարակարգը, նոռանալով, որ իրենք տրորել ու փոշիացրել են տնտեսական հզորությունները եւ ամեն ինչ: Մինչդեռ ազնիվ կոմունիստները, բանվորները, գյուղացիները, մտավորականները, ովքեր ակտիվ նաևնակցել են Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության, գյուղատնտեսության, նշակույթի զարգացմանը, գրկվել են աշխատանքից, հարգանքից, պատվից եւ հայտնվել աղքատ ու թշվառ վիճակում: Մենք Լեռնային Ղարաբաղի կոմունիստներս, մեր բոլոր համակիրների հետ, պարտավոր ենք թեր ամբողջ աշխատանքը նպատակատիղներ կոմունիստական իդեալների կենսագործմանը:

Քաղկոմ-շրջկոմները, կուսակցության բոլոր կառույցները պարտավոր են վերակառուցել կուսակցության գաղափարական գործունեությունը, հարստացնել բնակչության շրջանում տարկոր ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի բովանդակությունը, արդիականացնել ու թարմացնել դրա ծեւերն ու եղանակները, գաղափարական-քաղաքական աշխատանքն ավելի ակտիվորեն նապատականութել կուսակցության սոցիալական բազայի ամրապնդանն ու ընդլայնմանը, աշխատավորական խավերի սոցիալիստական գիտակցության, քաղաքական ակտիվության բարձրացնանը, կուսակցության ծրագրային նպատակների շուրջ նրանց համախմբանը, տարրերակած աշխատանք տանել կուսակցության համակիրների շրջանում՝ նրանցից լավագույններին կուսակցության մեջ ընդգրկելու համար: Պետք է լրջորեն գրադարձ գաղափարական կաղըրերի պատրաստման, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքում նոր, թարմ ուժերի ներգրավման գործերով: Դա ժամանակի հրամայականն է դառնում հատկապես իինա, երբ նոր ուսումնական տարում կվերականգնվի կոմունիստների քաղաքական ուսուցման խորհրդային ժամանակների լավագույն ավանդույթը:

Կուսակցական կազմակերպությունների գաղափարական-քաղաքական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում լուրջ անելիքներ ունի կոմկուսի «Արցախի կոմունիստ» (խմբագիր Արմեն Հովհաննիսյան) պաշտոնաթերթը, որի էջերում հաճախակի են տպագրվում քննադատական հոդվածներ, լուսաբանվում ներկուսակցական կյանքի տարրեր հարցեր: Թերթը պետք է ել ավելի բարելավ տպագրվող նյութերի գաղափարական բովանդակությունն ու քաղաքական ուղղվածությունը, իրոք դառնա կոլեկտիվ ագիտատոր ու կունեկտիվ պրոպագանդիստ: Մենք լուրջ ուշադրություն պետք է դարձ-

նենք թերթի բաժանորդագրությամբ եւ ըստ նրա արդյունքների գնահատենք քաղկոմ-շրջկոմների, կուսակցական բոլոր կառույցների գործունեությունը, նրանց կողմից տարվող գաղափարախոսական աշխատանքների արդյունավետությունը:

Դարգելի պատգամավորներ, մենք բոլորս համոզված ենք, որ Արցախ աշխարհը պատկանում է բոլորիս եւ առաջին երթին երտասարդությանը: Դրա համար էլ մենք լուրջ պայքար պետք է մենքն երիտասարդության գաղափարական մոտածելակերպ փոխելու ուղղությամբ: Մանավանդ, որ ներկա համակարգում ծնված պատամիներն ու աղջկները չեն տեսել մեր ժողովորի ապրելակերպ սոցիալիզմի օրոք: Խոստովանենք, որ կուսակցության ոչ մի քաղաքային ու շրջանային կոմիտե, ինչպես հարկն է, չի գրադարձ այս կարեւոր հարցով, իսկ առանձին տեղերում, ուղղակի անտարբերության հետեւանքով, վերանում են տառիներ առաջ մեծ ջանքների գնով ստեղծված երտասարդական կառույցները:

Ստեփան Շահումյանի անվան կոմունիստական երիտասարդական միության Կենտկոմի քարտուղար ՍամՎել Ներսիսյանը կուսակցության քաղկոմ-շրջկոմների առաջին քարտուղարների հետ պետք է լիզորեն գրադարձ կոմերիտական կառույցների վերականգնման, երիտասարդության շրջանում գաղափարաքաղաքական, բացատրական ու դաստիարակչական աշխատանքների ակտիվացման հարցերով:

ՀՂ-ի կոմկուսը նախորդ համագույնարդում հատկապես շարադրել է իր դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման վերաբերյալ: Սակայն, ցավոք սրտի, հաշվետու ժամանակաշրջանում, դարաբաղյան հակամարտության արդարացի լուծման գործընթացում ոչ մի առաջընթաց չարձանագրվեց: Եվ դա ոչ քիչ այն պատճառով, որ ԵՂԴ արտաքին գործերի նախարարությունը արդյունավետ չի կատարում իր առջեւ դրված հիմնախնդիրները: Ինչպես սրամտորեն նկատել է ԼՂԴ Ազգային ժողովի պատգամավորներից մեզը, արտաքին գործերի նախարարությունը պարզապես վերածվել է գըսսաշրջիկների ընդուննան եւ տեղապորման գերատեսչության:

Այլապես, ինչո՞վ բացատրել այն փաստը, որ այսօր էլ դարաբաղյան հիմնախնդիրի միջազգային հանրության ընկալումները տարբերվում են մեր ընկալումներից: Եթե մեզ համար արդեն կասկած չկա, որ Դարաբաղյան անկախ, ինքնիշխան պետություն է, եւ որ դա այլընտրանք

չունի, ապա աշխարհում դեռ որոշում են, սա եթիկ, դավարանական պատճառազն է, թե՞ մեկ երկրի կողմից մյուսի տարածքների զավթում:

Հայաստանի արտաքին գերատեսչության նախկին դեկանական Առկանյանը խոստովանել է, որ հայկական դիվանագիտությունն ու քաղոզդությունն այրախն է չկարողացան աշխարհում ծեւավորել հիմնախնդրի համապատասխան հանագոր ընկալում: Իմիջայլոց, Ստեփանակերտում կայացած ժիջազգային գիտաժողովում ԼՂՀ ԱՆ կողմից ոչ մի ելույթ չեղավ ու չներկայացվեց մեր երկրի պաշտոնական տեսակետը: Երեխ այդպիսի տեսկետ դեռևս ծեւավորված չէ ԱՆ-ում: Ելնելով ստեղծված իրավիճակից, այսօր համագումարի բարձր ամբիոնից, հանրապետության բոլոր կոմունիստների անունից նորից հայտարարում ենք.

- Արդի միջազգային իրավունքում տարածքային ամբողջականության սկզբունքը չի բացառում տարածքային փոփոխությունները: Ավելին, առանձին դեպքերում այդ փոփոխությունները անհրաժեշտ են, երբ դա բխում է ազգերի ինքնորոշման սկզբունքից: Տարածքային ամբողջականության սկզբունքը բացառում է ինչպես այլ պետության կողմից տարածքի բնազարքում, այնպես էլ օտար պետության շրջանակներում որեւէ ազգի բռնությամբ պահելը: Եթոնային Ղարաբաղը երեք չի գտնվել միջազգային սուրբեկու հանդիսացող անկախ Աղրբեջանի կազմում, նա ինքը ԽՄՀՄ միասնական պետության սուրբեկու է եղել Աղրբեջանական ԽՄՀ-ի հետ մեկտեղ: Դա նշանակում է, որ աղրբեջանական պետության տարածքային ամբողջականության խախտութեղի չի ունեցել:

Այս տեսանկյունից ԼՂՀ ստեղծումը լիովին օրինաչափ է, քանի դա ոչ թե տարածքային ամբողջականության խախտում է, այլ ինքնորոշման սկզբունքի իրականացում: ԼՂՀ-ը անկախություն է հռչակել ոչ թե ուրիշի, այլ իր պատմական տարածքում: ԼՂՀ բնակչությունն առին հանրաքվեով արտահայտել է իր հավաքական կանքը, ժողովրդավարական եւ միջազգային իրավունքի նորմերով ունի իր սահմանադրությունը, որոշը, գինանշանը, հիմնը, նախագահը, Ազգային ժողովը, բանակը, անկախ ինքնիշխան պետությանը բնորոշ բոլոր կառույցները:

ԼՂՀ-ը պետք է ճանաչել որպես բանակցող կողմ եւ պահանջել, որ Եթոնային Ղարաբաղի դեկանակարությունը ծառի վերականգնել հակամարտող կողմից եւ սուրբեկու իր իրավունքը, որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան պետություն:

- Մենք հայտարարում ենք, որ հայ ժողովրդի երկու հատվածները ներկայացնող Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները, հաշվի առնելով պատմության դասերը եւ մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական վտանգավոր զարգացումները, պետք է ամրապնդեն եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ, իրենց համար ապահովելով քաղաքական անկախության եւ տնտեսական զարգացման լիարժեք հնարավորություններ:

Մեր հանրապետության անվտանգության հիմնական երաշխիքը ուրի հաղթական ու մարտունակ բանակն է, որը միշտ պատրաստ է արժանի հակահարված տալ թշնամու ցանկացած ուննության: Մեր բանակը զորեղ է, որովհետեւ ժողովրդական է: Կուսակցության կենտրոնը, նորա տարածքային բոլոր կառույցները պարտավոր են բոլոր ջանքերը լործադրելու մեր բանակի հզորությունն ամրապնդելու, բանակուն բարոյական մթողորոտ բարելավելու, ժողովրդի մեջ բանակի նկատմամբ առանձնահատուկ հոգածության ու հոգատարության զգացում դաստիարակելու համար: Հաշվի առնելով տարածաշրջանի անկամաստեսելի զարգացումները եւ Աղրբեջանի ռազմատենչ հայտարարությունները, ԼՂ Կոմկուսը հետեւողականորեն հանդես է գալու Ռուսաստանի դաշնության հետ Հայաստանի ռազմաքաղաքական դաշինույ ամրապնդման եւ հետագա զարգացման, սոցիալ-տնտեսական համագործակցության եւ մշակութային կապերի լիարժեք վերականգնման ու զարգացման օգտին:

Կուսակցության կենտրոնի 2005թ. հուլիսին կայացած ընդույնված նիտում, որին մասնակցում էին քաղկոմ-շրջկոմների բոլոր առաջին բարտուղարները, կուսակցական ակտիվիստներ, բազմակողմանիորեն քննարկել են ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները եւ տրվել համարժեք գնահատական: Բյուրոյի ընդունած որոշումը իրապարակվել է «Արցախի կոմունիստ» պաշտոնաթերթում: Փոխանակ անհրաժեշտ հետեւություն արվելին այդ որոշումից, միջոցները ծեռնարկելին բարելավելու կազմակերպչական, քաղաքական լուսադրական աշխատանքների մակարդակը, կուսակցության լուսիֆանակերտի քաղկոմի նախկին բարտուղարներ Կալերի Խաչատրյանը եւ Կալերի Զավադյանը կուսակցության կենտրոնի կազմամնի նախկին վարիչ Արտաշես Գասպարյանը եւ ուրիշներ անսկզբունք պայ-

քար են ծավաել կուսակցության կենտրոնի դեմ, միտումնավոր նրան վերագրելով ընտրություններում կրած անհաջողության ամբողջ պատասխանատվությունը: Նրանք կուսակցության ներսում ստեղծել են խմբավորում եւ, առանց կենտրոնի բյուրոյի եւ քարտուղարների հմացության, կենտրոնի որոշ անդամներից կազմակերպել ստորագրահավաք, փորձել հրավիրել կենտրոնի արտահերթ պլենում նպատակ ունենալով պաշտոնանկ անել կենտրոնի առաջին քարտուղարին: Կուսակցության կենտրոնի՝ 2005թ-ի նոյեմբերին կայացած բյուրոյի որոշմանը ներկուսակցական կարգապահությունը կոպտորեն խախտելու, կուսակցության ներսում խմբավորումներ ստեղծելու, ներսից կուսակցությունը պառակտելու, անսկզբունք գործունեության եւ աշխատանքուն թույլ տված լուրջ թերությունների համար Վալերի Խաչատրյանն ազատվեց կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղարի, Արտաշես Գասպարյանը՝ ԼՂ կոմկուսի կենտրոնի կազմակերպական բաժնի վարիչի պարտականություններից, նրանց հայտարարվեց խիստ նկատողություն, նտցնելով հաշվառման քարտը: Սակայն նրանց կենտրոնի բյուրոյի որոշումից ոչ մի հետեւություն չկատարեցին եւ բռնեցին կենտրոնի քարտուղարներին ու բյուրոյի մյուս անդամներին մարկարեկելու, շանտաժի ենթարկելու արատավոր ուղին, որի համար էլ ԼՂ կոմկուսի կենտրոնի պլենումը միաձայն նրանց հանեց կենտրոնի կազմից, բյուրոյի անդամի պարտականություններից եւ վտարեց ԼՂԿԿ շարքերից:

Կուսակցության նորընտիր կենտրոնի, նրա քարտուղարների, նորընտիր բյուրոյի խնդիրն է առաջիկայում եւս վճռականորեն գնալ ինքնամացրման, ծերքազատվելով բոլոր նրանցից, ովքեր չեն քայլում կուսակցության հետ, խախտում են կուսակցական կարգապահությունը եւ փորձում պառակտել նրա միասնությունը: Խիստ քննադատության պետք է արժանացնել գունափոխվածներին եւ պառակտիչներին:

Հայաստանում անջատ-անջատ գործում են նի քանի կոմունիստական կուսակցություններ, որոնց ոչ կառուցողական ու իրարամերժ գործունեությունը ոչ նի դրական արդյունք չի կարող տալ: Մենք համագումարի պատգամավորների անունից կոչ ենք անում այդ կուսակցությունների դեկավարներին վեր կանգնել ներ, անձնապաշտական նկատումներից, վերջ տալ ստեղծված անցամկալի, վնասակար ու վտանգավոր գարգացումներին: Համագումարը վստահություն է հայտնում որ մոտ ապագայում տարինաստ այդ կուսակցությունները կոմունիս-

տական գաղափարախոսության հիմքի վրա կվերամիավորվեն մեկ միասնական կուսակցության մեջ, որն ի վիճակի կլինի համախմբել ու գիշավորել ժողովրդական գանգվածների շարքումը, հանրապետությունը նորից սոցիալիստական զարգացման ուղի վերադարձնելու համար:

Ներկա համագումարին մախորդած հունիս-հուլիս ամիսներին տեղի են ունեցել սկզբնական կուսակցական կազմակերպությունների շուրջ 70 հաշվետու ընտրական ժողովներ, որոնցում ելույթ են ունեցել շուրջ 150 կոմունիստներ: Շրջանային ու քաղաքային կազմակերպությունների 7 կոմիտեանսներում համեստ են եկել 48 պատգամավորներ, արվել են տասնյակ առաջարկություններ, եղել են խիստ քննադատական դիտողություններ, կենտրոնի, շրջանային, քաղաքային կուսակցական վարչությունների հասցեին: Այսօր համագումարը պետք է պահանջի կուսակցության քաղաքային ու շրջանային կոմիտեներից վերջ տալ ծեւականությանը եւ բարձրացնել կուսակցական-կազմակերպչական, գաղափարաքաղաքական ու դաստիարակչական աշխատանքների մակարդակը, սկզբնական կուսկազմակերպությունների մարտունակությունը, կուսակցական կարգապահությունը:

Քիչ չեն թերություններն ու վիրապումները կենտրոնի բյուրոյի գործունեության մեջ: Կուսակցության կյանքում կարեւոր դեր է խաղում լուսակցական փաստաթղթերի փոխանակումը: Ցավոք, կուսակցության քաղկոմ-շրջկոմների քարտուղարների անպառախանատու վերաբերնունքի, կենտրոնի բյուրոյի ցածր պահանջկոտության հետեւանքով դանդաղում, իսկ առանձին գեղաքերում ուղղակի ծախողվում է այդ կարեւոր նշանակության հարցը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավիրվել են կենտրոնի՝ 6 պլենում, բյուրոյի 22 նիստ: Քննարկել են կուսակցական կյանքի կարեւոր հարցեր՝ կուսակցական կարգապահության հետագա բարձրացման խնդիրներ, տարբեր մակարդակների ընտրությունների նախապատճառատևման, կուսակցական կոմիտեներուն տիրող իրավիճակի վերաբերյալ հարցեր: Ընթացիկ տարրուն Քաշաթաղի շրջանում ստեղծվել են 5 ստգբնական կուսակցական կազմակերպություններ, ծեւակտեր է շրջանային կուսակցական կոմիտե, որի հիմնադիր կոմիտեանսում կուսակցությունի առաջին քարտուղար է ընտրվել Յովհաննես Յակոբյանը:

Մենք գոհունակությամբ ենք նշում, որ ԼՂԿԿ շարքերում քիչ չեն այնպիսի կոմունիստներ, ովքեր նվիրվածությամբ ծառայում են հարա-

զատ կուսակցությանը: Իրենց հետեւղականությամբ ու սկզբունքայնությամբ, կուսանդամին ներկայացվող պահանջների կատարմամբ նվիրվածության օրինակ են Արշավիր Գալստյանը, Յննիկիս Խաչատրյանը, Անդրանիկ Արքահամյանը, Արտաշես Ամիրջանյանը, Էդուարդ Արգումանյանը, Խորեն Ղազարյանը, Անդրանիկ Միրզոյանը, Գուրգեն Ջակոբյանը, Խաչատուր Պետրոսյանը, Արկադյա Ջայրապետյանը եւ ուրիշներ:

Թույլ տվեր հավաստիացնել, որ ԼՂ-ի կոմունիստները, հաշվի առնելով անցյալի դասերը, մեր տարածաշրջանի վտանգավոր զարգացումները, հայկական երկու պետությունների անկախության ամրապնդման եւ տնտեսկան զարգացման շահերը, հետեւողականորեն կշարունակեն իրենց պայքարը հանուն մեր երկու հայկական պետությունների վերածննդի, այդ պայքարում ապահովելով կուսակցության դերի ու հեղինակության հետագա բարձրացումը, նրա միասնության ու շարքերի ամրապնդումը:

«Արցախի կոմունիստ»
8 օգոստոս, 2008թ.





Աջից՝ ՀԿԿ Գյումրիի բաղկանի առաջին քարտուղար Յով. Մանուկյանի,
ՌԴ կոմկուսի նախագահ Գ. Զբուգանովի,
ՀԿԿ առաջին քարտուղար Ռ. Թովմասյանի եւ



Արցախի անձնվելու բարեկամ, ուսւ հանրահայք գրող,
իրադարակախոս Ա. Նոյեկինի եւ



Ձախից՝ ՀԿԿ Հրազդանի կուսարչկոմի առաջին քարտուղար Դ. Հարությունյանի
եւ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ե. Լիզաշովի եւ




ՌԴ դեսպոտայի մի խումք դասգամավորների եւ



ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի նախագահ Ա. Լուլյանովի հետ



ԼՂ կոմկուսի 4-րդ համազումարի բացումը



ԽՍՀՄ պատմական պահպանի պահպան Ն. Կ. Կարսին



Հ.Մելքոնյանը Ստեփանակերտի կուսադղոմի առաջին բարույթա
Զ.Մովսիսյանի հետ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԵՊ

Հարցազրույց ԼՂ կոմունիստական կուսակցության
Կենտկոմի առաջին քարտուղար Դրանտ Մելքոնյանի հետ

- Ընկեր Մելքոնյան, մեր գորույցը սկսենք, թերեւս նրանից, թե ինչպիսի՞ն եք դուք տեսնում Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության տեղը: Երկրամասի քաղաքական դաշտում, ո՞րն է նրա ղեկավարմերի վերաբերունքը իշխանությունների նկատմամբ:

- Մենք ցանկանում ենք, որ Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը իր հաստատուն ու վճռական տեղն ունենա հանրապետության քաղաքական դաշտում: Մենք հանդես ենք գալիս հանուն իսկական ժողովրդավարության: Այնպես որ ԼՂՀ կոմունիստական կուսակցությունը կլինի կառուցողական ընդդիմություն եւ իր առաջարկություններով ու խորհրդուներով մշտապես կաշխատի օգնել իշխանություններին զերծ մնալու սխալներից, հաշվի առնելու հասարակության ճնշող մեծանասնության կարծիքն ու շահերը: Բայց մենք իրավունք չունենք ոչ մի դեպքում համակերպվել իշխանությունների հետ, երբ կանունական մարդկանց շահերը, նրանց կենսական իրավունքները: Այդ են պահանջում արցախյան պատերազմում մեր գոհված ազատամարտիկների պայծառ հիշատակը, մեր մատադ սերնդի ապագան:

- Ինչպես հայտնի է, դեռեւս 1990 թվականին Դայաստանի Դանրապետության այն ժամանակվա Գերագույն Խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ԴՇԾ վարչակարգն արգելեց աշխատավորական կոլեկտիվներում կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը, փորձեր կատարվեցին բռնի կերպով վերացնելու Դայաստանի կոմունիստական կուսակցությունը: Ինչպիսի՞ն էր Ղարաբաղի կոմկուսի վիճակը այդ չարաբաստիկ օրերին:

- Բարեբախտաբար Դայաստանում մի խումբ կոմունիստ-ակտիվիստների եւ հատկապես արժանահիշատակ Սերգեյ Բաղալյանի ջան-



Հ. Մելքոնյանը Հայա ԿԵՄ 90-ամյակին նվիրելու մասին իշխանության
մի խումբ վեճունների հետ

քերով պահպանվեցին կուսակցությունը, նրա կառույցները եւ այն այսոր ամենահետինակավոր քաղաքական ուժերից մեկն է Դայաստանում: Ենչ մնում է Լեռնային Ղարաբաղին, ապա նրա կուսակցական մարմինների ղեկավարները ինքնահեռացան եւ կառույցների գործունեությունը դադարեցվեց: Արցախյան պատերազմի տարիներին նրանց գործունեությունը անհնարին էր վերականգնել: Միայն 1996 թվականին, այս անգամ էլ Կրկին Սերգեյ Բաղայանի օգնությամբ եւ միջամտությամբ, կազմակորվեց Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը:

- Մի ժամանակ հակակոնունիստական հիստորիա էր ծավալվել նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Ինչպիսի՞ն էր իրադրությունը մեզ մոտ:

- Դուք արձագանքները հասան նաեւ մեր երկրամասը: Տեղի-անտեղի քննադատվեց մի ամբողջ պատմական սերունդ, որի ջանքերով աղքատ ու անգրագիտության ճիրաններուն տառապող երկրամասը դարձել էր մի ծաղկուն բնաշխարի: Բանը հասավ մրան, որ Ստեփանակերտում քանդվեցին հայ ժողովրդի մեծ զավակ, աշխատավոր ժողովրդի ազատագրուն պայքարի նվիրյալ Ստեփան Շահումյանի պայծառ հիշատակին կանգնեցված հուշարձանը, ինչպես նաեւ Ազերսանդր Մյասնիկյանի և Բոգդան Կնունյանցի կիսանդրիները: Ունանք նույնիսկ առաջարկում էին փոխել Ստեփանակերտի անունը: Բայց ողջախոհությունը, բարերախտաբար, հաղթանակեց, վերականգնվեց Շահումյանի արձանը:

- Ի՞նչ է արվել հանրապետությունում ստեղծված նման հակակոմունիստական իրավիճակը փոխելու համար:

- Քիշենք առաջնորդի խոսքները. սոցիալիստական գաղափարախոսության ամեն մի նմենացում նշանակում է բուրժուական գաղափարախոսության ուժեղացում: Մինչդեռ նենք ինքնահեռացել էնք քնակչության շրջանում քարոզական գործունեություն վարելուց: Այժմ նենք նախատեսում ենք միջոցառումներ՝ ուղղված բնակչության, հատկապես երիտասարդության շրջանում առաջիկայում լայն ծավալի աշխատանքների ծավալմանը, սոցիալիստական-տնտեսական հարաբերությունների առավելության պարզաբանմանը: Մենք ամեն կերպ ծգտում ենք ժողովրդի գիտակցությանը հասցնել այն պարզ ճշնարությունը, որ կոմունիստներն ունեցել են մեկ արտոնություն՝ լինել տնտեսական եւ քաղաքական առաջնորդացի առաջամարտիկ եւ կրել մեծ պատասխանառվություն հանրության հանդեպ:

- Ի՞նչ կամեք քաղաքական դաշտում Դայաստանի եւ Արցախի կոմունիստների համագործակցության մասին:

- Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը պաշտպանում է Դայաստանի կոմկուսի ծրագրային դրույթները, նրա նոանդուն ջանքերը երկրում կարգուկանոնի եւ սոցիալական արդարության վերականգնման ուղղությամբ:

- Ընդհանուր առամամբ ինչպիսի՞ ուժերի հետ կարող է համագործակցել մեր կուսակցությունը:

- Առհասարակ մենք պատրաստ ենք համագործակցելու բոլոր այն ուժերի հետ, որոնք գործում են ի օգուտ աշխատավոր ժողովրդի շահերի: Վերջին ժամանակներս ակտիվացել է կոմունիստական շարժումը մի շարք երկրներում: Ասած հաստատելու համար կարող են շատ օրինակներ բերել: Մոլորդվան, որը մի ժամանակ վերածվել էր հակակոնունիստական շարժման քատերաբեմի, այսօր կրկին ապավինել է կոմունիստներին: Վերջերս տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում կոմունիստները փայլուն հաղթանակ տարան, որի արդյունքում երկրի նախագահ ընտրվեց կոմունիստ Վաղահմիր Վորոնինը: Բելառուս ժողովուրդը Վերջերս կրկին իր ծայնը տվեց Ալեքսանդր Լուկաշենկոյին, որը, երկիր փաստորեն դեկավարում է խորհրդային սկզբունքներով: Բավական է ասել, որ այսօր այստեղ երկրի տնտեսության 95 տոկոսը պատկանում է պետական սեկտորին:

- Իսկ ի՞նչ կամեք Ղարաբաղի հիմնահարցի լուծնան համար Արեւածությի կողմից դաշտավոր սկզբունքի՝ տարածքային ամբողջականության եւ սահմանների անխախտելիության սկզբունքի նասին:

- Ղարաբախյան հիմնահարցի արարարացի լուծնան համար մենք չենք ընդունում Արեւածությի կողմից դաշտավոր տարածքային անբողջականության եւ սահմանների անխախտելիության սկզբունքը, որովհետեւ, ինչպես նշվում է մեր կուսակցության ծրագրում, այստեղ խոսքը գնում է ոչ թե Աղրբեջանի Ակատմամբ արտաքին ագրեսիվայի կամ որեւէ ուրիշ պետության կողմից տարածքային պահանջների մասին, այլ Աղրբեջանի փլուզված պետության մասերից մեկի ինքնորոշման առթիվ, որի ճակատագիրը իրավաբանական տեսակետից պատկանում է միայն նրա նախկին մասին: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը գտնում է, որ միջազգային հանրությունը պետք է ճանաչի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշված ժողովորի կամքը եւ նրա իրավունքը՝ ինքնիշխան կերպով կերտելու իր ազատ եւ անկախ ազգային պետականությունը:

- Ընկեր Մելքոնյան, կարելի՞ է ասել, որ Լեռնային Ղարաբաղի ներկայիս կոմունիստական կուսակցությունը նախկին խորհրդային Միության կոմունիստական կուսակցության տեղական ջոկատի կրկնությունն է:

- Ամենեկին ոչ: ԼՇ կոմունիստական կուսակցությունը ոչ թե անցյալի՝ ԽՄԿ տեղական ջրվատի կրկնությունն է, այլ նրա լավագույն ավանդույթների, դրական գործելավերպի, համաձարդկային արժեքներ պարունակող նպատակների համակիր, գաղափարական իհմքերի վրա բարձրացած, քաղաքականապես նորացված ազգային կերպարով հետերնացինալիստական նոր կուսակցություն, որն ունի իր ինքնուրույն ծրագիրն ու կանոնադրությունը, ռազմավարությունն ու տակտիկան, ժողովրդին անմնացրող ծառայելու պատրաստակամություն:

Եթենային Պարաբաղի կոմունիստական կուսակցությունը, հավաստելով անցած տասնամյակների դրական արդյունքներն ու անժխտելի նվաճումները, միաժամանակ վճռականորեն դատապարտում է ԽՄՀՍ-ում եւ ԽՄԿ-ում թույլ տրված սխալներն ու ծեւախեղումները, մարդու իրավունքների ուսնահարման փաստերը, երեսնական-քառասնական թվականներին տեղի ունեցած օրինագանցություններն ու քոնությունները, որոնց գոհ դարձան առաջին հերթին հազարավոր կոմունիստներ:

- Ինչպե՞ս եք դուք մեկնարանում ԽՄՀՍ-ում տեղ գտած իշխանական չարաշահումները, սոցիալիզմի հիմնական սկզբունքներից աղետավոր շեղումները եւ այլ նեգատիվ երեւություններ, որոնք մեծ վնաս հասցրին կոմունիզմի գաղափարներին, կուսակցության հեղինակությանը:

- Մի ժամանակ կուսակցության դռները, կարելի է ամել, բացվել էին կամքածելի տարրերի առջեւ, որոնք նրա շարեթըն էին սողոսկում լոկ անձնական շահ ձեռք բերելու, իսկ որոշ դեպքերում, ինչպես դա երեւաց հետագայում, նաև կուսակցությունը ներսից քայլելու, կապիտալիստական կարգերը վերականգնելու նպատակով: ԽՄՀՍ-ում ծայր առած քաղաքական խոր ճգնաժամից, ԽՄԿ գլխավոր քարտուղարի եւ նրա գործակիցների դաշտանությունից օգտվեցին արտասահման հետադինական ազդեցիկ շրջանների հովանավորությունը վայելող հականունիստական ուժերը: Կուսակցության եւ պետության անսկզբունքային, երկորիմի եւ անհետեւողական քաղաքականությունը հանգեցրեց դարաբաղյան հարցի խճճնանը, որին հետեւեցին մարդկային եւ նյութական հսկայական միջոցների կորուստներ:

- Այսօր, մենք անկախ երկիր ենք եւ թվում ե՛ ժողովուրոջ պետք է վայելի այդ անկախության բարիբները: Սակայն այսօր նա զրկված է դրանից: Ինչո՞ւ եք դուք բացատրում այդ երեւությը:

- Մեր խնդիրն է հարապետությունում վերահաստատել նախկինում գործող այնպիսի կարգեր, որոնք հնարավորություն տային ապա-

հովելու անվճար կրթություն, բուժօգնություն, նատչելի սոցիալական ծառայություններ, մոր ու մանկան, ծերության, համազգային բարձր բարյականության նորմերի վերահաստատում, գիտության ու կրթության, նշակույթի համակողմանի զարգացման երաշխավորված հաստատություններով: Մենք պետք է զգտենք նրան, որպեսզի աշխատավոր մարդու համար ապահովվեն ապրուստի թեկուզ նվազագույն պայմաններ, որպեսզի կանխավի նրա ծեռքով տարիների ընթացքում ստեղծված բարիքների հաջոտակումը, որ գյուղացին հնարավորություն ունենա մշակելու, որպես սեփականություն, իրեն տրված հողակտորը եւ ոչ թե դառնա նրա վերին: Կուսակցական կազմակերպությունները պետք է ակտիվ գործություն ծավալեն աշխատավորական լայն զանգվածների շրջանում, կրանց մոտ արքնացնեն սոցիալիստական հնքնագիտակցություն: Արդամացին պետք է համոզվի, որ այն ամեն լավը, բարոյականը, արժեքավորը, ինչը ստեղծվել է անցած տասնամյակների ընթացքում, ստեղծվել է կրոնունիստների ղեկավարությամբ, նրանց ջանքերի շնորհիվ:

- Ինչպիսի՞ն եք դուք տեսնում մեր երիտասարդության ապագան:

- Երիտասարդությունը չունի առաջնաբացի կայուն հիմք: Գնալով ուր բուհական համակարգը գրեթե անբողոքին վճարովի է դառնում, յուրունակ աճում է ոչ պետական ուսումնական հաստատությունների միվը կրթության իրենց ցածր մակարդակով: Մենք պետք է մեր տեսականացնելու պահենք մայորաբարի բարձրագույն ուսումնական հաստատությունները, պատահների եւ աղջիկների մեջ սեր պատվաստենք դեպի ուսումը: Օրակարգի հարց է կոմերիտական կազմակերպությունների վերականգնումը: Դայաստանում կոմերիտությունը իրենից մեծ ուժ է ներկայացնում: Մենք բոլոր հնարավորություններն ունենք ստեղծելու ուր երիտասարդության շահերն ու խնդիրները միավորող կազմակերպություն:

- Որո՞նք են այսօր ներկուսակցական աշխատանքի հիմնական ուղղությունները:

- Վերջին ժամանակներս անհրաժեշտ աշխատանքներ են տարվել տեղերում սկզբնական կուսակցական կազմակերպությունների վերականգնման կամ ստեղծման ուղղությամբ: Ստեփանակերտ քաղաքում եւ Խանրապետության շրջաններում անց են կացվել քաղաքային եւ շրջանային կոնֆերանսներ, որոնցում ընտրվել են ղեկավար մարմիններ եւ 17 կոմկուսի երրորդ համագումարի պատգամավորներ: Ամենուրեք ընդունվել է այն միտքը, որ կուսակցական կազմակերպությունները պետք է

Վերականգնեն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների իրականացման գործում իրենց նախկին դերն ու պատասխանատվությունը երկրի ապագայի հանդեպ: Մենք պետք է լուրջ ուշադրություն դարձնենք կուսակցական շարքերի համալրմանը, հատկապես երտասարդության եւ միջին տարիքի մարդկանց հաշվին: Այդ ուշադրությամբ եւս աշխատանքներ են տարվում, պատրաստվել են համապատասխան փաստաթղթեր, կատարվել է կոմունիստների վերահաշվառում:

- Ընկեր Մելքոնյան, ասածք, խնդիրն, ո՞րն է այսօր կոմկուսի առաջնահերթ խնդիրը, որպես Լեռնային Դարաբաղի Յանրապետության կայացման ու զարգացման ջատագով:

- ԼՇ Կոմկուսի առաջնահերթ խնդիրն է՝ դեկավարվելով սոցիալ-տական արդար գաղափարներով, ապահովել ԼՂՀ ինքնիշխանությունն ու ազատ բարգավաճումը, ժողովրդի գոյատեւումը, օրենքի գերակայումը, սոցիալական արդարությունը Յայաստանի հետ փոխադարձ մերժելով կապերի եւ փոխահավետ համագործակցության գարգացումը: Լեռնային Դարաբաղի կոմկուսը միշտ էլ գործարար կապեր է պահպանելու սոցիալիզմի գաղափարներին նվիրված քաղաքական կազմակերպությունների եւ կուսակցությունների, առաջին հերթին Յայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունների հետ:

Վերջում ուզում են ասել հետեւյալը, առհասարակ ամեն մի կուսակցություն, ամեն մի անհատ իրավունք ունի հանդես գալու ժողովրդի անունից, եթե ներկայացնում է ժողովրդի շահերը: Կուսակցության մեջ, ի հարկե, կիխնեն մարդիկ, ովքեր այս կամ այն հարցի շուրջ կունենան ընհանուրից տարերե կարծիք: Բայց քացաված է, որ կուսակցությունն ունենան երկու ծշմարտություն: Կուսակցությունը մեկն է, նրա որդեգրած շշմարտությունը միակը պետք է լինի, եթե մենք տարանջատեք չգիտակցած սխալների սահմանները, ուրեմն մենք մեզ զրկում ենք քաղաքական գործի եռանդից եւ գլորվում գիտակցած սխալների թագավորություն: Մեզ սովորեցրել են եւ այդ համոզնությունը էլ ապրում ենք, ու վերադասակարգային պետություն չկա եւ չի կարող լինել: Պետություն միշտ էլ դասակարգային է: Մենք ծգտում ենք մի պետության, որը ներկայացնում է հասարակ մարդկանց, աշխատավորների շահերը:

Արտավագր ԻՄՐԱՅԵԼԱ
«Յայաստանի կոմունիստ»
1 նոյեմբեր, 2001

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ԴԺՈՒ ԵՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՆԱԿԻՒՑ

Կոմունիստները ԱՊՀ երկրներից, թերեւս, առավել ակտիվ են Ռուսաստանում եւ Մոլդովայում: Ըստ ռուսաստանյան պետականամետ լրատվամիջոցների՝ այս տարվա սկիզբը կոմկուսի, հատկապես նրա խորհրդարանական խմբակցության համար, դաժան էր: Նույնիսկ Մայիսի 1-ը աջ ուժերը ավելի մեծ թափով նշեցին, քան կոմունիստները: Մոլդովայում մի քիչ այլ Ըկարագիր է: Երկրի նախագահ ընտրված Վորոնինին չեն ընդունում ռումինամետ ռադիկալ ուժերը, եւ կոմունիստական ևշխանությանը վտանգ է սպառնում: Յայաստանում կոմկուսը մի ժամանակ բավականին ազդեցիկ էր, սակայն այժմ քիչ-ինչ կորցրել է իր «ձախությունը»:

Դարաբաղի կոմունիստը մի քանի տարի փաստորեն անզործության լր մատնված: 2000թ. կուսակցությունը վերակենացավ: Եվ պատճառ Կենտկոմի նոր առաջին քարտուղարի նշանակումը չէ: Նույն Յրանտ Մկրտչյանը մի քանի տարի առաջ գրադերել է այդ պաշտոնը: Ըստ երևուությին, փոփոխվել են քաղաքական պայմանները: Իշխանությունները ինչ որ չափով խթանում են կոմկուսի գործունեությանը: (Քիչենք թե լուզ երկրի նախագահի եւ վարչապետի ներկայությունը կոմկուսի հանգույնարին): Թե ինչ նկատառումներով է դա արվում, միայն ենթադրել լուրելի է: Իշխանությունները, փորձելով քաջակուսակցական դաշտ սուլդել, հավանական է, գտնում են, որ Արցախում առավել մոտ են կոմունիստական գաղափարները: Յանարավոր է, որ կոմկուսը ոչ ռադիկալ լուսնաբելով՝ գերադասում են ընդդիմությունում տեսնել ոչ թե դաշնակույթուններին, այլ ծախ ուժերին: Յամենայնենքան, կոմունիստներն ակտուացել են: Միշտ է, այսօր չունեն ներկայություն խորհրդարանում: Խուլայն արդեն համարյա թե անեն գյուղում ստեղծված են սկզբնական բարգավաճակներ: Ժամանակին անց են կացվում ժողովներ, նիստեր և այլ միջոցառումներ:

Ըստ կուսակցական կանոնադրության, 4 ամիսը մեկ Կենտկոմի բարուն կատարվածի մասին հաշվետվություն է տալիս Կենտրոնական կոմիսարներին: Օթերս կայացել է հերթական պետությը: Նշեցվող հարցերի նույն սրություն չեն սպասել նույնիսկ կուսակցության դեկավարները: Դուք պատճառը ԿԿ առաջին քարտուղար Յրանտ Մելքոնյանի՝ մեր

Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին բավականին սուր գեկույցն էր:

Նախ՝ կոնունիստների ղեկավարը դիմեց բոլոր նրանց, ովքեր կողմնակից են շուկայական հարաբերություններին, ծգուում են կապիտալիզմ կառուցել: Մենք նրանց ասում ենք՝ ի՞նչ վատ էր, որ անհեռամեկար քաղաքականության, ազգամիջյան, ընդհարութների պատճառով կործանման եզրին կանգնած Շայաստանն ու Ղարաբաղը ժաղկուն երկրներ են դարձել՝ զարգացած արդյունաբերությանը եւ կրթական ամենարդյունավետ համակարգով:

ԽՍՀՄ փլուզումը Դ. Մելքոնյանը համարեց համաշխարհային իմպերիալիզմի հաղթանակ: Անդրադառնալով՝ Ղարաբաղի սոցիալ-տնտեսական իրավիճակին, նա արտահայտեց կոնունիստների կարծիքը սեփականաշնորհման նախին: Թերեւս այն որոշակի ծավալով անհրաժեշտ է, սակայն ժամանակից շուտ է անցկացվել եւ ոչ ցանկալի ծեւով: Երկրորդ՝ կոմկուսը դեմ է ժողովրդի միջոցներով կառուցված ծեռարկությունը պատահական մարդկանց անվարձահատուց տրամադրելուն: Մեր գրույցի ժամանակ առաջին քարտուղարը հիշեցրեց դեպքեր, երբ անվարձահատուց սեփականաշնորհված օրեւկոր գրավ է դրվում բանկում՝ վարկ վերցնելու համար:

Վարկը չի վերադարձվում, իսկ գրավը, արդեն «վարձահատուց», վերադառնում է պետությանը:

- Իսկ ի՞նչ եք առաջարկում՝ չսեփականաշնորհե՞լ ընդհանրապես:
- Որպեսզի կամխել նման երեւույթները, երբ անվարձահատուց սեփականաշնորհված օրեւկոր տերը չի կատարում պայմանագրով սահմանված պարտականությունները՝ խոշոր մերդումներ անել եւ աշխատատեղեր բացել, առաջարկում ենք սեփականության ծեռք բերման մասին վկայականը տրամադրել 5 տարի անց՝ պայմանավորվածությունը կատարելուց հետո:

- Զեր գրույցում դուք հստակ նշել եք նաև կենտրոնացված ջեռուցման հարցը...

- Ինչպես գիտեք, 3 տարի առաջ Ստեփանակերտի կաթսայատմերը վերանորոգվել են՝ ծախսվել է 200 մլն դրամ: Բայց բնակչությունը այդպես էլ չստացավ կենտրոնացված ջեռուցում: Մենք առաջարկում ենք սահմանել խնայողության խիստ ոեժիմ ինքնարժեքը իջեցնելու ենթուրի համար այդ ծառայությունը հասանելի դարձնելու համար:

Իսկ գումարներ կարելի է տնտեսել, տեսեք՝ ինչքան միջոցներ են հատկացվում համայնքներում զնտրությունների ամցկացմանը: Առաջարկում ենք պարզապես նշանակել համայնքի ղեկավարին, ինչպես նախկինուն էր:

Կոմկուսը նախաձեռնել է արհմիությունների մասին՝ օրենքի նշակումը՝ պայմանավորելով այն աշխատավորների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ստեղծվել են արհմիութենական կազմակերպություններ, սակայն նրանք որեւ իրավաբանական ուժ չունեն, այսինքն, չեն կարող պաշտպանել բանվորին, օրինակ՝ դատարանում: Նոր օրենքով արհմիութենական կազմակերպություններին պետք է տրվի իրավաբանական կազմի կարգավիճակ:

- Իսկ որտե՞ղ է «բնակվում» այսօր կոմկուսը:

- Զեր հարցը տեղին է: Միայն Ստեփանակերտում մենք ունեցել ենք հիմք խոշոր կուսակցական շենք, իսկ իհմա մեզ ընդամենը նկուղային միտարածք է տրամադրված:

Ի՞նչ արած՝ ժամանակները փոխվում են: Գուցե կոնունիստների փողոցում կոկին տոն կլինի...

Ն. ՂԱՅՐՈՒՅՑԱՆ

«Ազատ Արցախ», մայիս, 2002թ.

ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՂ ԿՈՂՄ ՂԱՐԱԲԱՂԸ ՊԵՏՔ Է ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դարձագրույց Լեռնային Ղարաբաղի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Դրանտ Մելքոնյանի հետ

- Պարոն Մելքոնյան, Ձեր կարծիքը Դայաստանի կողմից առաջարկող Դայաստանը երաշխավոր, Ղարաբաղը բանակցային գործընթացին որպես մասնակից լինելու վերաբերյալ:

- Փորձեմ մի քիչ հեռվից սկսել: Բոլորին է հայտնի 1988-ի փետրվարի 20-ի՝ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարնան խորհրդի արտահերթ նստաշրջանի « ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՍՀ կազմից Դայկական ԽՍՀ կազմ հանճնելու համար Աղրբեջանական ԽՍՀ եւ Դայկական ԽՍՀ Գերագույն խորհրդների առջև միջնորդելու մասին» որոշումը: Այստեղ ոչ մի դիմակայության հարց չկար: Պատճական արդարության վերականգնում, սա է մեր պահանջը, որը չընդունվեց: Մոսկովյան իշխանակորները Սիխսայիլ Գորբաչովի գլխավորությամբ շահագործի էին, որ խնդիրն այդ վերածի երկու հանրապետությունների միջեւ թշնամանքի: Բնականաբար, բախումն անխուսափելի էր: Զաղարական հետագա իրողությունները ԽՍՀՄ փլուզումը, ԼՂ անկախության հոչքակումը, Դայաստանի հետ գիտածակութային, սոցիալ-տնտեսական կապերի հաստատումը, հանգեցրին նրան, որ Աղրբեջանն այլն ի գորու չեղակ պասիվ կեցվածք ընդունել, պատերազմ հրահրեց:

- Բռաչափ Ղարաբաղը ու՞ն պաշտպանությունը պիտի հայցեր, եթե ոչ համայն հայության, ընդհանրապես եւ Դայաստանի՝ մասնավորապես: Սեր անկախությունը մեզ համար շատ ավելի թանկ է, քան նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների անկախությունը: Այն ծեղոց ենք բերել իրենց կյանքը հայրենիքի ազատության զոհասեղանին դրած հայ նահատակների արյան գնով: Պատերազմի դաշտում ծեղոց բերած նվաճումը մեր ազատությունը, այսօր իրավունք չունենք զիջելու քաղաքական դաշտում: Իսկ սա նշանակում է, որ ղարաբաղյան կողմի մասնակցությունը բանակցային գործընթացին խիստ պարտադիր է: Դայաստանը թող հանդես գա, որպես մեր երաշխավորը, մեզ սատարողը: Այն համոզումը ունեմ նաեւ, որ եթե Ղարաբաղը հանդես գա, որպես հակամարտության կողմ, խնդիրը կարգավորվի ավելի արագ եւ արդարացի:

- Եթե հիշում եք, նման փորձ արդեն եղել է: Մինչեւ 1997թ. միջազգային համրությանը դեռևս հայտնի չէր Ղարաբաղի պատմությունը: Իսկ երբ գերտերությունները փոքրիչատե պատկերացում կազմեցին մեր մասին, Ղարաբաղը դուրս մղվեց բանակցային գործընթացից: Այն կարծիքն ունեմ, որ Դայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, լինելով ղարաբաղյան շարժման ղեկավարներից, հանգված էր, որ ավելի հստակ կարող է ներկայացնել Ղարաբաղը եւ, բնականարար, չի կամեցէլ Մինակի խմբի համանախագահների հետ ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ: Բայց եւ այնպես, Դայաստանի ղեկավարությունը միշտ էլ պաշտոնական հայտարարություններում ընդգծել է, որ առանց ղարաբաղյան կողմի համաձայնության որեւէ փաստաբությությունը չի ստորագրվի:

- Դամոգվա՞ծ եք, որ Ղարաբաղի մասնակցության պարագայում բանակցությունները կը ընթանան արդյունավետ ճանապարհով:

- Ավելի քան համոզված եմ: Եթե Ղարաբաղը հանդես գա, որպես հակամարտության կողմ, գտնում եմ, որ կը նորունվի հայանպատ որոշում: ԼՂ նախագահական ընտրությունների ժամանակ գործող նախագահի նախընտրական ծրագրում այս հարցը անփոփակ էր: Երկրի քաղաքական կուսակցությունները սատարել էին նախագահին, որ ապահովի դարաբաղյան խնդիրի կարգավորնան արդյունավետ ընթացքը: Բոլոր դժբեռում զարբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի երկու պետական կառույցների Աղրբեջանի Դայաստանության եւ ԼՂ փոլիսամածայնությամբ, առանց պարտադրանքի եւ արտաքին ճնշումների:

- Ինչպէ՞ս եք գնահատում քաղաքական զարգացումները Աղրբեջանուն կապված նախագահի ընտրությունների հետ եւ Դայաստանուն ենթադրվելով թեք քաղաքական աշնան առնչությամբ:

- Ներկա դրությամբ մեզ համար հարճար է Ալիեւի դիպլոմատիկ քաղաքականությունը: Ինձ թվում է, որ եթե Աղրբեջանի նախագահ ընտրվի ամենառադիկալ ընդդիմադիր դաշտի որեւէ ներկայացնություն, միեւնույն է, նրան ստիպելու ենք վարել նախորդի քաղաքականությունը: Բոլոր դեպքերում, մի քան չպետք է մոռանալ: Այսօր Ղարաբաղի անվտանգության երաշխիքը մեր պաշտպանական բանակն է: Եթե Աղրբեջանը համոզված լիներ, որ ռազմական գործողությունների վերահսկման դեպքում հաջողության կիասմի, նա վաղուց եր պատերազմ սկսել: Հենց նոյն Ալիեւ առանց երկընտրանքի պատերազմի մեջ կմտներ Ղարաբաղի հետ: Բայց օրնիբում պատերազմի կոչող Աղրբեջանի քաղաքական ուժերն անգամ գիտակցում են, որ իրենց համար անխուսափելի կլինի

պարտությունը եւ կորցնեն նոր տարածքներ: Տարածքների առնչությամբ չի բացավում, որ Վրաստանը եւս չօգտագործի առիթը: Նա եւս ունի տարածքային խնդիրներ: Աշխարհի գերտերությունների համար նույնպես շահավետ չէ տարածաշրջանում ուղանական գործողությունների վերակառումը: Այստեղ կան մի շարք խնդիրներ՝ ներդրումներ, նավթամուր եւ այլն:

Ինչ վերաբերում է Քայաստանում սպասվելիք քաղաքական գարգացումներին Կո՛մկրետ ընդդիմության մասին ասեմ, որ իմ կարծիքը նրա հանդեպ դրական լինել չի կարող: Ընդդիմություն, բարիս իսկական իմաստով, Քայաստանում չկա: Կան մի խումբ մարդիկ, որոնք կորցրել են իշխանությունը եւ ստիպված են այժմ ընդունել ընդդիմադիր կեցվածք: Այդքան մի բան:

- Πωρον Στελεχώματα, οι οποίαν πρέπει να αποτελούνται από τη συνδυασμένη δράση της Εθνικής Αρχής Αστυνομίας και της Εθνικής Φρουράς.

- Թեկուզ նիշայն այն փաստը, որ անցյալ դարի ութունականների վերջերին Լեռնային Ղարաբաղում տարեկան արտադրությունը է 170-180 հազար տոննա խաղող, շատ բան է ասում: Տնտեսական ոլորտում հաջողության հասնելու համար այսօր մեզանից նոր մոտեցում, նոր գործելակերպ է պահանջվում: Գյուղատնտեսության խթաննան համար պետք է նոր տարրերակներ եւ արդյունավետ միջոցներ որոնել: Ղարաբաղում ներկա պահին լայն թափ է առել սեփականաշնորհման գործընթացը: Եթե մենք ունենանք երկու խոչըն պետական ծեռնարկություն, թե՛ գործազրկությունը եւ թե՛ արտագաղթի խնդիրները կկարգավորվեն: Տեսրոր հացի գործարանում 75 մարդ էր աշխատում, սեփականաշնորհումից հետո մնաց 33-ը: Հոյզ նշակելու համար գյուղացին չունի գյուղտեխնիկա: Եվ արդյունքում, ահա ընդամենը 1.5 ամսվա ընթացքում ցորենի գինը 80 դրամից հասավ 130-ի: Մենք ծեռնամուխ ենք եղել վերաբնակեցման գործընթացին: Սա ողջունելի է: Բայց չպետք է նոռանալ, որ նախքան երկրի տնտեսական խնդիրների կարգավորումը՝ մենք դժվար թե առաջնահանգույթ կենաց ապահովենք երկրի կենսագործունեության այլ ոլորտներում:

Նվարդ ՕՐԱԿԱՆՅԱՆ
«Առաջ Արախ», 13 սեպտեմբերի, 2003:

«ՈՐԴԵԳՐԵԼՈՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԵՑՎԱԾՔ՝
ՉԻ ՎՏԱՆԳՎԻ ՆԵՐԵԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ»

Գտնում է կոմունիստների առաջնորդը

- Արցախի կոմունիստներն անհամդուրժելի են համարում այն ուժերի գործունեությունը, որոնք փորձում են պառակտում մտցնել հայ ժողովրդի երկու հատվածների միջեւ՝ անձնավորելով զրոյցի ժամանակ Հայաստանում նախագահական ընտրապայքարի ֆոնի վրա ընթացող քաղաքական զարգացումների վերաբերյալ իր նկատառումները հայտնեց ՀՂ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Յրանտ Մելքոնյանը: Սկզբունքային, ընդհանուր գաղափարական հարցերում հայկոմկուսի հետ լինելով միասնական, Արցախի կոմունիստները միաժամանակ չեն թարցնում իրենց անհամածայնությունները որոշ երեւույթների նկատմամբ: Նրանց, մասնավորապես, անհանգույցնում է այն կոմունիստների պահվածքը, որոնք ոչ կառուցողական վերաբերմունք են դրսեւորում գործող իշխանությունների հանդեպ, անտեսելով պետական շահը:

Լ Հ Կոնունիստների ղեկավարը գտնում է, որ 1988-ին սկիզբ առած առյային-ազատագրական շարժումը, հենց ազգի միամական ոգին մոլովդրոյին օգնեցին հաղթելու գոյապայքարում եւ համախմբելու համար հայությանը:Երբեք թույլ չպիտի տրվի, որպեսզի փոքր-ինչ խարսխի այդ ոգին: Ավելին, այսուհետեւ առավել սրափ վճիռներ պիտի կրակագնել, համախմբվել գործող նախագահի շուրջ, գորավիգ լինել պետականության ամրապնդմանը եւ համազգային խմբիրների լուծմանը: Երգիրը կառուցողական կեցվածք երկրում չի վստանգվի ներքաղաքական կայունությունը, -համոզմունք է հայտնութ կոմկուսի ղեկավարը:

(լո), առաջին հայացքից ոգեւորիչ թվացող կոչին: Ծտապողականություն չափութ է ցուցաբերել, մանավանդ, երբ խորինելու քիչ առիթներ չկամ: Վերջապես, չպետք է մոռանալ Եւ այն հանգամանցք, որ 16-ի մեջ գտնվեցին ուժեր, որոնք ժամանակին նպաստել են կոմկուսի պառակտմանը: Մերտորեն համագործակցելով իրենց գաղափարակիցների հետ՝ Արցախի կոմունիստները բարձր են զնահատում հայկոմկուսի ջանքերը դարաբաշյան հիմնախնդրի արդարացի լուծման գործում: Կործանարար համարելով Արցախն Աղբեջանի կազմում թողնելը՝ նրանք գտնում են, որ հակամարտությունը պետք է վերջակետել միմիայն խաղաղ ճանապարհով: Ըստ որում, առաջարկում են հարցի լուծման երեք տարրերակ՝ Վերամիավորում Հայաստանի հետ, անկախ պետականություն կամ եւ միացում Ուստաստանին սուբյեկտի կարգավիճակով: Հայտկանշական է, որ նրանք, հայաստանյան իրենց կուսակիցների պես, ժրագրային կարեւորագույն դրույթներից են համարում Ուստաստան-Բելառուս միության անդամակցելը:

Համարվելով համրապետությունում քաղաքական ամենաազդեցիկ կազմակերպություններից մեզը, որի անդամների թիվն անցնում է 3, հազարից, զարմանալիորեն ԼՂ կոմունիստներն իրենց ներկայացրուցիչները չունեն ինչպես խորհրդարանուն, այնպես էլ գործադիր իշխանությունում, չնայած երկրի տնտեսական, քաղաքական ու սոցիալական կյանքում ունեցած իրենց ակտիվ նախակցությանը: Զգուելով ձերքագատվել անցյալի նախապաշարություններից, հետադիմական կաղապարներից ու իին մեթոդներից, կոմունիստները ժամանակակից երեւոյթներն ու զարգացումները փորձում են դիտարկել նորովի, հարմարվելով իրողությունների հետ: Այդ առօւնով կոմկուսի գործունեությունն առավել շատ կառուցղական ընդդիմության տարրեր է պարունակում իր մեջ: Ու պատահական չէ, որ, կուսակցության դեկավարի կարծիքով, քանի դեռ դարաբարյան հիմնախնդրը քաղաքական իր վերջնական լուծումը չի ստացել, կոմունիստներն արմատական ընդդիմության կեցվածք չեն կարող ընդունել, ինչը կարող է միայն հարված հասցնել ԼՂ պետականությանը:

Ուշագրավ է, որ ԼՂ կոմունիստների տնտեսական ծրագիրը գրեթ չի տարբերվում գործող պաշտոնականից: Սասմակորապես, նրանք կողմնակից են, որպեսզի երկրում գործարկվեն պետական խոշոր ձեռնարկությունները: Օրինակ, նրանք գտնում են, որ Ղարաբաղի մետաքսի կոմբինատը պիտի վերականգնվի եւ ընդլայնի իր գործունեության

յրջանակները: Եթե արտադրության կազմակերպիչները կարողանան յաջ տիրապետել գործին, Արցախի հանրամանաչ մետաքսն անպայման կգտնի իր սպառման շուկան, որից ոչ քիչ եկամուտներ կարելի է ակնկալել: Կոմկուսն ընդհանրապես դեմ չէ տնտեսության բազմակացութանելությանը եւ հարցի շուրջ, անշուշտ, ունի իր նորացված մոտեցումներն ու առաջարկությունները:

ՈՒնենալով մեծ ներուժ ԼՂ կոմկուսը մեծ դերակատարություն ունի երկրու իրականացվող բարեփոխումներին ակտիվորեն նպաստելու գործում: Այդ նասին է վկայում հենց այն փաստը, որ անցյալ տարվա օգոստոսին կայացած ԼՂԴ նախագահական ընտրություններում կոնունիստները միանշանակ քվեարկել են Ա. Ղուկասյանի օգտին, իսկ լուսակցության մի խումբ անդամներ Ք. Մելքոնյանի հետ ստանձնել են գործող նախագահի վստահված անձի պարտականությունները: Վերցրած ընդունելով կոմկուսի պատվիրակներին, ԼՂԴ նախագահ Արկադի Ղուկասյանը, գոհունակություն հայտնեց Երկրի քաղաքական դաշտի ձեւագործան գործում կոմունիստների ունեցած ծանրակշիռ ավանդի համար, հույս հայտնեց, որ այսուհետ եւս նրանք ակտիվորեն կաջակցեն ԼՂԴ անկախության ամրապնդմանն ու միջազգային ճանաչմանը, կնպաստեն տնտեսության վերականգնմանն ու սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:

Համոզնունք հայտնելով, որ հաջորդ խորհրդարանական ընտրություններում կոմկուսն անպայման մանդամներ կապահովի եւ Ազգային ժողովում կունենա իր ստվար քվաքանակով խմբակցությունը, ԼՂ կոմունիստների ղեկավարը միաժամանակ նշեց, թե համաճամական ընտրակարգի ներմուծումը ԼՂԴ ընտրական օրենսդրության մեջ, իսիստ կուլազեցնի բախտախնդիրների բափանցումն օրենսդիր մարմին: 2003թ. կոմկուսը մտադիր է իր համար կայուն հենարան ստեղծել Երկրում վերականգնեց կոմերիտմիության գործունեությունը:

Ղափիր ՄԻԹՍՅԵԼՅԱՆ
«Հայաստանի Համրապետություն»
16 հունվարի, 2003թ.

ԼԵՇՆԱՅԻՆ ՊԱՐԱԲՈՐ ԿԱՐՈՂ Է ՀԱՅՏՆՎԵԼ ԵՎՐԱՄԻՌԻԹՅԱՆ ՀՈՎԱՆԻՇ ՆԵՐՔԸ

«Իմ համոզմամբ, ներկա պահին, թերեւս, ամենաընդունելի տարրերակով, վճիռն այն կլիմեր, եթե մինչեւ հակամարտության վերջնական կարգավորումը, ընդհուպ՝ կարգավիճակի խնդրով ՀՂ հանրաքվեի անցկացումը, Լեռնային Ղարաբաղը հայտնվեր Եվրամիության հովանու ներքո: Այլ կերպ ասած, Լեռնային Ղարաբաղը ունենա Եվրամիության հաստուկ տարածքի կարգավիճակ, որտեղ կգործեն ԵՄ օրենքները»,- այսպիսի կարծիք է հայտնել լրագրողներին հետ ունեցած գրուցի ժամանակ Արցախի Կոմկուսի առաջին քարտուղար, քաղաքագետ Դրանտ Մելքոնյանը՝ մեկնարանելով իհմնախնդրի հետ կապված քաղաքական վերջին գարգացումները:

Նման նոտեցումը նա միանգամայն արդարացված է համարում՝ տարածաշրջանում կայունության եւ խաղաղության ապահովման, ԼՂՀ տնտեսության զարգացման առումով՝ գտնելով, որ Եվրամիության անդամ պետությունները, եթե, իրոք, շահագրգուված են լավ նախադեպ ունենալ հակամարտությունների լուծնան գործում, ձեռքից չպետք է բաց թողնեն ընծեռնված բացառիկ հնարավորությունը:

Պարոն Մելքոնյանի խոսքերով, չնայած միջնորդների այն հավաստիացումներին, թե իհմնախորի կարգավիրման նպատակով իրենք պատրաստ են աջակցելու Դայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին գտնելու հակամարտության հանապարփակ լուծում, տվյալ փուլում հազիվ թե եական առաջխաղացում լինի, քանի որ երկարատեւ, ծգծպող, գրեթե անպտուղ բանակցություններն ամենեւին լավատեսություն չեն ներշնչում: Խսկ խանգարիչ գլխավոր հանգամանքը, նրա համոզմամբ, պարտվողական գործոնն է. «Եվ որպեսզի երկու կողմն էլ իրենց պարտավորված չզգան բանակցություններում», քաղաքագետը միանգամայն իրատեսական է համարում Լեռնային Ղարաբաղի տարածքը Եվրամիությանը ենթարկելու տարրերակը:

ԼՂՀ կոմկուսակցության ղեկավարի դիտարկումը բավականին ուշագրավ «ենթադրություններ» է պարունակում իր մեջ՝ կապված կողմե-

րի պարտվողական մտավախության հաղթահարման հետ, եւ այսօր առանձնակի հնչեղություն կարող է ունենալ: Խնդրին ավելի է կարեւոր լուս, երբ Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Փիթեր Անմերիկի հավաստմամբ, Եվրոպական միջազգային այդ հեղինակավոր կառույցը նույնիր է առաջիկայում «ամրապնդել կապերը Լեռային Ղարաբաղի» հետ, ինչը կարող է մեծապես նպաստել հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Քաղաքագետը հիշեցրեց, որ 1988-ին, երբ գագաթնակետին էր հայության շարժումը, նույնպես շրջանառվում էր իր առաջարկին համանման տարրերակ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես ևնթարկել Ռուսաստանի Դաշնությամբ: Տավոք, ծախողվեց, որովհետեւ հստակ չէր հայկական կողմի շահագրգուվածությունը: Առաջարկ, որն այդպես էլ ննաց որպես գաղափար: Եվրամիության պարագայում ։ Աելքումյանը միանգամայն իրագործելի է համարում իր առաջարկը, քանի որ անվերապահելիորեն կարելի է վստահել իհշված կառույցին, «որովհետեւ ԵՄ-ը ժողովրդավարական իհմունքներով ստեղծված պետությունների միավորում է, գործում է կոմսենսուսով եւ ունի մեծ հեղինակություն վայելող խորհրդարան»:

Անդրադառնալով փախստականներին մշտական բնակավայրեր վերադարձնելու խնդրի հանակարգմանը, ։ Մելքոնյանը նշեց, թե գործնքացը կիրականացվի տոկոսային հարաբերությամբ: «Չնարավոր է, որ աղբբեջանցինները վերադառնան ու ապրեն Ղարաբաղում: Սակայն պիտի հաշվի առնվի մի կարեւոր հանգամանք՝ քանի բռնագաղթած հայ վերադառնա Աղրբեջան, նույն քանակությամբ աղբբեջանցի փախստականների պետք է ընդունի Ղարաբաղը»,- իր կարծիքն այսպես ընդիամուցրեց ԼՂՀ կոմկուսի ղեկավարը:

Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
«Ազատ Արցախ», 23 դեկտեմբեր, 2006թ.

«ԳՏՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ՉԵ, ՈՐ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԴՐԱԽՏ ԴԱՐՁՆԻ, ԱՅԼ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՅՆ ԴԺՈՒՔ ՉԴԱՌԱ»

Մեր հարցագրույցը ԼՂՀ կոնսոնիստական կուսակցության
ղեկավար Յրանտ Մելքոնյանի հետ

- Պարոն Մելքոնյան, ինչպիսի՞ն է ձեր կուսակցության դիրքորոշումը Սահմանադրության նախագծի վերաբերյալ: Ունե՞ք կոնկրետ առաջարկներ:

- Մահմանադրական հանճնաժողովի անդամ եմ, մեր կուսակցության դիրքորոշումները ներկայացվել են սահմանադրական հանճնաժողովի նիստերում: Յամարյա բոլոր հարցերը, որոնք բարձրացվել են մեր կողմից, ընդունվել են, բացի մեկից, որի ընդունումը, իմ կարծիքով, անհրաժեշտ է: Խոսքը վերաբերում է ԼՂՀ քաղաքացիների աշխատանքի իրավունքին: Անգամ համաձայնվել են նախագծում նույնել այսպիսի տարրերակ՝ ԼՂՀ քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, որը կարգափորպում է հատուկ օրենքներով: Բայց դա էլ չի անցել: Ընդունված առաջարկները հիմնականում սոցիալական հարցերի հետ են կապված: Իհարկե, մենք Սահմանադրության յուրաքանչյուր մի նամրութ պետք է լավ պատկերացնենք ու ճիշտ ամրագրենք: Գտնում եմ, որ պետությունը նրա համար չէ, որ մեր կյանքը դրախտ դարձմի, այլ նրա համար, որ այն դժոխվ չըառնա:

Իհարկե, մեր Սահմանադրությունը պետք է տարբերվի նյոււ պետությունների սահմանադրություններից, հաշվի առնելով Ղարաբաղի ներկայիս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» վիճակը, աշխարհաքաղաքական դրությունը:

- Ձեր կարծիքով, նախագիծն ապահովու՞ն է իշխանության թեւերի իրավասությունների հավասարակշիռ բաժանումը: Որքանո՞վ եք ճիշտ համարում այն, որ վարչապետին նշանակում է ոչ թե խորհրդարանը, այլ նախագահը:

- Կարելի է ասել՝ Եւ ապահովում է, Եւ՝ ոչ: Խոսքը եթե վերաբերում է դատական իշխանությանը, ապա ամեն ինչ նորմալ է: Սակայն կա մեկ երեւություն: Խորհրդարանի քաղաքական ուժերը դեմ են արտահայտվում

նրան, որ վարչապետին պետք է նախագահը նշանակի: Իմ կարծիքով կարեւոր չէ, թե ով է նշանակում վարչապետին: Եթե խորհրդարանը չի ուզում, որ տվյալ անձը լինի վարչապետ, ապա Սահմանադրությամբ անրագրված լժակներով կարող է ազդել, ասենք կառավարության ծրագիրը կարող է ընդունվել եւ այլն: Այստեղ ավելի շատ քաղաքական ուժերի եսամոլությունն է խոսում, եւ դա ավելորդ քաղաքական հարայ-հրոց է:

Սահմանադրության նախագծում, եթե ծանոթացել եք, նկատելի է ուղղահայաց իշխանության երեւալը: Եթե խորը մտածենք, ապա Սահմանադրությունը կարող է դենուկրատական սկզբունքներին լիարժեք չիամապատասխանել, սակայն մեր դեպքում, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակում, այլ հանգամանքներ էլ պետք է հաշվի առնենք: Աշխարհաքաղաքական վիճակից ելնելով, ես այս մեխանիզմները ճիշտ եմ գտնում: Եթե գործադիր իշխանությունը մեկ ճարդու ձեռքին չինի, ապա վազը կամ մյուս օրը հնարավոր է քառսային վիճակի ստեղծում:

Սա համարում եմ անցողիկ Սահմանադրություն, մինչեւ մեր պետության իսկական կայացումը: Սահմանադրությունը անհրաժեշտ է ճիշտ ներկայացնել ժողովրդին, որպեսզի քվեարկման ժամանակ նա իմանա ինչի համար է քվեարկում, քանի որ Սահմանադրությունը հանդիսանում է ժողովրդի եւ պետության իրավունքների եւ պարտականությունների հիմնական փաստաթուղթը: Սա կարեւոր խնդիր է: Սահմանադրությունը եւս մեկ քայլ է՝ իր թերություններով հանդերձ:

- Որքանո՞վ կլինեն, Ձեր կարծիքով, երաշխավորված մարդու իրավունքները, եթե ընդունվի Սահմանադրության այս նախագիծը: Յակասություն չկա՝ մարդու իրավունքների ապահովման եւ ռազմական դրության ռեժիմի միջեւ:

- Եթե ռազմական դրության մասին օրենքը սկսում է գործել, ապա մարդու իրավունքների մասին խոսելը ինչ-որ տեղ տարօրինակ է դաշնում: Իսկ, ընդհանրապես, մարդու իրավունքները՝ ողջ կոնտեսանով, որ ներկայացված են նախագծում եւ երաշխավորված են, հիմնականում համապատասխանում են ՀՀ Սահմանադրության նույն դրույթներին:

Իսկ ինչ վերաբերում է հակասությանը, ապա եթե ռազմական դրության մասին օրենքը չգործի՝ հակասություն չի լինի:

- Նախագծում, ըստ կոմիտուսի տեսակետի, պետք է ամրագրվեն ԼՂՀ փաստացի սահմանները:

- Կա «Վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ օրենք, որով կարգավորվում են այդ բոլոր հարցերը: Ես համաձայն եմ, որ սահմանները պետք է անրագրվեն, նախագահը պետք է երաշխավորի այդ սահմանների անձեռնմխելիությունը: Բայց այսօր, աշխարհաքաղաքական ներկա պայմաններում, ամրագրել սահմանները, ին կարծիքով, անհամատ է:

- Ի՞նչ եք կարծում, Սահմանդրության ընդունումը կապված է հաջորդ տարի նախատեսվող նախագահական ընտրությունների հետ:

- Նախագահն այդ պաշտոնը զբաղեցնում է 5 տարի: Պաշտոնավարման ժամկետն ավարտվելուց, նախագահական ընտրություններ պետք է անցկացվեն՝ անկախ Սահմանդրության ընդունումից: Ի՞նչ կապ ունի Սահմանադրությունը դրա հետ: Կարծում եմ, ոչ մի կապ էլ չունի, ի վերջո՝ մեկը պետք է, չէ, այդ Սահմանադրության տակ ստորագրի:

**Անական ԱԱՆԻՇԵԱՆ
«Դեմո», 30 սեպտեմբեր, 2006թ.**

«ԵՍ ԻՄ ԿԱՅՈՒՄ ԸՆՏՐԱԶԱՆԳՎԱԾՆ ՈՒՆԵՄ»

Ասում է կոմունիստների ղեկավար Հրանտ Մելքոնյանը

Յուլիսի 19-ին կայանալիք ԼՂՀ նախագահական ընտրություններում երկրի կոմունիստները գերստին առաջադրել են ԼՂՀ ԿԿ ղեկավար Հրանտ Մելքոնյանի թեկնածությունը:

Հրանտ Մելքոնյանի քաղաքական սկզբունքներն են՝ սոցիալական արդարության եւ հավասարության վրա հիմնված ժողովրդավարությունը, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, ԼՂՀ անկախության միջազգային ճանաչումը:

- Ի՞նչ վերաբերում է մյուս առաջնահերթություններին, ապա կցանկանայի ընդգծել, որ իմ գործունեության հիմքում հաստատում իր տեղն ունի Արցախում ապրող մարդու ճակատագիրը, արժանապատիկ ապրելու նրա իրավունքը, - գտնում է նախագահի թեկնածուն:

Նրա կարծիքով, ինչպես ամրագրված է եւ նախընտրական ծրագրում, առաջիկա 5 տարիների ընթացքում երկրի ղեկավարության գերխնդիրը պիտի հանդիսանա ժողովրդի կենսամակարդարակի քարձրացունը:

Անդրադառնալով ՀՀ եւ ԼՂՀ միջևն համագործակցության հետագա խորացման հեռանկարներին եւ ամենասահմելի հանարելով՝ Արցախին բարոյական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, Յ. Մելքոնյանը շեշտեց. «Չպետք է մոռանալ, որ Ղարաբաղը Հայաստանի որուն է, նրա գոյության հուսալիության թիկունքը»:

Նախագահի թեկնածուի կարծիքով, վաղուց է եկել պահը, որպեսզի աշխատավարձերի եւ թոշակների մասով լուրջ փոփոխություններ արձանագրվեն բյուջեում, քանի որ նվազագույնին եւ առավելագույնին տարրերությունները տեղից են տալիս բարոյահոգեբանական լուրջ խորությունը... .

Դ. Մելքոնյանը գտնում է, որ աշխատանք չունենալը, ցածր աշխատավարձն ու ամնշան թոշակը ժողովրդի մի ստվար մասին պարզապես հուսալության կարող են մղել:

«Ստացվել է մի իրավիճակ, եթե խորհրդային ժամանակների կուսակցական եւ խորհրդային մարմինների աշխատողների, նույնիսկ առաջին դեմքերի թոշակի չափը բազմակի անգամ ցածր է, քան նրանց ենթակայության տակ աշխատողներինը, ինչն իմ համոզմամբ՝ արդարացված չէ»:

Եվ նախագահի թեկնածուն առաջարկում է նման հարցերի կարգվորումը հնարավորինս արագացնել, ինչին սպասում են հասարակ մարդիկ:

Հրանտ Մելքոնյանը, տարակուսանք հայտնելով այն նտայնության առնչությամբ, թե նախագահական ընտրություններում նախագահի միասնական թեկնածուին պաշտպանելու են, այսպես ասած, եւ «ընդդիմության թեփ» կուսակցությունները, փորձեց երեւութի վերաբերյալ շարադրել իր տեսակետը.

- Դինգ տարի շարունակ ՀՅԴ եւ «Շարժում-88» քաղաքական ուժեղ քննադատում են գործող իշխանություններին ու, ահա, հանկարծ նրանք հաճատել հայտարարություն են անում միասնական թեկնածուին սատարելու մասին: Չեմ հասկանում, այդ հ՞նչ ընդդիմադիր կուսակցություններ են, որ այսօր կտրուկ փոխել են իրենց քաղաքականությունը: Ի՞նչ է ստացվում, այսօր երկում գործող միակ ընորդիմությունը կոնքունիտական կուսակցությունն է: Ինչ խոսք, ընտրարշավի ժամանակ ես իմ կայուն ընտրազանգվածն ունեմ եւ ոչ չի կարող խանգարիչ ուժ հանդիսանալ: Բայց, բոլոր դեպքերում, արձանագրված տիսուր փաստը խորհելու առիթ է տալիս...

Հրանտ Մելքոնյանի նախընտրական ծրագրում դարաբաղյան հիմնախնդիրը, բնականաբար, առանձնահատուկ տեղ ունի: Նրա համոզմանք այն պետք է լուծվի ԵՎՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ քաղաքական քանակցությունների միջոցով, որոնց հիմքում պիտի դրվի ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

«Պետք է հասնել նրան, որպեսզի Աղրբեջանը ետ կամգնի Արցախի ժողովովի ազատ ինքնորոշման սկզբունքը Հայաստանի կողմից հողային պահանջատիրությամբ նենգափոխելու հայեցակարգից եւ գործելակերպից: Բանակցություններուն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին որեւէ համաձայնագիր չի կարող ընդունվել՝ առանց դարարադայան կողմի, արցախահայության համաձայնության», - այս կարծիքին է ԼՂՀ նախագահի թեկնածու Յ. Մելքոնյանը:

Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
«Հայաստանի Դանրապետություն», 2007թ.

«ԾԻՏԸ ԵՐԱԶՈՒՄ ԿՈՐԵԿ ԿՏԵՍՆԻ»

Մեր թղթակցի հարցերին պատասխանում է
քաղաքագետ Դրանտ Մելքոնյանը

- Պարոն Մելքոնյան, դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում աղրբեջանական իշխանություններն անընդիատ պնդում են, որ աղրբեջանցի փախստականները պետք է վերադառնան իրենց նախկին բնակավայրերը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը: Մակայն նրանք երբեք չեն խոսում հայ քննազարդվածների վերադարձի մասին: Ի դեպ, ինչքան գիտեմ, այդ մասին մինչեւ հիմա խոսք չեն ասել նաև Մինսկի խմբի համանախագահները: Չեր կարծիքով, արդյո՞ք, հնարավոր է փախստականների վերադարձը նախկին բնակավայրերը: Եվ հետո՝ Աղրբեջանի իշխանություններն իրենց կա՞մքն են թելադրում, թե՞ իրոք փախստականների ցանկություններն են հայտնում:

- Փախստականների վերադարձը բոլոր ժամանակներում եղել ու մնում է որպես շատ նրբանկատ խնդիր հակամարտող կողմերի միջև: Դա առավել եւս այդպես է մեր պայմաններուն: Յուրաքանչյուր ոք պետք է եւ պարուսավոր է մարդկայնորեն ըմբռնել ու գիտակցել այն մարդու ցավու ու կսկիծը, ով ստիպված է եղել թողնել իր բնորրանը՝ այն գյուղը կան քաղաքը, ուր ծնվել, մեծացել, հասակ է առել ինքը: Մարդ, որ ուրիշների է թողել իր տունն ու տեղը, դարձել թափառական եւ այսօր մի կտոր հաց կաստակելու համար ստիպված է մեւկին ու մյուսին խնդրել: Դա անկախ նրանից, թե ովեր են այդ փախստականները եւ ինչ ազգության: Այդ առունուկ՝ երեւի թե ծիշտ է Աղրբեջանի պահանջը: Մակայն նման պահանջատիրությունը պետք է ունալ հիմքեր ուժենա: Պահանջողը պետք է հաշվի առնի, ինքն իրեն հարցնի՝ հնարավո՞ր է, արդյոք, որ իր պահանջը կատարվի:

Փախստականների վերադարձի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ նրանք պատրաստականություն են հայտնում վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Իսկ եթե ոչ, ուրեմն, պետք է նտածել նրանց տեղափորձան եւ կենսապահովման պայմաններով պաֆակելու մասին: Այս, մինչեւ հիմա գործեք չի խոսվել հայ քննազարդվածների վերադարձի մասին, ոչ ոք չի ասել, թե նրանք պետք է վերադառնան Սուլգայիթ, Բաքու, Կիրովաբադ, Շահումյան եւ այլուր: Միայն Յուրի Մերզյակովը մի անգամ երեւանում նշել է, որ Մինսկի խմբի համանա-

խազահները փախստականների հարցում, ազգային պատկանելիության տեսանկյունով, տարբերություն կամ խորականություն չեն դնում եւ ուզում են ամեն կերպ նպաստել նրանց՝ իրենց նախակի բնակավայրերը վերադառնալուն: Իսկ ֆրանսիացի Բեռնար Ֆասիեն ընդգծել է, որ փախստականների վերադառնությունը լուրջ նախապատրաստական աշխատանքներ է պահանջում:

Եվ դա այդպես է, քանի որ այդ գործընթացում հազարավորներ են /տղամարդիկ ու կանայք, ծերեր ու երեխաներ/ տուժել, ամենաանտանելի խոշտանգումների են ենթարկվել, տուն ու տեղից են գրկվել, խոշտանգված, մորթված հարազատներ են տեսել: Եվ այսօր, երեւի, ոչ ոք հրավունք չունի այդ ամենը մոռանալու, առանց սպասվելիք հետեւանքների նաև մտածելու, պատճառ դառնալու, որ մարդիկ նորից վերապրեն այն սոսկային ու սարսափելին, ինչը մի անգամ տեսել են: Նման ծետվ վարվելու ոչ ոք հրավունք չունի:

Փախստականների վերադառնության մասին նաև առաջ իրենց պետք է հարցնել: Խոսեցք Սումգայիթից, Բաքվից, ադրբեջանական մյուս բնակավայրերից բռնագաղթվածների հետ եւ կհամոզվեք, որ նրանցից եւ ոչ նեկոն էլ, որքան էլ վաստ պայմաններում ապրելիս լինի այժմ, երբեք չի ուզենա իր նախկին բնակավայրը վերադառնալ, քանի որ ոչ ոք էլի չի կամենա նորից ու նորից ականատեսը լինել այն սարսափերին, ինչից մի կերպ մազապուրծ են եղել: Դամոզված եմ՝ այդպես են մտածում նաև ադրբեջանցի գաղբականները: Նրանց վերադարձի մասին հարցը միայն հարեւան հանրապետության իշխանավորներին ու դիվանագետներին է անհանգստացնում, ովքեր իրենց վերջնական նպատակին հասնելու համար ոչ մի միջոցի առաջ չեն ուզում կանգնել:

- Բերված փախստարկներից բացի, կա՞ն նաև այլ պատճառներ, ուրունք, այսօրվա դրությամբ, այս կամ այն կերպ խոշընդուռում են փախստականների վերադառնության մասին անհնար են դարձնում այն:

- Ոչ միայն մենք՝ հայերս, այլև իրենք՝ ադրբեջանցիներն էլ պիտի գիտակցեն, որ իրենց իրենց մեղքով մեր Վզին փաթաթված պատերազմի հետեւանքով ինչ վնաս է հասցվել Արցախին: Պատերազմի տարիներին ադրբեջանական հրոսակները բարութանդ են արել Արցախի գրեթե բռլոր բնակավայրերը, ավերել են հանրապետության բնակչությունը զգակի մասը: Այսօր իրենց երջանիկ են զգում նույնիսկ այն բոլոն դարաբաղցները, ում հաջողվում է սեփական տնատեր դառնալ: Իսկ ի՞նչ կարելի է ասել Ադրբեջանից բռնագաղթված հազարավոր հայերի ճակատագրերի

մասին: Մտածու՞մ են Բաքվում այդ մասին: Չե որ արդեն շուրջ 20 տարի է, ինչ նրանցից շատերը շարունակում են ապրել հանրակացարաններում, վագոնատնակներում, նկուղներում: Դետաքրքիր է, եթե հարցը նունիսկ դրականորեն լուծվի, ապա որտե՞ղ պետք է տեղափորել ադրբեջանցի փախստականներին: Հէ՞ որ բնակարաններ չկան:

Մենք հակված ենք մտածելու, որ Ադրբեջանը կխսուտանա ամեն հնարավորություն ստեղծել հարցը կարծ ժամկետում հասնելու Ղարաբաղում լայնամաշտաք շինարարություն ծավալելու իրենց վերջնական նպատակին, իհարկե, երբեք չմոռանալով իր Արցախում նորից արմատակալելու և «հայ գյավուրներից» երկիրն ագատելու մոլուցքը: Մենք հրավունք չունենք մոռանալու հայ սպայի կացնահարումը Եվրոպայի կենտրոնում կամ հայ լրագրող Շինքի սպանությունը: Ինչպես նաև այն, որ հայ սպայի կացնահարող Սաֆարովը Ադրբեջանում հայտարարվել է տարվա լավագույն մարդը: Քի՞չ են ննանները հարեւան հանրապետությունում, ովքեր հարմար առիթներ են որոնում հայերի նկատմամբ ի ծնն ունեցած իրենց վրեժինդրությունը կիրառելու համար: Նման հնարավորությունը անհարկելիորեն կստեղծի ադրբեջանցի փախստականների վերադառնությունը հարաբար նարարատ:

Զպետք է կասկածել, որ նման վրիժառուներ կգտնվեն նաև հայերի մեջ:

Եվ դա նիանգամայն հասկանալի է: Այդ նրանք են, ովքեր դեռ չեն մոռացել ու, կարծում են, որ երբեք էլ չեն մոռանա այն բռլոր տառապանքներն ու խոշտանգումները, որ կրել են Սումգայիթում, Բաքվում, Ադրբեջանի այլ բնակավայրերում: Դամոզված եմ, որ նրանց մի մասն էլ սպասում է իր «աստեղային» ժամին՝ վրեժինդր լինելու համար: Ասել է թե՝ փախստականների վերադառնությունը անկանխատեսելի հետեւանքներ կունենա թե ադրբեջանցիների և թե հայերի համար: Այս գործընթացով ավելի ու ավելի մեծ չափերի կիասմեն բռնությունն ու ատելությունը, թշնամանքը երկու ժողովուրդների միջեւ: Բոլորովին վերջերս էր, որ Ադրբեջանի ֆուտբոլի Ֆեդերացիայի նախագահը հայտարարել է, թե ադրբեջանցիների և հայերի միջեւ գոյություն ունեցող թշնամանքն իրենց հնարավորություն չի տալիս երկու երկրների թիմերի միջեւ ֆուտբոլային հանդիպումներն անցկացնել ոչ Բաքվում եւ ոչ էրեւանում: Այս կարծիքին են Ադրբեջանի գրեթե բոլոր իշխանավորները: Իսկ այդ ժողովուրդների համատեր կամքն ապահովելու համար կա՞ն, արդյոք, համապատասխան երաշխիքներ:

Ուրեն՛՝ եթե կա այդ թշնամանքն ու ատելությունը մեկը մյուսի նկատմամբ, դրան գումարած վերադարձող փախստականներին գոմե նվազագույն պայմաններով ապահովելու հնարավորության բացակայությունը, իմ կարծիքով, այդ գործընթացը դարձնում են ոչ հնարավոր եւ ոչ էլ նպատակահարմար: Այդ բանը շատ լավ են հասկանում նաեւ աղոթեցանական իշխանությունները: Դասկանում են, բայց եւ այնպես, ինչպես ժողովուրդն է ասում՝ իրենց էշն են քշում:

- Կա նաեւ մի ուրիշ հանգամանք: Խոսելով գաղթականների հնարավոր վերադարձի մասին, աղոթեցանական իշխանություններն առաջին հերթին նկատի են ունենում Շուշին: Այն աղոթեցանցիններով վերաբնակեցնելու մասին շատ է երազել նաեւ Շեյշար Ալիեր:

- Ժողովուրդի մեծ տարածված է հետեւյալ ասույթը. «Ով տիրի Շուշին, նա կտիրի նաեւ ողջ Ղարաբաղին»: Այս թե ինչ նպատակներ են հետապնդում աղոթեցանական իշխանությունները: Նրանք մտածում են, որ ազգինների ազատ բնակության ապահովումը Շուշիում իրենց հնարավորություն կտա ի վերջո փոխել բնակչության երնիկական կազմը՝ հօգուտ իրենց / ինչպես դա արվել է նախկինում/: Այդ դեպքում նրանք կարող են ոչ միայն վերջ տալ Լեռնային Ղարաբաղի ամկախությանը, այլև այն կիասցնեն նախիցեւանի վիճակին: Ինչպես ասում են՝ «Ժիտը երազում կորեկ կտեսնի»:

Դ. ԻՇԽԱՆՅԱՆ
7 հունիս, 2007թ.

ՀՐԱՍՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.

«ՍՈՑԻԱԼԻՉԱԲ ԱՅԼԵՆՏՐՈՎԱՆ ՀՈՒՆԻ»

Արցախի քաղաքական դաշտում Կոմկուսը ամենահիմն կուսակցություններից է: Երբեմնի հզորագույն, ըստ եռթյան դրության միահեծան տեր քաղաքական ուժն այսօր ընդամենը Արցախի քաղաքական դաշտի բազմաթիվ կուսակցություններից է, որը, սակայն, ըստ նրա դեկավարի, լավատեսությամբ է լցված, քանզի սոցիալիզմը, ի վերջո, այլ ընտրանք չունի եւ ողջ մարդկությունը, այսպես թե այնպես, այդ ճանապարհով է գնալու:

Այս, մեր քաղաքական դաշտում Կոմկուսի դերի եւ առաջիկա նախագահական ընտրությունների նրա մասնակցության հարցերի շուրջ գրուցեցինք ԼՂՀ կոմկուսի դեկավար Շրանտ Մելքումյանի հետ:

- Ինչպես ցույց է տալիս պատմությունը, կոմունիստական կուսակցությունը միշտ էլ ունեցել է գիտա-գաղափարական հիմք, որը ժամանակի ընթացքում ամրապնդվել է ու կարծրացել անհրաժեշտ փորձով, այս նախարանով սկսեց իր գրույցը Կոմկուսի դեկավարը:

- Աշխարհում համարյա թե չկա մի երկիր, որտեղ չլինի կոմունիստական կուսակցություն, եւ շատ առաջավոր պետություններում կոմկուսը լուրջ մասնկացություն է ունենում երկրի կառավարման գործին: Անշուշտ, գիտեք, թե ինչ չափով են մերկայացված կոմունիստները, օրինակ, իտալիայի եւ կամ Ֆրանսիայի խորհրդարաններում՝ չխոսելով արդեն Ռուսաստանի մասին, որտեղ համարյա յուրաքանչյուր ընտրություններում կոմկուսը երկրորդ տեղն է գրավում: Այսինքն՝ ի թիվս այլ առավելությունների, կոմկուսը նաեւ ցանկացած երկրի քաղաքական դաշտի կարծերագույն ուժերից է, քանի որ լրանում է այդ դաշտի գաղափարական մի՝ ծախ հատվածը, որտեղ արտահայտված են հասարակ մարդկանց շահերը:

Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը, լինելով հավատարին իր ծրագրային դրույթներին, միշտ էլ հետամուտ է եղել սոցիալական արդարությանը, սոցիալական բնույթի հարցերի սատարն է եղել: Ցավոք սրտի, նման բնույթի շատ հարցեր իրենց լուժումը չեն

ստանում, որովհետեւ ԽՍՀՄ-ի վլուզման արդյունքում, կորցնելով երթաճնշի տնտեսական կապերն ու երաշխիքները, մեր պետությունը հայտնվել է տնտեսապես ոչ նպաստավոր պայմաններում: Մասնավորապես չկա արդյունաբերական հզորություն, գյուղատնտեսության զարգացման մակարդակը գտնվում է խիստ ցածր Ծիչի վրա: Խոսք չկա, այս պարագայում պետությունը սոցիալական անապահով խավերին նպաստներ է հատկացնում, բայց դրանք էլ, իրենց հերթին, չնշին են եւ չեն կարող բնակչության ապահովության հիմք հանդիսանալ:

Անեն դեպքում մենք մշակում եւ մատուցում ենք մեր առաջարկություններն ու մոտեցումները, որոնց գգալի մասը կյանքի է կոչվում, սակայն, այնուհանդերձ արձանագրենք, ինարավոր չէ այսօրվա մեր տնտեսական հզորությամբ հասմել նրան, որ մարդիկ լինեն սոցիալապես պաշտպանված այնպես, ինչպես դա եղել է ԽՍՀՄ տարիներին:

Ուզում եմ հանգումունքս հայտնել առ այն, որ սոցիալիզմը, վերջիվեցոյ, հաղթելու է ողջ աշխարհում, որովհետեւ դա է մարդկության ապագան: Սոցիալիզմի շվեդական նորմելը կլինի, թե մի այլ ձեւ՝ կարեւոր չէ: Տեղին եմ համարում մեջքերել Ֆինլանդիայի խոսքերն այն մասին, որ եթե հեարավոր է մեռքի ափով արեւի խավարում արարել, ուրեմն հնարավոր է նաեւ մերժել մարդսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը:

- Ծուտով՝ Արցախում կկայանան նախագահական ընտրությունները: ԼՇՅ ԿԿ կմասնակցի՝ այդ կարեւորագույն իրադարձությամբ եւ, եթե այո, ապա ի՞նչ կերպ՝ սեփական թեկնածու կառաջադրի, թե՝ կստարի մեկ ուրիշիկ եւ ի՞նչ սկզբունք կորդեգրի այս դեպքում:

- Կարծում եմ, որ դեռ վաղ է այդ նասին հանգանանալից խոսելը, քանի որ դեռեւ չկա համապատասխան որոշում ընտրությունների օրվա եւ քարոզարշավի մեկնարկի մասին: Այնպիսի պատմություն եւ պոտենցիալ ունեցող կուսակցությունը, ինչպիսին կոմկուսն է, պետք է մասնակցի ընտրություններին սեփական թեկնածուով: Բայց եթե այս տարբերակը չլինի էլ, մենք, իմ կարծիքով, կստարենք այն թեկնածուին, որը կունենա ճկում ու ժողովրդաճետ քաղաքանություն ու նրա գործունեության հիմքը, ելակետը, անշուշտ, Արցախի հարցը պիտի լինի: Կարծում եմ՝ կոմկուսը պիտույք կիրավիրի, որտեղ էլ Արցախի կոմունիստները որոշում կկայացնեն առաջիկա նախագահական ընտրություններում Արցախի կոմկուսի մասնակցության ծեւաչափը:

- Չեր նկատառումները մեր քաղաքական իրողությունների վերաբերյալ:

- Ցավոք սրտի, Արցախի քաղաքական դաշտում խիստ սակավաթիվ են գաղափարական կուսակցությունները: Մինչդեռ հնարավոր չէ պատկերացնել քաղաքական ուժն առանց գաղափարախոսության: Անգաղափար կուսակցությունները չունեն եւ չեն կարող ունենալ ապագա: Կուսակցությունները, եթե անգամ ունեն եւ գաղափարախոսություն, ապա պետք է դրա հիմքուն ունենան հասարակ մարդկանց շահերի պաշտպանության սկզբունքը, մոտեցումը, այլապես դարձյալ դատապարտված են անհաջորդության, ինչի ապացույցը ՌԴ-ի օրինակն է: Տեսա՞բ՝ ինչ կատարվեց մի շարք լիբերալ կուսակցությունների հետ:

Ասվածի հետ աղերսներ ունի նաեւ մեր խորհրդարանը՝ նրանում մի բանվոր էլ չկա, որ պաշտպանի իր նմանների շահերը: Ու ոմանք դեռ դժգոհում են, թե կոմկուսի իշխանության տարիներին ընտրություններում ընդամենը մեկ թեկնածու էր լինում: Այո, մեկն էր լինում, բայց նրա առաջարրումն ու թեկնածությունը համաձայնեցվում էր հասարակության բոլոր օղակների հետ:

Կարեն Միրզոյան
«Պավատ», մարտ, 2007թ.

ԻՐԱՎԻՆԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ, ԼՂ ճԱՆԱՇՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Եղիշե Սարգսյանի հարցազրույցը ԼՂ կոմկուսի Կենտկոմի
առաջին քարտուղար Դրանտ Մելքոնյանի հետ

- Դրանտ Արտեմի, Ձեր կարծիքով ինչպիսի՞ն է աշխարհաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում, որի մեջ են մտնում նաև Հայաստանի Հանրապետությունը եւ Լեռնային Դարձաբաղը:

- Խորհրդային Միության փլուզումից, Վարչավայի ռազմաքաղաքական դաշինքի վերացումից հետո հակառի ուժերի հավասարակշռությունը խստորեն խախտվեց: Գերիշխանության եկավ ամերիկյան աշխարհակարգը՝ իր ռազմական հզրությամբ: Օգտվելով նաև ՆԱՏՕ-ում տիրապետող իր դիրքից, ԱՄՆ իրավունք վերապահեց ապօրինի, ստահակ պատրվակով գրավել Իրաքը, ճուտք գործել Աֆղանստան, ծեռնարկել ազրեսիվ այլ գործողություններ:

Մեծ է աշխարհի հզրությի եւ հատկապես ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահագրգությունը Հարավային Կովկասում իրենց ազթեցությունը հաստատելու գործում: Եվ դա հասկանալի է: Հարավային Կովկասը Եվրոպան եւ Ասիան միացնող կամուրջ է, ողովում է Սեւ եւ Կասպից ծովերով, ունի ռազմավարական խոչոր նշանակություն: ԱՄՆ-ի համար Հարավային Կովկասում տիրապետող լինել՝ նշանակում է անրապնդել իր դիրքերը հարեւան պետությունների՝ մուրքիայի, Իրանի եւ, որ ամենակարեւորն է, Ռուսաստանի նկատմամբ: Բայց այդ, Հարավային Կովկասը ամենահարմար տարածքն է միջինասիական զագի եւ նավթի հսկայական պաշարները Եվրոպա ուղղելու, այլտեղից լներգակիրների հիմնական նախակարգին: Ռուսաստանին դրւու մրելու համար: Իսկ դա նշանակում է աշխարհի ռազմական տեսակետից երկրորդ ուժեղ պետությանը թույլ չտալ նավթի եւ գազի իր հսկայական պաշարները ծառայեցնելու իր հզրության աճին:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահերի բախման արյունք եր վրաց-ռուսական վերջերս ծագած պատերազմը, որը վկայեց, որ Ռուսաստանը բոլորովին էլ մտադիր է լիքեն հարեւան, իր ազդեցության տակ գտնված այդ տարածքում գիշելու իր դիրքերը: Պատերազմը միաժամանակ վկայեց, որ աշխարհում ամենամեծ տարածք գրադց-

նող Ռուսական Ֆեդերացիան վերագտել է իր հզրության զգացողությունը: Թերեւս դա է ապացուցում նաև այն, թե նա ինչպիսի տոկունությամբ է պայքարում Լեհաստանում եւ Չեխիայում ամերիկյան հակահրթիւային պաշտպանությամ ստեղծման դեմ: Կան մի՞թե քիչ է, որ Ռուսաստանը զգուշացրել է բոլորովին չփորձել խոշնորսելու իր նավատորմի վերադարձին Սեւ ծովի խորքերը եւ այլտեղ իր հիմնակայանի ստեղծմանը: Կարեւոր նշանակություն ունի նաև Չինաստանի, Չինկաստանի, լատինամերիկյան մի շարք երկրների աջակցությունը Ռուսաստանին:

Այդ տարածքում ոչ պակաս, եթե ոչ ավելի, շահագրգություն ունի Թուրքիան: Նախ, նրա համար, որ Հարավային Կովկասը նրան հարակից տարածք է եւ նաև միջանցք սերտ կապերի մեջ լինելու Ռուսաստանի հարավում եւ Պովլիմինում բնակվող մուսուլմանների հետ եւ հարմար պահին հասնելու վաղուցվա իր բաղանքին՝ ստեղծելու պանիսլամական խոչոր տերություն:

Առանձին տարբերություններով համարյա այդպիսի է նաև Իրանի քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ:

- Իսկ այդպիսի իրադրության պայմաններում ինչպիսի՞ն պետք է լինի մեր երկու հայկական պետությունների՝ ՀՀ-ի եւ ԼՂ-ի ներքին եւ արտաքին քաղաքականությունը կոմունիստական կուսակցության տեսանկյունով:

- Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանն իր բազմադարյան պատմության ողջ ընթացքում չտեսնված ծաղկում ապրեց: Պատկերացնու՞մ եք, արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով հասել եր եվլուսական այնպիսի երկրի նակարական, ինչպիսին Պորտուգալիան է: Արդյունաբերության, ռադիոլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկական, գործիքա-հաստոցաշխնական նյութերի գծով վորդիկ Հայաստանն իրենից հարյուր անգամ գերազանցող ԽՄՀՄ-ում գրադցնում եր 2-3-րդ տեղերը:

Այսօր շատ շատերին ծեռնտու չէ հիշատակելու, որ Խորհրդային իշխանության տարիներին մեր մայր հայրենիքի բնակչությունը ավելացել է հինգ անգամ:

Չնայած մեր նկատմամբ Բաքվի խորական քաղաքականությանը, Ղարաբաղում էլ տեղի ունեցան դրական լուրջ տեղաշարժեր: Կերակառուցվեցին, ընդլայնվեցին, տեխնիկական վերագինվեցին մի շարք արդյունաբերական ծեռնարկություններ:

Այսօր մենք Ստեփանակերտում չենք կարողանում ստեղծել աշխատատեղեր, մինչդեռ 1987 թվականին մարզի գյուղական խոշոր բնակավայրերում գործում էին արդյունաբերական արտադրամասեր, շարժման տասնյակ նոր գինեգործական ձեռնարկություններ եւ տարողություններ: Թեևկուզ ջրարդի հողերի տոկոսային չնչին վիճակին, ծաղկունապեց եւ գյուղը: Մենք ուրսունականների վերջերին տարեկան ստանում էինք համարյա այնքան խաղող, որքան Շայաստանը, այսինքն՝ 170-190 հազար տոննա: Արտադրվում էին այնքան միս եւ կաթ, որքան ստանում էին Անդրկովկասի մյուս հնքնավարությունները միասին վերցրած, որոնց բնակչությունը մերից ավելին էր վեց անգամ:

Կոմունիստական կուսակցությունը ունի Արցախը ճգնաժամից դուրս բերելու հստակ ծրագիր: Արդյունաբերության բնագավառում դա աշխատատեղերի ստեղծումն է: Չանել դա, նշանակում է չկանխել բնակչության չնվազող արտահոսքը, չնվազեցնել գործազրկությունը, որը վիճակագրական նարզային ծառայության, ճիշտ է, վերջնականապես չճշտված տվյալներով կազմում է 5.8 տոկոս: Մակայն իրականում դա 8-10 անգամ ավելին է: Այստեղից էլ առաջնահերթություն է ստանում այնպիսի պայմանների ստեղծումը, որպեսզի արտաքին եւ ներքին կապիտալին ծեռնոտու լինի ներդրումներ անելու արդյունաբերության ոլորտում:

Ներկայունս L73 պետական բյուջեն խորհրդայինի մակարդակը գերազանցում է 2.5-3 անգամ եւ հնարավորություն ունենք լուծելու ոչ քիչ խնդիրներ: Մինչդեռ, գաղտնիք չէ, որ մեզ մոտ այսօր խորհրդայինի համեմատ մի քանի անգամ ավելացել է կառավարման համակարգը: «Գոլոս Արմենիա» բերթի լրագրային ուսումնասիրության տվյալներով՝ միայն երկու տարում (2006, 2007թթ.) Շայաստանում ծառայողական մեքենաների թիվն ավելացել է հինգ անգամ: Դրանց գննան եւ սպասարկման ծախսերը հավասարվել են Շայաստանին եւ տարածքով, եւ՝ բնակչությամբ մի քանի անգամ գերազանցող Բնելուստականակարգային ամբողջ համակարգի գործունեության ապահովման ծախսերին:

Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է պետական բյուջեի միջոցներն ուղղել ոչ պաշտոնյանների անհարկի պահանջների բավարարմանը, այլ մեր տնտեսության զարգացմանը, ոտղիալական հարցերի լուծմանը: Լոնդոնում, քաջի քաղուհուց, մյուս ծառայողներին արգելված է քաղաքում ծառայողական մեքենաներով երթեւեկելը: Բնակչության կենսամակարդակով մեզ համար երազելի Անգլիայում խնայում են ամեն ինչում, իսկ մենք աղքատ մեր երկրում շայլում ենք մեր սուր միջոցները:

Մեծ ջանքեր են պետք մեր գյուղատնտեսությունը ճեղքվածքից դրւու բերելու համար: Մեր պայմաններում, երբ առանց գյուղացուն հարցնելու ժողովրդական համարվող մեր երկրում թեթեւ ծեղզով քարութան են արվել տասնամյակների ընթացքում ծեւավորված մեր կոլտնտեսությունները, խորհրդային տնտեսությունները, անամնապահական խոշոր միավորումները, բալանվել մեր հարուստ ունեցվածքը, գյուղատնտեսության մեր երեմնի վերականգնումը շատ դժվար, քայլ այսովականով թելաղոված անհրաժեշտություն է: Ներկա մեր պայմաններում, երբ գյուղացին է դարձել ընդամենը մեկ, կամ երկու-երեք հեկտար հողի տեր, երբ վառելիքի, գյուղտեսնիկայի գները անընդհատ աճում են, ոչ շահութաբեր է դարձել հողի մշակումը:

Կոմունիստական կուսակցությունը այսպիսի վիճակից դրւու միակ միջոցը համարում է գյուղական տնտեսությունների խոշորացումը, գյուղմթերքների վերամշակման արտադրությունների ստեղծումը: Մինչդեռ այսօր մենք չունեն նույնիսկ մթերքների գնման եւ վաճառքով գրադարձու միավորումները: Ներկայս դժվարին պայմաններում անհրաժեշտ է, որ պետությունն իր վրա վերցնի տեխնիկայի, պարարտանյութերի գնման ծախսների մի մասը, նպաստի գյուղմթերքների հրացման գործին:

Մեր բարեկեցության բարձրացման եւ արցախյան հիմնահարցի հրամայականը պահանջում է մեզնից լինել տնտեսապես ուժեղ, միասնական, համախմբված վեհ իշեալների չուրց:

-Ինչպիսի՞ն են այդ համատեստում Արցախյան հիմնահարցի լուծման հնարավորությունները:

-Ինչպես հայտնի է, մեր հիմնահարցի լուծումը մի քանի տարի է, ինչ նույն է միջազգային ասպարեզ: Գործում է երկու սկզբունք՝ տերիտորիալ ամբողջականության եւ ինքնորդշնչման: Մինչեւ վերջերս միջազգային հանրությունը գերակշռությունը հատկացնում էր առաջինին: Ներկայունս, կարելի է ասել, հակասարակչություն է տիրում: Յեթ Արևմտաքը, թե՝ Ուսասատանը մեր հիմնահարցի լուծման գործում մեծ նշանակություն են տալիս իրենց տնտեսական շահերին: Չնայած Ուսասատանը ստրատեգիական դաշինքի մեջ է Շայաստանի հետ, վարում է լոյալ դիրը: «Դուք համաձայնեցեք, ես ծեր դիրքորոշումը պաշտպանելու եմ, օգնելու եմ խաղաղարար ուժերով», - սա է այդ երկրի մշտական պատասխանը թե՝ մեզ, թե՝ Աղրբեջանին:

Ոչ մի երկիր ամերիկյան եմիսարները այնքան չեն այցելում, որքան Աղրբեջան: Վրաստանից հետո Աղրբեջանի ներգրավումը ՆԱՏՕ-ում

ԱՄՆ-ի համար ստրատեգիական խնդիր է: Յանելով դրամ, հնարավորություն է ստանում ավելի աճրապահներ իր դիրքերը Կովկասում, ուժեղացնել ազդեցությունը Թուրքիայի վրա եւ, որ նրա համար չափազանց կարեւոր է, իրանը պահել իր բռան մեջ:

Այստեղից պարզ է, որ ԱՄՆ-ը երթեք դարձարյան հարցում մեր կողմը չի լինելու: Թուրքիայի մասին խոսելու կարիք չկա, նա եղել եւ լինելու է իր ազգակից Աղրբեջանի կողմը:

Ին վերաբերում է Իրանին, նա եւս լոյայություն է ցուցաբերում մեր հարցում, թեկուզ նրան ծեռնտու է Լեռնային Պարաբաղի անկախությունն այն հաշվով, որ այն չմիացվի Աղրբեջանին: Աղրբեջանի ուժեղացումը ծեռնտու չէ Իրանին, քանի որ այդ դեպքում իրանական Աղրբեջանի կցումը հյուսախային ավելի ռեալ կարող է դառնալ:

Այսքանից հետո, պարզ է, որ մեզ համար ծեռնտու է, որ Արցախյան հիմնահարցի լուծման գործընթացը շարունակի ԵԱՀԿ-ը: Բոլորովին պատահական չէ, որ Եվրոխորհրդում առաջիններից մեկն է ճանաչել հայոց ցեղասպանությունը: Բայց անշափ կարեւոր է, որ քանակցային գործընթացին անպայման մասնակցի նաեւ դարձարյան կողմը:

Կոմունիստական կուսակցությունը գտնում է, որ արտաքին այն քաղաքականությունը, որը վարդում է այսօր եւ կոչվում է կոմակետար, համապատասխանում է մեր շահերին: Դա թելադրված է նաեւ Սփյուռքի գոյության իրողությամբ: Թե ԱՄՆ-ում, թե Ռուսաստանում այսօր միջինավոր հայեր են ապրում եւ դրա հետ հաշվի չնստեն անհնար: Բոլորն էլ ուզում են արժանանալ գերտիրական ուժերի ուշադրության եւ լուծել իրենց հուզող հարցերը: Մեզ համար դա հայոց ցեղասպանության ընդունումն է Թուրքիայի կողմից, Յայակական դատի ճանաչումը, մեր ժողովորդի ուժահարված իրավունքների վերականգնումը, արցախյան հիմնահարցի արդարացի լուծումը:

«Արցախի կոմունիստ»
10 հոկտեմբեր, 2008թ.

ԱՐՑԱԽԻ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՂԱՏԱՄԱՐՏՈՒՄ Է

Բարգում ապամոնտաժել են 26 կոմիսարների համալիրը (այդ մասին վկայող լուսանկարներ են տեղադրված համացանցում):

Այդ առնչությամբ խնդրեցինք իր կարծիքն արտահայտել Ղարաբաղի կոմունիստների առաջնորդ Քրանտ Մելքոնյանին:

- Իհարկե, միանշանակ դատապարտում եմ: Այդպիսի վայրագությունը, նախ եւ առաջ, բանական, հասկանալի չէ այն պատճառով, որ այդ հուշարձանը ճարտարապետական-մշակութային արժեք է եւ իրենից ներկայացնում է որպես հարգանքի տուրք մարդկության լուսավոր ապագայի այն նվիրյալ ներին, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին հանուն ինտերնացիոնալ գաղափարների: Եվ, թեկուզ, գաղտնիք չէ, այդ ակցիան ուղղված է հայերի դեմ /հիշենք գերեզմանոցների ավերումը Բարգվում, խաչքարերի ջարդուվիշտուրը Նախիջևանում/, բայց ին 26 կոմիսարների կազմում կային նաեւ աղրբեջանցիներ Ամիրովը, Ազգիբեկովը, ուստի Ֆիալետովը: Իսկ նրանց դեկավար հայազգի Ստեփան Շահումյանն էր, որի ծննդյան հորեյանի կապակցությամբ այս տարի Լեռնային Ղարաբաղի կոմիուսը հիմնել է, «Ստեփան Շահումյան» հուշանեղալը: Բայց դա առաջին եերթին արվել է ոչ թե նրա համար, որ նա հայ էր, այլ որ նրա գլխավորությամբ, հանուն լուսավոր գաղափարների, միավորվել էին տարբեր ազգությունների ներկայացնությանը: Եվ իրենց ինտերնացիոնալ քաղաքի խորհրդանիշն էր 26 կոմիսարների համալիրը: Մի խոսքով, դա սովորական ազգայնանոլություն է, որ դրստորվում է աշխարհիկ պետության մայրաքաղաքուն: Ինքը իլիամ Ալիեւը, պիտի որ լավ իիշի, եթե հյուրեր էին գալիս Բաքու, Աղրբեջանի դեկավարությունը, իր հոր՝ Շեյխար Ալիեւի գլխավորությամբ, նրանց առաջին եերթին 26 կոմիսարների համալիրի ճոտ էր տանում: Ինքն էլ, ամենայն հավանականությամբ, առաջին անգամ պիտուրական վզկապ է կապել իենց այդտեղ: Յավելեն նաեւ, որ նման վերաբերմունքը, բացի այդ, պատմության վրա խաչ քաշել է նշանակում: Չողոնում այսօր կա ներոնի արծանը: Այն Ներոնի, ով իրկիզել է այդ նույն Չողոնը: Իսկ, ի տարբերություն Ներոնի, բազում սերունդների հիշողության մեջ Շա-

հուման ու մնացած կոմիսարները մնացել են, որպես լուսավոր գործի նվիրյալներ: Եվ չարժե այսօր մոռանալ նաև, որ ինտերնացիոնալ Բարգում ադրբեջանցիները ժամանակին փոքրամասնություն էին: Ավելին, Բաքուն եւ նրա արդյունաբերությունը ոտքի կանգնեցին շվեդների, նորվեգացիների, հայերի, ռուսների եւ այլ ազգերի պատկանող մարդկանց շնորհիվ: Եվ ահա, թող ներվենք կրկնության համար, Բաքվի 26 կոմիսարների համալիրը հենց Ադրբեջանի մայրաքաղաքի այդ լուսավոր անցյալի խորհրդանշին էր:

- Այսօր նույնպես պահպանում եք սերտ կապեր այլ երկրների կոմունիստների հետ: Որեւէ բան այսամափորություն եք առաջիկայում:

- Մոտ ապագայում Մոսկվայում կկայանա նախկին ԽՍՀՄ հանրապետությունների կոմկուսների համագումարը, որը կազմակերպվում է Կոմունիստական կուսակցությունների միության՝ ԿԿՄ կողմից: Մենք էլ ենք մասնակցելու, եւ ես անպայման ադրբեջանցի կոմունիստներին կիուշեմ, որ իրենք պարտավոր էին ընդդիմանալ քարբարոսությանը: Պարզ տրամաբանություն է՝ նման վերաբերմունքը, սովորաբար, շարունակություն է ունենում: Վաղը կարող է գալ, ասենք, իսա Ղամբարը եւ քանդել Շեյխը Ալիեկի հուշարձանը:

- Իսկ «Շահումյան»-ի հուշամեջալով ովքե՞ր են պարզեւատրվելու:

- Յաճագովմարում մեղալով կպարզեւատրենք Զյուգանովին, Սիմոնենկոյին, Կուպրովին եւ ԿԿՄ-ի նախագահին:

- Իսկ նրանք մինչեւ հիմա ննանատիպ վերաբերմունք դրսեւորե՞լ են:

- Այս, իհարկե, նախագորապես վերջերս ԼՂՀ կոմկուսի մի խունք անդամներ, ինչպես նաև կոմերիտմիության մարգկոմի մի խունք քարտուղարներ եւ ակտիվիստներ Զյուգանովի կողմից պարզեւատրվել են կոմերիտմիության 90-ամյակի հուշամեջալով: Յավելեմ նաև, որ մեր միջազգային կասւերը լայն են: Կարող եմ նշել թեկուզ հենց այն հանգամանքը, որ Վելիջերս մեզ մոտ եւս ստեղծել ենք խորհրդային սպաների միություն, որը նիշազգային կազմակերպություն է եւ իր մեջ ներառում է նախկին ԽՍՀՄ բարձրաստիճան գինվորականների, մարշալների, գեներալների եւ այլոց, որը սերտ կապերի մեջ է նույն կազմակերպության կառույցների հետ, եւ այդ կապերը, ինչ խոսք, դրական անդրադարձ կունենան մեր գործունեության վրա:

**ճեպագրույց՝ 4. Միրօնովի
«Ակունք», 2 փետրվար 2009թ.**

ՀԱՐՑԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՍՓՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՎԻ

- Հրանտ Արտեմի, ի՞նչ կարծիքի եք հայ-բուրգական արձանագրությունների մասին:

- Հայ-բուրգական վերջին արձանագրությունները, որ Ծվեյցարիայի միջոցով իրապարակվեց եւ լայն նասսամեր ծանրության նրա բովանդակությանը, նախ եւ առաջ ես կարծում եմ, որ Ծվեյցարիան կատարել է միջնորդի դեր: Եւ այդ արձանագրությունը կազմվել է ԱՄՆ-ի եւ Ուստատանի համաձայնությամբ: Հայ-բուրգական սահմանի բացումը Յայաստանի համար ունի երկու հիմնական հիմք քաղաքական եւ տնտեսական: Եթե, ինչպես նշում են Յայաստանի ղեկավարները եւ իշխող կուսակցությունները, կուլիցիայի անդամները, այդ սահմանի բացումը ոչ մի նախապայման չունի, այսինքն կապված չի դարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծմանը եւ Յայոց ցեղասպանության ճանաչման կամ չճանաչման հարցերի հետ, ապա ես կասեի, որ այն ինչ-որ դրական քայլ է: Կերծապես մենք հարեւան պետություններ ենք եւ մնում են հուսալ, որ Թուրքիան երիտրութերի ժամանակվա Թուրքիան չէ, նա արդեն եկորապեկան հավակնություններ ունի եւ, երեւի նրա իշխանություններն ընդունում են եկորապեկան քաղաքակրթությունն ու մենտալիտետը եւ ձգտում են միանալ Եվրամիությանը: Այստեղ ինչ-որ դրական տեղաշարժ կա եւ Յայաստանն արդեն կապ կունենա անմիջապես Եվրամիության հետ, եթե Թուրքիան դասնա Եվրամիության անդամ, իսկ Եվրամիության նախապայմանները շատ բարդ են եւ ամեն մի պետություն չեն ընդունում իրենց միություն, այսինքն դա կապված է դեմոկրատական գարգացման, տնտեսության աճի հետ: Սա ընդունելի է եւ առանց նախապայմանի գնալ սահմանի բացմանը, նշանակում է մեկ քայլ առաջ գնալ Յայաստանը Եվրամիությունն հարցում:

- Ասացիք, որ հայ-բուրգական սահմանի բացումն ունի նաև տնտեսական հիմք, իսկ ի՞նչի մասին է խոսքը:

- Իմ հաշվարկներով սահմանները բացելու ժամանակ Յայաստանի առանց այն էլ թույլ տնտեսությունը էլի կրուզան: Խնդիրը կայանում է նրամում, որ այսօր թուրքական տեքստիլ արդյունաբերությունը Եվրոպայում առաջապես դիրքեր է գրավում եւ որակով: Սա գալիս է նրանից, որ Եվրոպական շատ խոշոր ընկերություններ մեծ ներդրումներ են կատարել Թուրքիայում եւ այն դարձել է արդյունաբերական առաջատար պետություններից մեկը: Ըստ այդմ էլ, Թուրքիան Յայաս-

տանին կխեղի թերեւ արդյունաբերության եւ լայն սպառնան առարկա-ների արտադրության ոլորտում: Իմ հաշվարկներով, Հայաստանը կկորց-նի իր համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը: Բայց տնտեսական բնագավառում կա մեկ ուրիշ հանգամանք եւս: Այսօր Հայաստանը եւ Ռուսաստանը ունեն տնտեսական բավականին շահավետ հարաբերություններ եւ ես չեմ կամքածում, որ թուրք գործարարները Հայաստանում չիմմնեն այդ նույն արդյունաբերական ճեռնարկությունների մասնաճյուղերը կամ նոր գործարաններ բացեն Հայաստանի բազայի վրա եւ Ռուսաստանին այն ներկայացնեն Հայաստանյան բրենդի ներքո: Սակայն մյուս կողմից է Թուրքիայի գործարարը հասկանում է, որ Հայաստանում աշխատուժն ավելի էժան է: Եվ ստացվում է, որ այդ գլոբալիզացիայի արդյունքում Հայաստանում ճեղք է առաջանում եւ Հայաստանը դառնութ է ոչ թե ինչ-որ եկորապական երկիր, այլ է ասիսկան նոր զարգացող կամ գաղութատիրությունից նոր դուրս եկած պետություն: Այս հարցերը պետք է հանձափությամբ ուսումնափրկեն: Եվ եթե թուրք ճեռնարկատերը Հայաստանում չքացի ճեռնարկություն, ապա նա կրերի իր արտադրանքը, իսկ Հայաստանը մրցակցությանը չի կարողանա դիմանալ, քանի ինչքան արտադրության ծավալը մեծ է, այնքան ինքնարժեքն ավելի փոքր է: Իսկ Հայաստանն այդպիսի նաև աշխատանքով արտադրություն ունենալ չի կարող: Եվ նաև Հայաստանը արդյունաբերող երկրից կդառնա սպասարկող երկիր: Բայց մյուս կողմից է Հայաստանում կան բրենդներ, որոնք աշխարհում ունեն իրենց տեղը: Եվ եթե Հայաստանը շրջափակումից դուրս գա, իր բրենդերն ավելի հեշտ շուկա կիհանի: Փակ աչքերով չպետք է գնանք սահմանի բացմանը: Սահմանի բացման հարցը պետք է երկու երկրների խորհրդարանները վավերացնեն: Թուրքիայի խորհրդարանում կա ընդդիմադիր կուսակցություն, որը չի ընդունում նախագահի առաջարկությունները: Այստեղ էլ կան այդ արձանագրություններին դեմ մարդիկ: Իսկ ինչ մնում է Հայաստանին, ես չեմ կարծում, որ Հայաստանի Ազգային ժողովը չի ընդունի, իհարկե, կընդունի: Սակայն այդ կարգի հարցերը պետք է ժողովրդի հետ հանաձայնեցվի: Չեմ ասում հանրաքեի միջոցով, բայց գոնե քաղաքական ուժերի՝ համակիր եւ ընդդիմադիր ուժերի հետ պետք է համաձայնեցվեն եւ կշռադառվեն հարցի լավ եւ վատ կողմերը: Պարզապես միանգամանք ասել, որ մենք դեմ ենք սահմանի բացմանը, դա մեր կողմից սիսալ կլինի, մենք գտնվում ենք 21-րդ դարում, առանց կշռադառվելու ընդունելու էլ ճիշտ չէ, ախր մենք այդքան էլ միամիտ չենք:

Ինչ մնում է Ղարաբաղի հարցին, եթե դա նախապայման չի, ապա սահմանի բացելը Թուրքիայի կողմից Ազգութանին մի ապատակ է: Իսկ երբ Թուրքիան իր բարեկամին իր իսկ ծեռօդով ապատակ է տալիս, սա նշանակում է, որ նրա դիրքերը թուլացել են: Մակայն այլ հարց է, թե այդ ապատակը պայմանագործած ապատակ է, թատերական ապատակ է, թե՝ դիվանագիտական: Այս հարցերը պետք է քաղաքական ուժերը ըննարկեն: Հայ-թուրքական սահմանի բացումը մեր ժողովրդի համար ճակատագործական հարց է եւ ըննարկումների արժանի թեմա: Ինչ մնում է այս տարուծաշրջանի խաղաղ ապրելակերպի հետագա ճակատագրին՝ դա Ղարաբաղի անկախության ճանաչումն է: Այսօր ովքեր ծգութուն են հաշտեցնել Թուրքիային եւ Հայաստանին՝ մոռանալով պատմության դասերը, ավելի լավ կլիներ, եթե նրանց ճանաչեն Ղարաբաղի անկախությունը եւ ըստ այդմ տարածաշրջանում խաղաղություն կլիներ: Իսկ մեծ տերություններն ի՞նչ են ուզում: Բարու-Ձեկիան նավթամուղը կառուցելուն զուգահեռ, կառուցում են նաև գազամուղը: Բնականաբար նրանք գումար են ներդնում եւ նրանց ծեռնոտու չէ, որ այստեղ կոնֆլիկտներ լինեն: Իսկ Բաքու-Ձեկիան գազամուղը մեր սահմանից ընդամենը 15-20կմ է հեռու: Ամենաքույլ հրետանին անգամ հարվածել կարող է: Նրանք ոչ թե նմանում են մեր մասին, մեր ժողովրդի ապագայի մասին, այլ նմանում են իրենց ֆինանսական եւ տնտեսական շահի համար:

Մենք միշտ ասում ենք, որ մեզանից խելոք ազգ չկա, իինա եկել է պահը ազգի ապագան կառուցելու համար:

**«Ապառաժ»,
1-14 սեպտեմբեր, 2009թ.**

Դարց.- Զեր կարծիքով հնարավո՞ր է, որ աղբեջամցի փախստականները վերադառնան իրենց նախկին բնակավայրերը:

- Եթոնային Ղարաբաղ կարող են վերադառնալ այն անձինք, որոնք ճանաչում են հանրապետության Սահմանադրությունը,- գտնում է ԼՂՀ կողմնահատների դեկավարը

Աղբեջանական կողմը անընդհատ առաջ է քաշում փախստականների վերադարձի նախկին հարցը. բայց եւ միաժամանակ անտեսում է հայ փախստականների վերադարձը Աղբեջանի քաղաքներն ու գյուղական վայրերը, ինչպես նաև օկուպացված Շահումյանի շրջանը եւ Մարտունու շրջանի մի մասը: Անտրամաբանական եմ համարում, երբ առաջին օրին եւ հիմնականում խոսք է բացվում սոսկ աղբեջանական փախստականների նախկին եւ դա այն դեպքում, երբ գոյություն ունի Աղբեջանից բռնագաղբված մոտ 400 հազար հայ փախստականների բանակ:

Նրա կարծիքով ԼՂՀ կարգավիճակի որոշման, ինչպես եւ մարդկանց ընդունման համար սոցիալական եւ կենցաղային հարցերի կոմպլեքսի լուծումից հետո միայն փախստականների վերադարձի կապակցությամբ փոխսպառքումների գնալու մասին: Դա շատ բարդ հարց է,- նշում է Յ. Մելքոնյանը,- եւ կարող է օրակարգի հարց դառնալ միայն ԼՂՀ պետականության միջազգային ճանաչումից հետո: Ինչ վերաբերում է փախստականների նյութական եւ բարոյական փոխստուցմանը, ապա Աղբեջանը որպես ագրեսոր, մեծ պատասխանատվություն է կրում: Հայերն Աղբեջանից արտաքսվել են դեռևս խորհրդային տարիներին: Դա եղել է երնիկական իսկական գտում: Մինչդեռ աղբեջանցիները Հայաստանում իրենց կացարանները բռնել են հենց Աղբեջանի կողմից սանձագերծված պատերազմի հետեւանքով,- շեշտել է Յ. Մելքոնյանը:

Նրա համոզմամբ, « ԼՂՀ-ին շրջակա տարածքների գրադեցումը պատունական Բարուն միջազգային հանրությանը ներկայացնում է որպես հայկական ազրենիայի արդյունք, մինչդեռ այդ հիմնահարցի ի հայտ գալը հանդիսանում է որպես հայկական երկրամասի վրա ազրենիայի դիմելու հետեւանք: Լեռնային Ղարաբաղի անկախության եւ Աղբեջանի տարածքային ամբողջականության հարցերն իրավական տարբեր հարթությունների վրա են գտնվում: ԼՂՀ անկախությունը բոլորովին էլ չի խախտում Աղբեջանի տարածքային ամբողջականությունն ամենից առաջ այն պատճառվ, որ Լեռնային Ղարաբաղը երեք չի եղել աղբեջանական անկախ պետության բաղկացուցիչ նաև»,- եզրակացրել է Յանն Մելքոնյանը:

«Ոեգնում», օգոստոս, 2009թ.

**ՀՐԱՍ ՄԵԼՔՈՒՅՑԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
1999թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՆԱԼՇԻԿՈՒՄ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ**

Թամկագին ընկերներ, բարեւ Ձեզ: Ցանկանում եմ շնորհավորել բոլորի մի այնպիսի իրադարձության կապակցությամբ, որի ականատեսներն են մենք այսօր: Ես կարող եմ ափսոսալ միայն այն բանի համար, որ այսպիսի հավաքը պետք է տեղի ունենար ավելի վաղ, քանի որ այս համագումարը անպայմանորեն կվաճիսեր այնպիսի տիտուր իրադարձություններ, որոնք տեղի ունեցան վերջին ժամանակներս Կովկասում: Բայց դրույթունն այստեղ շարունակում է մնալ անհամգիստ ու վտանգավոր: Մեր խնդիրն է- փորձել ինչ-որ չափով մեղմել հետագա փորձությունները եւ լարվածությունը հակամարտությունների օջախներում: Ժանանակն է, վերջապես, հասկանալու, որ Կովկասում խաղաղությունը մեր ծեռքում է, որ մեր ուժերն ու հնարավորությունները բավականին կիերիթեն զարգացման նորմալ պայմաններ ստեղծելու մեր ամրող տարածքում:

Որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչ, ես անհրաժշտ եմ գտնում կանգ առնել Լեռնային Ղարաբաղի խնդիրի կազմակերպման ընթացքի վրա: Կերպին տարիների եւ ամիսների իրադարձությունները պարզ կերպով վկայեցին, որ հնարավոր չէ վերջնականացնել կարգավորել ցանկացած հակամարտություն Կովկասում, քանի որ այստեղ գոյություն ունեն ու ծագում են հակամարտությունների ավելի թեժ օջախներ: Ուստի նեզ այսօր անհրաժշտ է մտածել ոչ թե յուրաքանչյուրս մեր մասին, այլ բոլորի մասին ընդհանրապես:

Կովկասում բնակվող բոլոր ժողովուրդները պատճական ծանր փորձ ունեն իրենց գոյատեսության պայքարի համար, դարերի ընթացքում նրանցից շատերը ստիպված են եղել երկարատև պայքարի մեջ

լինել իրենց ազատության համար: Բայց դրա հետ միաժամանակ արտաքին թշնամական սպառնալիքների առկայության պայմաններով նրանք հերոսական կողմներ են մղել եւ ոչ մի ժամանակ չեն կովել մեկը մյուսի դեմ, իրենց միջեւ ծագած խնդիրները ձգտել են լուծել խաղաղ ձեւով: Մեր նախնիների փորձն ու իմաստությունը, սերունդների ավանդույթները իհնք են եղել խաղաղության ու բարի-դրաշխական հարաբերությունների համար: Դարեր շարունակ համատեղ ապրելով այս հողի վրա, նրանք ստեղծել են բազմակողմանի եւ տարբեր նակարդակի կապեր, բարեկամական եւ տնտեսական զարգացնան հարաբերություններ: Կերպին տանամյակներում մեն ու միայն ականատես եղանք, թե ինչպես են դրանք խարիսխում: Այն, ինչ ստեղծվել է դարերի ընթացքում, ոչնչացվում են ակնթարբերի ընթացքում:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ճշմարտությունը: Բայց ինչու ամեն մեկը ծգուում է ապացուցել, որ ինքն է ճշմարիտ եւ համբերություն չունի հասկամալու մյուսին: Մի՞թե Աստված զրկել է մեզ դատելու եւ խորհելու ունակությունից: Մի՞թե մենք կորցրել ենք իրար հետ շփվելու եւ փոխըմբօնելու կարողությունը: Մի՞թե խոսքն ավելի քիչ գորություն ունի, քան զենքը: Ես չեմ կարծում, թե այդպես է եւ գտնում եմ, որ գոյություն ունեմ քաջարիկ ճանապարհներ ճշմարտությունը հաստատելու համար: Իհարկե, գլխավորն այսօր իրար նկատնամք վստահության վերականգնումն է, այն փաստի հաստատումը, որ Կովկասը մի մարմնին է եւ, եթե ցավում է նրա մի օրգանը, ապա այն արտահայտվում է ամրող մարմնի մեջ:

Եվ, այսպես, ինչպիսի՞ն պետք է լինի խաղաղության տանող ճանապարհը:

Առաջինը՝ բազմակողմանի կերպով զարգացնել փոխադարձ հարաբերությունները, որն անհրաժեշտ է սկսել նշակութային, գիտական, կրթական, տնտեսական կապերի վերականգնումից:

Երկրորդը՝ այսօրվանից պետք է նտաժել Կովկասի բոլոր ժողովուրդների միջեւ քաղաքական հարաբերություններ հաստատելու մասին: Կարծում եմ հանգումարը, որի մասնակիցն ենք այսօր, քաղաքական երկխոսության իհնք դրեց Կովկասում: Կոմունիստները, լինելով ներկա համագումարի նախաձեռնողները, կարող են նպաստել այս գործընթացում մյուս կուսակցությունների ու շարժումների ներգրավմանը:

Երրորդը՝ մենք պետք է լինենք Ռուսաստանի հետ, Ռուսաստանը ակտով է լինի մեզ հետ: Այսպիսով՝ մեր փրկությունը միասնության մեջ է: Այն, ինչով միշտ հպարտացել է Կովկասը, մենք մյուսին դժբախտության մեջ օգնելու ու աջակցելու ավանդույթները պետք է ընկած լինեն մեր փոխհարաբերությունների հիմքում: Ցանկացած այլ ճանապարհ դատապարտված է կործանման: Եթե ուզում ենք, որ սերունդները գիտ լինեն մեզնից, ապա պարտավոր ենք հասկանալ, որ այսօր մենք պետք է լինենք միասնական, համատեղ ուժերով պարտավոր ենք նպաստել մեր երկրամասում խաղաղության պահպանմանը, նրա սոցիալ-տնտեսական վերելքին:

Ես նորից ու նորից ողջունում եմ Ձեզ բոլորիդ Լեռնային Պարաբաղի կոմունիստական կուսակցության ու նրա ժողովորդի անունից: Մենք, անցած լինելով սարսափելի պատերազմի միջով, ավելի քան լավ գիտենք խաղաղության գինը: Թող խաղաղությունը հավերժ թեածի Կովկասում:

Սեպտեմբեր, 1999թ.

ԻՆՉՈՒ ԵՆՔ ՊԱՇՏՊԱՍՈՒՄ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱԼԻ ԹԵՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ի հավելումն ավելի վաղ արված հայտարարությունների, որոնցով օգոստոսի 11-ին կայանալիք նախագահական ընտրություններում պաշտպանվել է հանրապետության գործող դեկավար Արկադի Ղուկասյանի թեկնածությունը, դարաբարյան ազդեցիկ քաղաքական ուժեղի դեկավարները հանդես են եկել իրենց դիրքորոշումը հիմնավորող մեկնաբանություններով:

ԼՂ կոնդուկտուական կուսակցության ԿԿ առաջին քարտուղար Յանան Մելքոնյանի կարծիքով դարաբարյան ազգային-ազատագրական շարժումը թեակոխել է վճռորոշ փուլ, եւ մեր քաղաքական ուժերը պարտավոր են ներ կուսակցական-խմբակային շահերը ստորադանել համագային նպատակներին:

Դարաբարյան հիմնախնդրի խաղաղ եւ արդարացի կարգավորման մեր ազգային գերնպատակի առաջնահերթության հատույթով եթե վերլուծելու լինենք ԼՂԴ նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրերը, գնահատենք նրանցից յուրաքանչյուրի փորձը, գիտելիքները, անձնական կշիռն ու վաստակը, ապա կիամոզվենք, որ Արկադի Ղուկասյանը անհամենատեղի առավելություն ունի մյուսների նկատմամբ: Ի տարբերություն մրցակիցների՝ նա ունի դիվանագիտական աշխատանքի հարուստ փորձ: Թեեւ ԼՂԴ-ն միջազգայնորեն դեռևս չճանաչված երկիր է մնում, բայց աշխարհի շատ պետություններում քաղաքական ագնեցիկ գործիչները անձամբ գիտեն մեր նախագահին: Այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների դեկավար եւ դիվանագիտական շրջանակներից: Խսկ դա խոսում է ԼՂԴ դեկավարի միջազգային ակնառու հեղինակության մասին: Մենք դա շատ կարենու հանգանանք ենք համարում, որովհետեւ դարաբարյան կարգավորման բանակցային գործնթացում ԼՂԴ դեկավարի դիվանագիտական փորձառությունից, հեղինակությունից, անձնական հատկանիշներից ու կապերից շատ բան է կախված: Ահա թե ինչու մեր կարծիքով գործող նախագահը այս մարդն է, որ մեր պետական ու ազգային շահերը կարող է առավել հասկանալի ներկա-

յացնել միջազգային հանրությանը, ամենաբարդ պայմաններում անգամ լիովին պաշտպանել դրանք:

Երբ 1988-ին մեր ժողովուրդն սկսեց ազատագրական շարժումը, գերիշխում էր մի կարգախոս՝ կտանենք բոլոր դժվարությունները, միայն թե հասմենք մեր նպատակին: Դիշենք պատերազմի, դրան հաջորդած առաջին տարիները, երբ խափանված էր բնակչությանը եւելուրականության, գազի նատակարարումը, ճամապարհները փակ էին, քանդված, տնտեսությունը՝ կարվածահար: Խոսք անգամ չէր կարող լինել ժողովրդագարության, քաղաքական ու քաղաքացիական ազատությունների մասին:

Ահա այս ժառանգությամբ 1997 թվականին Արկադի Ղուկասյանը ընտրվեց ԼՂԴ նախագահ: Դամենատեմք այսօրվա պետական, տնտեսական, քաղաքական, սոցիալական կյանքը անցյալի հետ: Մարդ պարզապես պետք է կույր լինի, որպեսզի չտեսնի շոշափելի դրական տեղաշարժերը նշանս բոլոր ասպարեզներում: Եկ այդ ամենը՝ նեծամասամբ շնորհիվ գործող նախագահի ներքին ու արտաքին ճկուն, հավասարակշռված քաղաքականության, որի արդյունքում երկրում նկատելիորեն բարելավվել է սոցիալ-տնտեսական իրավիճակը, կանխվել է արտագաղթը, կա որոշակի տնտեսական աճ:

Մենք հատկապես կարենուրում ենք արտաքին ներդրումների կայուն աճը, քանի որ ամեն մի նոր ծեռնարկում ենթադրում է լրացուցիչ աշխատատեղեր, նպաստում սոցիալական, կենսական հարցերի լուծմանը: Ես անձամբ այստեղ տեսմուն եմ ոչ թե կառավարության, այլ նախագահ Ղուկասյանի դերը՝ նկատի ունենալով նրա լայն կապերը արտերկրությունից գործարար մարոկանց հետ, այն վստահությունը, որ վերջիններս ունեն ԼՂԴ դեկավարի ու նրա քաղաքական ուղղագիր նկատմամբ:

Գործող նախագահն իր վարվելակերպով վկայեց, որ անգամ կյանքի գնով պատրաստ է պաշտպանելու ժողովրդավարությունը, արդարությունն ու օրինականությունը: Այդ քաղաքականությունը շեշտակիութեն բարձրացրեց ԼՂԴ միջազգային հեղինակությունը, եւ մենք գտնուն ենք, որ նախագահ Ղուկասյանին պետք է հնարավորություն տրվի պաշտոնավարության երկրորդ ժամկետում զարգացնել վերջին տարիների բոլոր դրական միտումները թե ներքին, թե արտաքին կյանքում:

Թող տպավորություն չստեղծվի, թե ԼՂԴ կոմունիստները հրաժարվում են կուսակցության ռազմավարությունից: Ոչ, մենք համազգային նպատակների գերակայության գիտակցումով ընդունել ենք մարտավա-

րական որոշում եւ, օգտվելով հնարավորությունից՝ ես մեր կուսակցության բոլոր անդամներին, մեր համակիրներին, անքող արցահահայությանը կոչ եմ անում օգոստոսի 11-ին միական մասնակցել նախազահական ընտրություններին, իրենց ձայնը տալ արժանի թեկնածուի օգտին: Մեր ժողովուրոք գիտակցում է այս ընտրությունների կարեւորությունը, չի սխալվելու եւ վստահության քվե է տալու գործող նախազահայն:

Արցահայի Արմենական կուսակցության ղեկավար Բորիս Առուշանյանի գնահատմանը՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ից հետո աշխարհին արագորեն փոխվում է, ծեւազորվում են միջպետական, միջևկռավարական նոր հարաբերություններ, ուրաքազմվում բարդ ինդիրների լուծնան ոչ ավանդական մեխանիզմներ: «Այս իրավիճակում ԼՂՀ բոլոր քաղաքական ուժերը պարտադրված են գործել փոխանականացնության մթնոլորտում, բոլոր ասպարեզներում ցուցաբերել պետական մտածողություն: Այս առումով մեր կուսակցությունը կարեւորում է գործող նախագահի մեջ փորձը միջազգային ասպարեզում: Նա ճիշտ է հասկանում Դայ դատի նպատակները եւ դրանց հասնելու ճանապարհին ցուցաբերում է ճկումություն:»

Իր եւթյամբ նախագահ Ղուկասյանը ժողովրդավար, մարդանուանհատականություն է, պատրաստակամորեն լսում է դիմացինին, գտնում է, որ աշխատանքում կան նաեւ բացթողուններ եւ այդ մասին խոսում է բարձրածայն, հանգամանց, որ վկայում է, որ պաշտոնավարության երկրորդ ժամկետում նա շտկելու է նկատած թերությունները: Մեր պետության ներքին կյանքում նախագահ Ղուկասյանը դրսեւորում է բացարիկ կառուցողական, հանդիրժողական վերաբերմունք, որի շնորհիվ ԼՂՀ-ում ծեւավորված է ներքաղաքական կայուն համերաշխության մթոլորտ:

Արմենական կուսակցությունը ԼՂՀ նախագահական ընտրություններին է գնում նաեւ Դայաստանի Դանրապետությունում ներքաղաքական զարգացումների նկատառմամբ: Այս տեսանկյունից մենք գտնում ենք, որ հայկական երկու պետությունների քաղաքական ու տնտեսական ինտեգրացիան խորացնելու մեր վերջնական նպատակին հասնելու համար հարկավոր է պաշտպանել գործող նախագահ Արկադի Ղուկասյանի թեկնածությունը: Մեր կարծիքով՝ այդ դեպքում կարող ենք ասել, որ ՀՀ-ԼՂՀ հարաբերություններում քաղաքական հաջորդայությունը կպաշտպանվի, ինչը շատ կարեւոր է մեր ժողովրդի համար:

Արկադի Ղուկասյանի թեկնածությունը պաշտպանելու մասին որոշում ընդունելիս Արմենական կուսակցությունը հաշվի է առել նաեւ հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում նկատվող առաջընթացը: Մենք գտնում ենք, որ տնտեսության մեջ անընդհատ փորձարարությունը վստանգավոր է եւ որ պետք է ապահովել սկսած բարեփոխումների աստիճանական զարգացման քաղաքական հիմքը՝ իշխանության հաջորդայնությունը: Զի կարելի ամեն անգամ տնտեսության մեջ «քանդել պատը» եւ կրկին սկսել գորոյից: Անա այս սկզբունքային դիրքորոշմանը է մեր կուսակցությունը որոշել է պաշտպանել ԼՂՀ գործող նախագահի թեկնածությունը, եւ ես համոզված եմ, որ մեր վճռող հանահունչ է ընտրողների գերակշիր մեծամասնության տեսակետին»:

Ժողովրդավարական Արցախ միությունը հասարակական-քաղաքական կազմակերպության Կէս նախագահ Աշոտ Ղուլյանը ընդգծում է, որ ԺԱՄ-ը միշտ է ենել եւ մնում է ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի ամենալուրջ քաղաքական հենարանը: Կազմակերպությունը սատարել է նախագահ Ղուկասյանին ամենաբարդ իրավիճակուն, երբ դրվագ էր ԼՂՀ-ում ներքաղաքական կայունությունը, երկրում օդինական կարգը, ժողովրդավարությունը եւ օդինականությունը պաշտպանելու հարցը: Մենք պատվիր կատարեցինք առողջ ուժեղ համախմբելու, վատահության եւ համագործակցության մթնոլորտ ստեղծելու ճանապարհին հշխանությունների ուղեգիծը պաշտպանելու առաջնությունը. ԼՂՀ Ազգային ժողովում ծեւավորեցինք քաղաքական մեծամասնություն՝ պատասխանատվությունը կիսելով գործադիր իշխանության հետ՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքի բարեփոխման համար:

ԺԱՄ-ը առաջին քաղաքական ուժն էր, որ գործող նախագահին առաջարկեց իր թեկնածությունն առաջադրել օգոստոսի 11-ին կայանալիք ընտրություններում:

Մեր կազմակերպությունը կարեւոր նշանակություն է տալիս հանրապետության նախագահի ներքին քաղաքականությանը, որի արդյունքում բոլոր ազդեցիկ ուժերի միջև առկա է հանգործակցություն: Կտահարար կարելի է ասել, որ գործող նախագահի թեկնածությունը պաշտպանվում է ժողովրդի կողմից: Մեր թեկնածուն, այսպիսով, մարմնավորում է հասարակական ու քաղաքական համերաշխությունը, ԼՂՀ ժողովրդի միասնականությունը եւ միականությունը: Դա թույլ է տալիս չկամածել նախագահական ընտրությունների կայանալուն, նրա արդյունքներին եւ հուսալ, որ առաջիկա 5 տարիներին ԼՂՀ-ում պաշտ-

պանվելու է ներքին կայունությունը, ապահովվելու է տնտեսական կայուն աճ, լուծվելու են սոցիալական շատ հարցեր, ամենակարենորը՝ է ավելի է բարձրանալու մեր պետության վարկանիշը, նրա միջազգային հեղինակությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվելու դարարույան հիմնահարցի խաղաղ եւ վերջնական կարգավորման համար:

Ուզում եմ նախընտրական քարոզարշավի այս վերջին առիթն օգտագործել եւ դիմել բոլոր ընտրողներին. հայրենակիցներ, մասնակցեք նախագահական ընտրություններին եւ ծեր վստահության քվեն տվեք գործող նախագահ Արևադի Արշավիրի Դուկայանին: Համոզված եղեք, որ նրա նախընտրական ծրագրի հիմնադրույթները լիովին իրաւուսական են, եւ բոլորին նվիրված աշխատանքի արդյունքում դրանք անպայման կիրագործվեն: Մենք անցել ենք բազում փորձություններով, բայց աներեն մնացել՝ շնորհիվ բարձր գիտակցության եւ կազմակերպվածության: Այս որակմերը պահպանվել եւ կատարելագործվում են, արտահայտվելու են նախագահական ընրությունների արդյունքներում եւ մեզ տանելու են նոր ձեռքբերումների»:

9 օգոստոս, 2002թ.

.

ՀՐԱՏԱԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 36-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Դարգելի ընկերներ:

Նախ թույլ տվեք Լեռնային Ղարաբաղի կոմիւնիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի եւ հանրապետության բոլոր կոմունիստների անունից գերմորեն ողջունել Հայաստանի կոմունիստական կուսակցության 36-րդ համագումարի պատգամավորների ու մասնակիցներից: Մենք արտահայտում ենք մեր հավատն ու վստահությունն այն բանի առիվ, որ համագումարի ընդունած որոշումները կնպաստեն Հայաստանի փառապանծ կոմունիստական կուսակցության շարքերի հետագա ամրապնդմանը, նրա մարտունակության ու հեղինակության բարձրացմանը, որպես բազմաչափար հայ ժողովրդին կրկին սոցիալիզմի ուղին վերաբառնալու բարձրագույն երաշխիք:

Դարգելի ընկերներ: Լեռնային Ղարաբաղի կոմիւնիստական կուսակցությունը, որ ստեղծվել է մարքս-լենինյան ուսմունքի հիմքի վրա, արդեն կայացած ու քաղաքական կուռ միասնություն է իր բոլոր կառույցներով: Այն ընդդիմապիր-կառուցողական կուսակցություն է՝ բելադրված նորանկախ հանրապետության ներկային իրավիճակով, կուսակցություն, որի առաջնահերթ խնդիրն է՝ ամեն կերպ նպաստել պետության կայացման ու ամրապնդմանը, հասնելու մեր անկախության նիշագգային ճանաչմանը: Այս ամենով հանդերձ, մեր կուսակցությունը հավատարիմ է իր հիմնական ռազմավարությանը՝ երկրում ստեղծելու հսկական ժողովրդավարություն, պայքարելու անարդարությունների ու օրինախախտումների, կաշառակերության, չինովնիկական նկրտումների, ժողովրդական հարստությունը փոշիացնելու, շահամուլության եւ ընշարադյության եւ հակահասարակական այլ այլանդակ երեւույների դեմ: Այս բոլոր հարցերում իշխանության նկատմամբ մենք գտնվում ենք հակադիր բնիւներում: Անկախ ամեն բանից՝ բոլորին համար հայրենիքը մեկն է: Մենք ուզում ենք կյանքի կոչել մեր գաղափարներն ու իղձերը, վերադարձնել ժողովրդին հասարակության գաղաքացման այլընտրանք չունեցող սոցիալիզմի ուղղուն: Արցախի կոմունիստները հանրապետության ներկային իրավիճակում պատրաստ են համագործակցելու քաղաքական ու հասարակական կազմակերպությունների հետ, որոնց համար թանկ են Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը, նրա ապագան:

Հարգելի պատգամավորներ:

Օգտվելով առիթից՝ քոյլ տվեք միաժամանակ արտահայտելու Լեռնային Ղարաբաղի կոմունիստների տագնապներն ու նշանօդությունը մայր հայքնիքում տեղի ունեցող իրադարձությունների, Հայաստանի կոմունիստական կուսակցության միասնությունը խախտող փաստերի նկատմամբ: Բոլորիս քաջ հայտնի է, որ այսօր հայքնիքն ապրում է իր պատնության դժվարին ու ճակատագրական պահը: Դավաճանաբար փլուզելով խորհրդային կարգերը, Վերացնելով սոցիալիստական նվաճումները, սպառնալիքի տակ է դրվում երկրի ու ժողովրդի ապագան: Ապակայունացնելով երկրը, մուր ուժերը բացարձակապես ջուր են լցնում թշնամու ջրադաշին: Այսպիսի պայմաններում ավելի է բարձրանուն կոմունիստների պատմական պատասխանատվությունը: Այսօր, ինչպես երբեմ, Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը իր գերիշմունքն է համարում համոզել բոլոր առողջ ուժերին, որ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ազգային փրկության ու վերածննդի ժաղկման, բարգավաճնան միակ ուղին սոցիալիզմն է: Սակայն Հայաստանի Հանրապետությունում կան ուժեր, որոնք փորձ են անում սեպ խրել մեր ժողովրդի երկու հատվածների միջև: Դա ոչ միայն վնասակար է, այլև վտանգավոր ու ճակատագրական ազգի հանար: Թող այդ վայ քաղաքական գործիչները հասկանան ու վերանայեն իրենց ապագային գործողությունները, այլպես ժողովրդը չի ների նրանց:

Չափազանց նտահոգիք է Հայաստանում մի քանի կոմունիստական կուսակցությունների գործունեությունը, բայց մենք ճանաչում եւ ընդունում ենք միայն մի կուսակցություն՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, արժանահիշատակ քադայանական կուսակցությունը: Անհրաժեշտ է վերջ տալ այս պարագործին ու անցանկալի վիճակին: Հայաստանում պետք է լինի միայն ու միայն մի կոմունիստական կուսակցություն՝ ստեղծված նարս-լենինյան անմահ ուսմունքի հիմքի վրա:

Հարգելի ընկերմեր: Կցանկանայի ծեր ուշադրությունը հրավիրել մի տագնապահարույց հանգամանքի վրա եւս: Դա մեր հավերժական բարեկամ ու մեր գյուտեւնան երաշխիքներից մեկը հանդիսացող Ռուսաստան է: Չնայած դրան, Հայաստանում որոշ քադարական գործիչներ ուժնձգություններ են կատարում, փորձելով սեպ խրել հայ եւ ռուս ժողովրդների միջև, մոռանալով, որ մեր դարավոր ու գերված Սասիսի հայացքն անգամ նայում է դեպի հյուսիս, դեպի Ռուսաստանը: Մեր կուսակցությունը պետք է ունենա ինչպես տակտիկական, այնպես էլ ստ-

ուատեգիական ստույգ ծրագրեր: Ժամանակը մեզ հուշում է սերտ հարաբերություններ ստեղծել նախկին խորհրդային հանրապետությունների ժողովուրդների ու կոմունիստական կուսակցությունների հետ, վերականգնել ժողովուրդների համերաշխությունը ու եղբայրական միասնությունը: Այդ են պահանջում մեր ժողովրդի ստվար զանգվածների շահերը: Այս տեսակետից Հայաստանի անդամակցությունը Բելոռուս-Ռուսաստան դաշնությանը պետք է համարենք մեր ստրատեգիական խնդիրներից մեկը: Նախկին խորհրդային Միության ժողովուրդների միասնությունն ու եղբայրական համերաշխությունը թե ինչ է բերել նրանց, հայտնի է բոլորին:

Թանկագին ընկերներ: Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը, հաչվի առնելով անցյալի դասերը եւ աշխարհաքաղաքական ներկայիս վտանգավոր զարգացումները, առաջարկելով մեր քաղաքական անկախության ու տնտեսական զարգացման լիարժեք ծրագրեր, իր համերաշխությունն ու հաստատակամությունն է հայտնում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, հավատիացնում, որ մեր կուսակցությունը շարունակելու է իր հետեւողական ու սկզբունքային պայքարը Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման, հայ ժողովրդի ծոցում նրա սոցիալիստական վերածննդի, երկրություն իսկական ժողովրդավարության հաստատման համար:

«Հայաստանի կոմունիստ»
22 նոյեմբեր, 2004թ.

ՀՐԱՏԱՑ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԴՎՎԱՉՈՒՄ

Սիրելի հայրենակիցներ

Ներկայացնելով Ձեզ Լեռնային Պարարաղի կոմունիստական կուսակցության նախընտրական ժրագրի ազգային քաղաքականության եւ մարդու իրավունքների ոլորտին առնչվող մի շարք հիմնախնդիրներ, ես նախ եւ առաջ կցանկանայի անդրադառնալ այն անառողջ բարոյահոգեբանական վիճակին, որ տիրում է Արցախում:

Եթե հիշում եք՝ ոչ հեռավոր անցյալում, երբ Ստեփանակերտը օմբակովում էր ազերիների կողմից, երբ մենք ապրում էինք տնտեսական ավելի ծանր պայմաններում, մարդիկ դիմակայում էին անելանելի պայմաններին, չին ընկճում, իսկ այսօր, երբ կյանքը սկսում է բարելավվել, նրանք չեն կարողանում գոյատեւել: Ին խորին համոզմանք, դրա հիմնական պատճառները ոչ միայն պատերազմի հետևանքները եւ անցումային շրջանի հետ կապված դժվարություններն են, այլեւ ազգային գաղափարախոսության, այլ կերպ սասած, ազգային նպատակների քարոզության բացակայությունը: Ազգային գաղափարը, որը միաբանում եւ շարունակում է միաբանել մեր ժողովրդին, այսօր կարծես թե սկսում է այլասերվել լիբերալ-ռումանանությամբ պայմաններում: Այս պայմաններում, մեր կարծիքով, անհրաժեշտ է մշակել միգրացիայի նոր քաղաքանություն՝ նպատակառողված մեկ սուրբ գաղափարի՝ դարարադին պետք է ապրի Ղարաբաղում, դարարացում պետք է վերադարձնել Ղարաբաղ: Իրենց ելույթներում մեր հանրապետության դեկավարության պատահական ներկայացուցիչներ արդարացիորեն նշում էին, որ Լեռնային Պարարաղը սոցիալ-տնտեսական առումով պետք է երկու-երեք անգամ լավ վիճակում գտնվի, քան Հայաստանը, զարգանա առաջանցիկ քայլերով:

Սակայն իրականում տեղի է ու մենում ծիշտ հակառակը: Մենք այն կարծիքն ենք, որ նման պայմաններում անհրաժեշտ է ամրապնդել ու բարձրացնել Ղարաբաղի յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական կարգավիճակը, հատուկ արտօնություններ սահմանել արցախում, որպես պատերազմի մասնակից: Այդ խնդիրները լուծելի է սփյութահայության, ամբողջ հայ ժողովրդի ջանքերի շնորհիվ:

Այս կապակցությանը մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է մշակել ամբողջական մի ծրագիր, որում պետք է արտացոլված լինի նախ եւ ա-

ռաջ միայնակ ծերերի, թոշակառուների, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամների, ինչպես նաև պատերազմի ակտիվ մասնակիցների, գոկված ազատամարտիկների ընտանիքների, գործազուրկների, բռնադատվածների եւ փախստականների սոցիալական ապահովվածության մեջ պահանջը: Հայրենակիցներ, մեզ տերեր, դիմազուրկ եւ քարոյագուրկ կամակատարներ պետք չեն: Զգուշացեք, նախընտրական քարոզության օրերին երեւան են եկել կուսակցություններ, որոնք, չունենալով ժաղովրդի հանդեպ ոչ մի ծառայություն, խոսում են նրա անունից, ի հայտ են եկել նորարարության վրկիչներ, փիլիսոփաներ, բարերարներ: Չխաբվեք բոպեական հաճույքով ու քաղցր բառերով, թե չէ՝ նորից կիայտնիքը կոտրված տաշտակի առաջ: Մեզ պետք չեն ստոր ու քննող պաշտոնամումներ, պոպւլիստներ, մեզ պետք են ժողովրդի ազգային շահերին նվիրված, հարուստ գիտելիքներով ու փորձով, ուրիշի կարծիքը լսելու բացարձի ունակությամբ օժտված բարձր պաշտոնյաներ: Կոմունիստական կուսակցությունը ի վիճակի է բոլոր կարող եւ ունակ ուժերին հավաքել իր շուրջը եւ Ղարաբաղը դուրս բերել այս անելանելի թվացող իրավիճակից: Կոմկուսը միշտ է կարողացել է խնդիրներ դնել իր եւ ժողովրդի առաջ, գտնել դրանց լուծման ծիշտ ուղիները: Որա վկան է անցյալը: Դա դուք լավ գիտեք, չեմ ուզում մանրամասնել:

Հայրենակիցներ, երբ մարդիկ հայտնվում են մթության մեջ, նրանք չպետք է հայիցն իսպարը, դրա փոխարեն թող ծեզանից յուրաքանչյուրը վաշի մեկ մոմ, եւ աշխարհը կլուսավորվի, կյանքը կբարելավվի, իսպարը կանհետանա:

Կոչ եմ անում Ձեզ հուչիսի 19-ին Ձեր քվեն տալ Լեռնային Պարաղի կոմունիստական կուսակցության եւ նրա կողմից առաջադրված թեկնածուների օգտին, բայց ոչ, իհարկե, նրանց, որոնցից շատերն այսօր, առաջնորդվելով հանրահայտ «որտեղ հաց՝ այնտեղ կաց» վարքով, սեփական շահի համար կուսակցությունից կուսակցություն են թոշում: Համոզված եմ: Դուք կշահեք: Ղարաբաղյան շարժումն սկսել են կոմունիստները եւ այն տրամաբանական ավարտին կիասցնեն կոմունիստները:

Ընորհակալություն, ամենայն բարիք:

2007թ.

ԼՂԴ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Դ.Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սիրելի հայրենակիցներ:

2007թ. հուլիսի 19-ը՝ ԼՂԴ նախագահի ընտրությունների օրը, վճռորշ է լինելու մեր ժողովրդի ճակատագրի համար: Մենք պետք է արժեվորենք վերջին տարիների մեր անցած ճանապարհը, ընդհանրացնենք ծեռքբերումներն ու քաջորդումները եւ սահմաննենք մեր նորանկախ հանրապետության հետագա ընթացքի ուղիներն ու նպատակները:

Իմ քաղաքական սկզբունքներն են՝ սոցիալական արդարության եւ հավասարության վրա խարսխված իրական ժողովրդավարություն, նարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն, իրավունքի գերակայություն եւ օրենքի իշխանություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչում:

Իմ ծրագրի հիմքում Արցախում բնակվող մարդն է, նրա արժանապատիկ կյանքով ապրելու իրավունքը: Քաշվի առնելով մեր հասարակությունում գերիշխող կարծիքները, տրամադրություններն ու տեսակետները, հանրապետության օրենսդրական, քաղաքական ու տնտեսական գործունեությունը նպատակառությունը է այն խնդիրների լուծմանը, որոնք այսօր հուզում եւ նշտահոգում են քաղաքում դժվարություններ ու հոգսեր ունեցող մեր ժողովրդին: Առաջիկա 5 տարիների ընթացքում բոլորին գերիսնդիրն է լինելու ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը եւ այնպիսի պայմանների ստեղծումը, որ մարդն օրենքով պաշտպանված լինի, ունենա երաշխափորված աշխատատեղ, իսկ ստացած աշխատավորը, կենսարոշակը բավարարեն նրա սոցիալական իիմնական պահանջները եւ հնարավորություն տան բարեկեցիկ կյանքով ապրելու:

Արժանանալով Ձեր կստահությանը եւ ԼՂԴ նախագահ ընտրվելու դեպքում, ես հավատարիմ եմ մնալու այս սկզբունքներին՝ իմ ամենօրյա գործունեության եւ ողջ քաղաքական կենսագրության ընթացքում:

Իմ կարգախոսներն են.

- Ժողովրդի հետ, ժողովրդի համար:
- Օրենք եւ արդարություն:
- Աշխատատեղեր եւ արժանապատիկ կյանք:
- Զարգացող գյուղ:
- Պրակյալ կորություն:
- Մատչելի առողջապահություն եւ արժանապատիկ կենսարոշակներ:

Այս գերխմնիրների իրականացմանն է ուղղված իմ նախընտրական ծրագիրը, ուր ներկայացվում են Լեռային Ղարաբաղը տնտեսապես զարգացած երկիր, անկախ, ինքնիշխան, կազմակերպված եւ միջազգային համրության կողմից ճանաչված պետություն դարձնելու իմ հիմնական մոտեցումները:

Քաղաքական ոլորտում

-Կազմակորել ժողովրդի վստահությունը վայելող կառավարություն, որը պետք է իր կազմի մեջ ընդգրկի բացարձակապես իրազեկ, բարձր որակավորում ունեցող մասնագետների, ովքեր կառավարական ծրագրի շրջանակներում ի գորու կլինեն իրականացնել միջոցառումների համայիր՝ ուղղված սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարմանը, դեռևս պահպանված արդյունաբերական եւ գյուղատնտեսական կարողությունների արագ գործարկմանը, ժողովրդի բարեկեցության անշեղ բարձրացմանը:

Դանդես գալ գործող Սահմանադրության մեջ արմատական փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ, ինչն ուղղված կլինի օրենսդիր (Ազգային ժողով) եւ գործադիր (Կառավարություն) իշխանությունների լիազորությունների ու գործառությունների էլ ավելի ընդլայնմանը եւ պատասխանատվության բարձրացմանը, քաղաքացիական ազատությունների եւ մարդու իրավունքների հանրակարգի անրաամբնանն ու զարգացմանը, քազմակուսակցական ժողովրդավարության ապահովմանը: Ժողովրդին օժտել իրենց չարդարացրած պատգամավորներին եւ պետական չինովնիկներին եւ կանչելու իրավունքով:

Նախատեսվող սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերականգնել ժողովրդի բացարձակ մեծամասնության շահերն արտահայտող եւ բազմակուսակցակամության պայմաններում նոր բռնադիակությամբ օժտված աշխատավորների իշխանությունը՝ խորհրդների տեսքով, որպես ճշնարիտ ժողովրդավարության պետական համակարգ:

Իշխանության ճյուղերի հստակ տարանջատում՝ պահպանելով դրանց միջև համագործակցության մեխանիզմները՝ բացասելով ճյուղերից որեւէ մեկի կողմից մենաշնորհի հաստատումը:

ԼՂԴ-ում մարդու իրավունքները, անհատի ազատությունը բարձրագույն արժեք են: Բազմակուսակցական ժողովրդավարության պայմաններում պետությունը երաշխափորում է ԼՂԴ քաղաքացու անվտանգությունը, արժանապատվությունն ու ազատությունները, նպաստում անհատի կարողությունների եւ ընդունակությունների լիակատար դրսեւոր-

մանը, աջակցում անկախ մամուլի եւ քաղաքացիական հասարակության կայացմանը, ներքին քաղաքական խաղաղության եւ համերաշխության պահպանմանը, քաղաքական գործընկերության սկզբունքների ձեւավորմանը:

Հետեւողականորեն համրես գալ երկրում օրենքի գերակայության, օրենքի առջև բոլորի իրավականավարություն հաստատելու, անպատճելիության եւ ամենաթողության մթնոլորտի վերացման, քաղաքացիների համար պետական կառավարման համակարգի թափանցիկության պահուման օգտին: Մշակել կաշառակերության ու կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ ծրագիր, հետեւողականորեն պայքարել վերացնելու արատավոր այդ երեւությունների սոցիալական եւ տնտեսական հիմքերը:

Տնտեսական ոլորտում

Արմատապես փոխել երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղվածությունը՝ պահովելով սեփականության բոլոր ծեւերի ներդաշնակ գոյակցությունը՝ պետական սեփականության գերակայության պայմաններում: Կարծ ժամկետում անցկացնել ԼՂՀ պետական սեփականության, ինչպես նաև սեփականաշնորհված ծեռնարկությունների եւ օբյեկտների գույքագրում, միաժամանակ ստուգել սեփականաշնորհված բոլոր գործարքների համապատասխանությունը՝ գործող օրենսդրությանը եւ հիմնական միջոցների իրական արժեքներին:

Մշակել ծրագիր հանրապետության համար ռազմակարական նշանակություն ունեցող խոշոր արդյունաբերական ծեռնարկությունների ու միավորումների ազգայնացման մասին, այդ ծեռնարկությունների ու միավորումների արագ գործարկման, արդյունավետության պահովման կարեւոր երաշխիք համարելով դրանց վերածունը համատեղ ծեռնարկությունների, առաջին հերթին՝ ՀՀ, Ուլսաստանի եւ ԱՊՀ բարեկամ երկրների հետ, դրանցից ստացվող շահույթները ուղղել սոցիալական արդարության վերականգնման խնդիրներին:

Տախածեռնել հարկային քաղաքականության արմատական վերափոխում, նվազեցնելով հարկերը արդյունաբերության եւ գյուղատնտեսության առաջատար ճյուղերում, միաժամանակ բարձրացնելով հարկերը բանկային, միջնորդային ծառայությունների եւ այլ ոլորտներում, որտեղ շահույթի նորման գալիքորեն բարձր է տնտեսության միջին ցուցանիշից: Քրեական խիստ պատիժներ սահմանել հարկերից խուսափողների, ստվերային տնտեսությանը գրաղվողների նկատմամբ:

Օրենսդրության ամրագրել, որ հողը համարվում է համաժողովրդական սեփականություն, վարձակալական կամ ժառանգական իրավունքով անժամկետ տրվում է անհատական եւ կոռպերատիվ գյուղացիական տնտեսություններին՝ քացառապես գյուղատնտեսական մեթոքներ արտադրելու համար: Օրենքով արգելել հողի առք ու վաճառքը, անրագրել սեփականության բոլոր ծեւերի գուգատեն գյուղությունը, տնտեսավարման այս կամ այն ծեւերի ընտրությունը վերապահել գյուղացուն, պատասխանատվություն սահմանել տնտեսավարման ծեւերի ընտրության հարցում կամավորության սկզբունքը խախտելու համար:

Նախածեռնել հարկային օրենսդրության փոփոխություններ, որոնք կնախատեսեն առաջիկա երկու տարում գյուղացուն ազատել հարկերից, նրան տրամադրել արտօնյալ երկարաժամկետ վարկեր՝ գյուղատնտեսական տեխնիկա, սերմացու, տնկանյութեր, պարարտամյութեր եւ բունագիտիկատներ ծեռք բերելու համար: Սահմանամերձ եւ ազատագրված տարածքների, ինչպես նաև վերաբնակեցված գյուղերի աշխատավորներին եւ տնտեսություններին երեք տարով ազատել բոլոր տեսակի հարկերից եւ վճարներից: Գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով հաճապետությունը ստեղծել մեքենա-տրակտորային պետական կայաններ եւ սպառողական կոռպերատիվ ընկերություններ՝ ուղղված վար ու ցանքի եւ բերքահավաքի ժամանակին եւ որակյալ, գյուղմերների արագ եւ անկորուստ հավաքմանն ու իրացմանը:

Գյուղացիական տնտեսությունների պաշտպանվածությունը պապակելու համար՝ վերացնել պետական կառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց անհարկի եւ կամային միջամտությունները նրանց գործերին, հացի, հացամբերքների արտադրությունը եւ վաճառքը ողնել պետական վերահսկողության տակ, չքացանչով նաև մասնավոր հացարտադրությունը եւ վաճառքը: Գյուղական շրջաններում ուղղման ջուրը գյուղացուն տրամադրել անվճար: Վերականգնել հակարկանային ծառայություններից:

Օրենքով պետական մեմաշնորհ մտցնել ռազմակարական նշանակության հումքի եւ նյութերի, թեթեւ եւ սննդի արդյունաբերության բարձր եկամտաբեր ճյուղերում / ալկոհոլային խնիքներ, ծխախոտ եւ այլն/:

Աջակցել փոքր եւ միջին ծեռնարկությունների գարգացման ծրագրերի իրականացմանը, այդ նպատակով ստեղծել պետական ֆինանսավորման հատուկ հիմնադրամ: Պետական աջակցությունը ցուցաբերել տեղական հումքով աշխատող եւ արտահանման հնարավորություններ ունեցող ծեռնարկություններին:

Սոցիալական քաղաքականության ոլորտում

Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում վերահստել սոցիալական արդարության եւ հավասարության սկզբունքները, քաղաքացիների երաշխավորված աշխատանքի եւ հանգստի իրավունքը, բնակչության գրադաժության ապահովման երաշխիքները: Աշխատատեղերի ընդլայնման միջոցով հնարավորինս կրթատել գործազրկությունը, կասեցնել արտագաղթը:

Օրենսդրական փոփոխությունների միջոցով, կանոնավոր ինժերսավորման հիմնան վրա, բարձրացնել աշխատավարձերի, կենսաթշչակների, օպաստների չափեր՝ միջին սպառողական զամբյուղի արժեքին համապատասխան: Ապահովել պետական հովանափորություն առողջապահության, մշակույթի, կրթության եւ սոցիալական այլ համակարգերի նկատմամբ: Ստեղծել բնակչության անվճար բուժսպասարկման պետական ցանց, երիտասարդության համար ապահովել անվճար միջնակարգ եւ բարձրագույն նախագիտական կրթություն, աջակցել երիտասարդ տաղանդների բացահայտմանը: Երիտասարդությունն իր ապագան պետք է տեսնի Արցախում եւ Վստահ լինի, որ իր մասնագիտական գիտելիքներն ու կարողություններն ի սպաս կլրցվեն ներ երկրի առաջընթացին: Խթանել սպորտի եւ զրուսաշրջության գարգացմանը: Բարենպաստ պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնությունների մշակույթի գարգացման համար:

ԼՂՀ պետական քութեի հաստատման շրջանակներում նախատեսել կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, սպորտի բնագավառների աշխատողների, պետական ծառայողների, գինծառայողների աշխատավարձերի, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների ամենամյա բարձրացում: Վերացնել կենսաթոշակների նշանակման խտրական քաղաքականությունը, վերականգնել Շայրենական Մեծ պատերազմի, աշխատանքի վետերանների, Արցախյան գոյամարտի ազատամարտիկների, կենսաթոշակառուների եւ հաշմանդանների, նոր եւ մանկան, բազմազավակ ընտանիքների արտոնություններն ու պետական հովանավորությունը:

Իրագործել բնակչության վերարտադրության եւ ծննդիրյան մակարդակի բարձրացումը խրախուսող ծրագրեր՝ այն դիտելով որպես պետության գոյատեւման եւ հզորության աճրապնդման գլխավոր երաշխիք: Պետական աջակցություն ցուցաբերել բազմազավակ ընտանիքներին, բարելավել նրանց կենսապայմանները: Բնակարան ձեռք բերելու

համար երիտասարդ ընտանիքներին տրամադրել երկարաժամկետ հիպոթեքային վարկեր եւ այն լրիվությամբ մարված համարել, եթե ընտանիքում ծնվել եւ դպրոցահասակ են դարձել հինգ եւ ավելի երեխաներ:

Նպաստել սննդանթերքների եւ առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղորայքի, էլեկտրաներգիայի, օազի, ջոկ, կապի ու տրանսպորտի միջոցներից օգտվելու ու կոնունալ այլ ծառայությունների գների կորուկ իշեցմանը եւ պետական կարգավորմանը: «Արցախյանայրանկույթ» գտնվող բնակչության խնայողությունները ենթակա են ինդեքսավորման եւ վերադարձման, իսկ կորցրած ավանդները՝ փոխհատուցման:

Նախաձեռնել բնակարային շինարարության համապետական ծրագրի մշակում, վերականգնել բնակարանների անվճար բաշխման կարգը, վերջ տալ բնակարանային սպեկուլացիային:

Ազգային անվտանգության, պաշտպանության եւ արտաքին քաղաքականության պետություն

Արտաքին քաղաքականության հիմքում դրված է լինելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի անկախության միջազգային ճանաչումը, հեռանկարում՝ մայր Հայաստանին վերամիավորելու նպատակով:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը պետք լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, միայն քաղաքական բանակցությունների միջոցով, որոնց հիմքում պիտի դրվի ազգերի ազատ ինքնորշման իրավունքի սկզբունքը: Պետք է հասնել նրան, որ Աղրեթանը ետ կանգնի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորշման իրավունքը Հայաստանի կողմից հողային պահնջատիրությամբ նենակալիս հայեցակարգից եւ գործելակերպից: Անհրաժեշտ է վերականգնել Լեռնային Ղարաբաղի պատերազմի որպես հակամարտության եւ բանակցային կողմի կարգավիճակը: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ճամփի որեւէ համաձայնագիր չի կարող ընդունվել՝ առանց բանակցություններում դարաբաղյան կողմի մասնակցության: Ղարաբաղյան հիմնահարցի վերջնական եւ արդարացի լուծման ուղիներից մեկը համարել Ամեկան պետությունների նոր ստեղծվող միության կազմում ԼՂՀ-ի ընդգրկումը, որպես ինքնուրույն եւ իրավահավասար անդամ-պետություն:

Նպաստել ԼՂՀ ինքնապաշտպանական համակարգի հզորությանը, բնակչության անվտանգության պահովմանը, տարածաշրջանում կա-

յունության եւ տեսական խաղաղության ամրապնդանը, որի գլխավոր երաշխիք պաշտպանության բանակն է: Մենք բոլոր ջանքերը գործադրելու ենք բանակի հզրությունը ամրապնդելու, ժողովրդի մեջ բանակի նկատմամբ առանձնահատուկ հոգածության եւ հպարտության զգացում դաստիարակելու համար:

Տարեցտարի ավելացնել բանակում պրոֆեսիոնալ հիմունքներով զինծառայողների թվաքանակը՝ վերջնական նպատակ ունենալով լրիվ պրոֆեսիոնալ բանակի կազմավորումը:

Հանրապետության բուհերում վերաբացել ռազմական ամրիոնները, որը հնարավորություն կրնածելի ուսանողներին ստանալ հանապատասխան գիտելիքներ, անհրաժեշտության դեպքում հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու համար:

Ուշադրության կենտրոնում պահել երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության եւ նախնական ռազմական պատրաստության դասավանդման արդյունավետությունը հանրակրական դպրոցներում:

Հետեւողականորեն հանդես գալ Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմաքաղաքական դաշինքի ամրապնդման եւ հետագա զարգացման, սոցիալ-տնտեսական համագործակցության եւ նշակութային կապերի լիարժեք վերականգնման ու ծավալման օգտին:

Օրենսդրական վերափոխումներով նպաստել Սփյուռքի ակտիվ ներգրավմանը ԼՂՀ տնտեսության վերականգնման ու զարգացման փոխահավետ գործընթացներին: Ծարութակել աշխատանքը հայոց Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման ուղղությամբ:

Մշակել եւ իրականացնել ԼՂՀ եւ ՀՀ հետագա տնտեսական, կրթանշակութային ինտեգրացմանը նպաստող ծրագրեր:

Սիրելի հայրենակիցներ, հարգելի ընտրողներ: Դուք մեծապես օգնած կլինեք ինձ առավել հստակեցնելու իմ ապագա գործունեության ծրագրը՝ ծեզ հուգող հարցերի, ցանկությունների, առաջարկությունների եւ դիտողությունների, նկատառումների մասին իրազեկելով մեր հանդիպումների ժամանակ:

2007թ.

ՀՐԱՍ ՄԵԼԵԿԻՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԼՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ:

2007թ. հունիսի 19-ը՝ ԼՂՀ նախագահի ընտրությունների օրը, Վճռորոշ է լինելու մեր ժողովրդի ճակատագրի համար: Մենք պետք է արժեվորենք վերջին տարիների մեր անցած ճանապարհը, ընդհանրացնենք ծնոթերումները ու բացընդուները եւ սահմաններ մեր նորամկախ հանրապետության հետագա ընթացքի ուղիներն ու նպատակները:

Իմ քաղաքական սկզբունքներն են՝ սոցիալական արդարության եւ հավասարության վրա խարսխված իրական ժողովրդավարություն, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն, իրավունքի գերակայություն եւ օրենքի իշխանություն, Լեռնային Պարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչում:

Իմ գործունեության հիմքում Արցախում բնակվող մարդն է, նրա արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքը: Չաշվի առնելով մեր հասարակության կարծիքները, տրամադրություններն ու տեսակետները, հանուապետության օրենսդրական, քաղաքական եւ տնտեսական գործունեությունը նպատակառողիվելու է այն խնդիրների լուծմանը, որոնք այսօր հուզում եւ անհանգստացնում են բազում դժվարություններ ու հոգսեր ունեցող մեր ժողովրդին: Առաջիկա 5 տարիների ընթացքում բոլորին գերիխնդիրն է լինելու ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը եւ այնպիսի պայմանների ստեղծումը, որ մարդն օրենքով պաշտպանված լինի, ունեմա երաշխավորված աշխատատեղ, իսկ ստացած աշխատավարձը, կենսաթոշակը բավարարի նրա սոցիալական հիմնական պահանջները եւ հնարավորություն տա բարեկեցիկ կյանքով ապրելու:

Ի դեպ թոշակների վերաբերյալ երեք շտրիխ:

ա) Սեկ անգամ եւս նշենք, որ աշխատամք չումենալը, ցածր աշխատավարձն ու ամնշամ թոշակը ժողովրդի մի ստվար նասի հուսալքության են մղում...

բ) Ստացվել է մի իրավիճակ, երբ խորհրդային ժամանակներին կուսակցական եւ խորհրդային մարմինների աշխատողների, նույնիսկ առաջին դեմքերի թոշակի չափը բազմակի անգամ ցածր է, քան նրանց ենթակայության տակ աշխատանքներինը: Անարդար է ու ամբարձությունից ոչ մի պատճառարանություն լինել չի կարող:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԸԸ

Հազվագյուտ են այն մարդիկ, ովքեր իրենց անբողջ գիտակցական կյանքում երբեք չեն շեղվում նախընտրած ճանապարհից, հավատարիմ են մնում իրենց սկզբունքներին ու դավանանքին, ինչքան էլ փոխվեն հանգանաճներն ու ժամանակները, ինչ փորձության էլ ենթարկի կյանքը նրանց:

Անհատներ են ննան մարդիկ, անհատականություններ՝ իրենց դեմք ու դիմագծով, դավանած սկզբունքների ու գաղափարների անմանցորդ նվիրվածությամբ եւ հետամուտ կյանքում դրանց իրագործման հետեւողականությամբ:

Այդպիսիներից է Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յրանտ Արտեմի Մելքոնյանը:

Յրանտ Մելքոնյանը ծնվել է 1951թ. ապրիլի 4-ին՝ Ստեփանակերտ քաղաքում: Սովորել է քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում, ապա փոխադրվել գիշերօթիկ դպրոցի մաքենատիկական թեքումով դասարանը:

1974թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետը: Ինժեներ-մեխանիկ է: Ինստիտուտն ավարտելուց հետո Երևանի գեղարվեստական ժամացույցների գործարանում աշխատել է որպես կոմստրուկտոր: 1975թ. տեղափոխվել է Ստեփանակերտ եւ աշխատել Էլեկտրատեխնիկական գործարանում, ապա՝ կոմերիտմիության Լեռնային Ղարաբաղի մարզկոմում:

1977թ. ընտրվել է զյուտարարների եւ նորարարների ԼՂ մարզային խորհրդի նախագահ: 1980թ. ապրիլից անցել է կուսակցական աշխատանքի, սկզբում որպես ԼՂ կուսարգելով արդյունաբերական բաժնի հրահանգիչ, այնուհետեւ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի ներկրող, ապա՝ առաջին քարտուղար:

1986թ. ավարտել է ԽՍՀԿ Կենտկոմի բարձրագույն կուսակցական դպրոցը՝ ստանալով քաղաքագետի մասնագիտություն: Լեռնային Ղարաբաղի հիմնախմնդրի առաջադրման առաջին խորհրդի ներկայացման շարժման եւ ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից մեկը:

1989թ. ընտրվել է ԼՂՀ Ազգային խորհրդի անդամ: Վարել է Արցախ-ՕԾիքս միավորնան գլխավոր ինժեների, Շուշիի ռադիոգործարանի

տնօրենի, ԱրՊԴ-ի տեխնիկական գիտությունների ամբիոնի դասախոսի պաշտոնները: 1996թ. հոկտեմբերից աշխատել է ԼՂՀ շինարարության նախարարությունում: 1998թ. նոյեմբերից՝ ԼՂՀ կառավարության աշխատակազմի տարրեր բաժիններում: 2002թ. դեկտեմբերից ԼՂՀ կառավարության աշխատակազմի վերահսկողության ծառայության ղեկավարն էր: 2008թ. հունվարից՝ ԼՂՀ վարչապետի խորհրդական է:

2001 թվականին Յրանտ Արտեմի Մելքոնյանն ընտրվեց Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար եւ միմչեւ հիմնա շարունակութ է վարել իր վերածած կուսակցության գործունեությունն անմնացորդ նվիրվածությամբ: Այդ գործունեությունն ամփոփված է ընթերցողին ներկայացվող սույն գրքում, որում ընդգրկված են ԼՂ կոմկուսի համագումարներում, պկենումներում ունեցած նրա գեկուցումները, ելույթները, պարբերական մամուլում հրապարակված հարցազրույցներն ու հոդվածները, որ ամրոցական պատկերացում են տալիս ոչ միայն Յ. Մելքոնյանի, այլև ընդհանրապես ԼՂ կոմկուսի գործունեության նամին:

**Արմեն ՀՈՎԿԱՍՆԻՍՅԱՆ
«Արացիի կոմունիստ» թերթի խմբագիր**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեսական եւ գործնական նշանակության գիրք 3

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Ընթացիկ ժամանակաշրջանը եւ ԼՂ Կոմկուսի խնդիրները 5

Լեռնային Պարաբաղի համրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը եւ

ԼՂ Կոմկուսի հերթական խնդիրները 12

ԼՂԿԿ կենտրոնական Կոմիտեի հաշվետվությունը

Կուսակցության 4-րդ համագումարին եւ

Կոմկուսի հերթական խնդիրները 19

ԼՂ կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար

Հրանտ Մելքոնյանի գեկուցումը 31

ԼՂԿԿ կենտրոնական Կոմիտեի հաշվետվությունը

Կուսակցության 5-րդ համագումարին եւ

Կուսակցության հերթական խնդիրները 37

ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑՑՆԵՐ

Պատասխանատվություն երկրի ու ժողովրդի հանդեպ 49

Կոմունիստները դժգոհ են սոցիալ-տնտեսական իրավիճակից 55

Որպես հակամարտող կողմ Պարաբաղը պետք է

մասնակիցի բանակցություններին 58

«Որդեգրելով կառուցողական կեցվածքը չի վտանգվի

ներքաղաքական կայունությունը»

գտնում է կոմունիստների առաջնորդը 61

Լեռնային Պարաբաղը կարող է հայտնիել

Եվրամիության հովանու ներքո 64

«Գտնում եմ, որ պետությունը նրա համար չէ,

որ մեր կյանքը դրախտա դարձնի, այլ նրա համար,

որ այն դժոխիք չուածնա» 66

«Ես իմ կայում ընտրազանգվածն ունեմ» 69

«Ծիստ երազում կորեկ կտեսնի» 71

Հրանտ Մելքոնյան. «Սոցիալիզմը այլընտրանք չունի» 75

Իրավիճակը Հարավային Կովկասում,

ԼՂՀ ճանաչման հեռանկարները 78

Սորախի կոմունիստների դեկավարը դատապարտում է 83

Հարցը պետք է համաշափությամբ ուսումնասիրվի 85

Միայն ԼՂՀ միջազգային ճանաչումից հետո 88

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Հրանտ Մելքոնյանի ելույթը 1999թ. սեպտեմբերի 26-ին Նալչիկում

տեղի ունեցած կոմկուսների ժողովուրդների մերկայացուցչների առաջին համագումարում 89

Ինչո՞ւ ենք պաշտպանում Արկադի Ղուկասյանի թեկնածությունը 92

Հրանտ Մելքոնյանի ելույթը Հայաստանի կոմունիստական

կուսակցության 36-րդ համագումարում 97

ԼՂՀ նախագահի թեկնածու Յ.Ս.Մելքոնյանի

նախընտրական ծրագիրը 102

Հրանտ Մելքոնյանի ելույթը ԼՂ համրային հեռուստատեսությամբ 109

Կուսակցության նվիրյալը 112

Նրանդի Արդեմի Մելքոնյան

ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ
ԾԱՂԿՄԱՆ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ

| | |
|---------------|------------------|
| Խմբագիր՝ | Եղիշե ՍԱՐԳՍՅԱՆ |
| Գեղ. Խմբագիր՝ | Մնացական ԱԶԻԶՅԱՆ |
| Տեխ. Խմբագիր՝ | Ժամնա ԱՎԱՆԵՍՅԱՆ |
| Մրբագրիչ՝ | Եղիշե ՍԱՐԳՍՅԱՆ |

Դամճնված է շարվածքի 10.10.2009 թ.: Ստորագրված է տպագրության 24.11.2009 թ.:
Տառատեսակ «Dallak Helv»; Թուղթ օֆսեթ: Տպագրական 7.75 մամուլ:
Տպագրությունը օֆսեթ: Տպաքանակ 250:



«ՍՊՆԱԱ» գրահրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16
951555